

**ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ,
ՆՈՒՇ-Ի, ԴՊՐՈՑԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ**

2025

Կազմողներ՝

Գայանե Մկրտչյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի պետ, մ. գ. թ.

Ռուզան Կոստանյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի ՀՊԶ մասնագետ

Ալինա Մանուկյան - ՀՊՄՀ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, ՀՄԿ բովանդակային մշակումների բաժնի մասնագետ, հ.գ.թ.

Լիանա Զոհրաբյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի ՀՊԶ մասնագետ

Մարիամ Սարգսյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի ԱԾ մասնագետ

Աննա Ամիրջանյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի ՆԴԶ մասնագետ

Անահիտ Վիրաբյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի ՆԴԶ մասնագետ

Ձևավորող և մակետավորող՝

Մարիամ Պետրոսյան - ԿԶՆԱԿ հիմնադրամի ՀՊԶ և ՈԻԾ բաժնի մասնագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտքի խոսք.....	4
Ծնողավարումը ՆՈՒՀ-երում	
Ընդհանուր դրույթներ	5
Ընտանիք-ՆՈՒՀ համագործակցություն	8
ՆՈՒՀ-ընտանիք համագործակցության ձևեր	16
Երեխաների մասին	23
ՆՈՒՀ-ից դպրոց	24
Ծնող- դպրոց կապը	
Դպրոց-ծնող գործընկերության հիմնաքարերը.....	27
Տուն դպրոց կապի կարևորությունը	30
Ծնողական համայնքի ձևավորում	34
Ծնողավարությունը ժողովրդավար հասարակությունում	
Ժողովրդավարական ծնողավարություն	40
Ծնողավարությունը թվային հասարակությունում	
Թվային ծնող և թվային դաստիարակություն	55
Ծնողի աջակցության կարևորությունը տանը	
Սովորելու հետ կապված դժվարություններ և ՀՀ կրթական համակարգում առկա լուծումներ	60
Ծնողական համալսարան	
Ուսուցիչ-ծնող.....	72
Ծնողական սեր	75
Ծնողական սիրո տեսականները	78
Երեխայի վարքի կարգավորման գործընթացը	81
Դեռահասի տարիքային առանձնահատկությունները	88
Մի քանի խորհուրդ ծնողներին՝ երեխայի համար ապահովության ցանց ստեղծելու ուղիների մասին	91
Օգտագործված գրականություն	95

Բոլորին շատ պարզ է այսօր, որ նախադպրոցական ուսումնական հաստատության և հանրակրթական դպրոցի արդյունավետ աշխատանքի գործում մեծ է հաստատություն-ծնող կապի ապահովումը: Ոչ մի ուսումնական հաստատություն չի կարող արդյունավետ աշխատել, եթե ծնողներն ու ուսուցիչները, դաստիարակները ներդաշնակ համագործակցությամբ չաշխատեն՝ հիմքում ունենալով երեխայի կարիքը:

Ուսումնական հաստատություններն արդեն հստակ պատկերացնում են, որ ծնողները լիովին իրավունք ունեն իրազեկված լինելու, թե ինչ է կատարվում իրենց երեխաների հետ նախադպրոցական ուսումնական հաստատությունում և դպրոցում: Ուսուցիչները պարտավոր են կիսվել այդ տեղեկատվությամբ՝ առանց կանխակալ դատողությունների... Նման շփումը, որը բխում է երեխայի շահերից, հնարավոր չէ առանց ծնողի և ուսուցչի, դաստիարակի փոխադարձ վստահության:

Իսկ ընտանիքի և ուսումնական հաստատության միջև ավելի կայուն կամուրջներ կառուցելու համար մշտական ջանքեր են պահանջվում՝ ամեն տարի նորոգվող նոր հարաբերություններով: Ծնող-ՆՈՒՀ և ծնող-դպրոց համագործակցությունը պետք է պարբերաբար սնուցվի, իսկ դաստիարակները և ուսուցիչներն այս գործում առաջին գծում են:

Ձեռնարկում կարմիր գծի պես շեշտադրվում է այն մոտեցումը, որ ծնող-մանկավարժական աշխատող հարաբերությունները չպետք է կառուցվեն «մենք-նրանք» կեցվածքով: Այդպիսի մոտեցման դեպքում գործում է «մեղադրող կողմ»-ի գործելաոճը: Նման դեպքում մանկավարժական աշխատողներն ու ծնողները փոխադարձաբար միմյանց են մեղադրում երեխայի մոտ նկատված խնդիրների համար, փոխադարձաբար զգուշանում են աշակերտի մտահոգությունները միմյանց հետ կիսելու հարցում, զբաղված են առանձին-առանձին դժգոհելով: Սա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է, որից պետք է հրաժարվել և «մենք-նրանք»-ի մտածելակերպը փոխարինել «մենք»-ով, որը ծնողների և ուսումնական հաստատությունների միջև կամուրջներ կկառուցի:

Ձեռնարկը նրա մասին է, որ նույն ուղղությամբ, այս դեպքում՝ երեխային նայող ուսումնական հաստատության ու ծնողի համագործակցությունից է կախված երեխայի ֆիզիկական, սոցիալական, հոգևոր համաչափ զարգացումը: Այս դեպքում բոլոր քայլերը կունենան նույն կարգախոսը՝ ՀԱՆՈՒՆ ԵՐԵԽԱՅԻ:

Հեղինակային խումբ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունները կոչված են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումը, դաստիարակությունը, ուսուցումը և խնամքը: ՆՈՒՀ-երի հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, որտեղ երեխան սկսում է հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել՝ համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ:

Դաստիարակության գործընթացն արդյունավետ է, երբ սոցիալական օղակները՝ ՆՈՒՀ-ը և ընտանիքը, համագործակցում են, գործընթացը կառուցողական է, դաստիարակչական ներգործությունը՝ միասնական: Կարևորվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում կազմակերպող ուսումնադաստիարակչական տարբեր աշխատանքներում:

Ներկայումս կրթական համակարգում առկա բազմաշերտ խնդիրների լուծման համատեքստում չափազանց կարևոր է մանկավարժների կողմից սաների ծնողների ընդունումը որպես նախադպրոցահասակ երեխայի ուսուցման և դաստիարակության գործընթացի ակտիվ մասնակցի, որպեսզի ծնողը հրաժարվի պահանջատիրոջ կարգավիճակից և ընդգրկվի սաների հետ իրականացվող աշխատանքներում:


Նախադպրոցական տարիքը չափազանց կարևոր ժամանակաշրջան է, քանի որ հոգեկան գործընթացների զարգացումը, ֆիզիոլոգիական փոփոխությունները շատ ինտենսիվ են: Այս տարիքում է դրվում անձնավորության ձևավորման հիմքերը: Հետևաբար, երեխայի հետ կազմակերպվող աշխատանքներում առանցքային կարևոր է ՆՈՒՀ-ի աշխատակիցների, մասնավորապես՝ դաստիարակի և ծնողների համագործակցությունը: Այս համագործակցության շրջանակում անհրաժեշտ է երեխային դիտարկել որպես գործընթացի ակտիվ մասնակից, որը, իր տարիքային առանձնահատկություններին համապատասխան, կարող է մասնակցել իրեն վերաբերող որոշումների կայացմանը: Մանկավարժ-ծնող-երեխա արդյունավետ համագործակցությունը երեխայի ամբողջական զարգացման (holistic development) գրավականն է:

Ծնողական համայնքի հետ համագործակցության հիմքում պետք է լինի երեխայի գերակա շահը: Անհրաժեշտ է այն կառուցել գործընկերային, վստահելի հարաբերությունների հիման վրա:

Ծնողավարության գործընթացի գրագետ կազմակերպումը ուղղակիորեն անդրադառնում է նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա:

Մանկավարժական աշխատողի կողմից ծնողավարման դասընթացներ անցկացնելու անհրաժեշտությունն ամրագրված է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի 11-րդ ենթակետով:

Նախադպրոցական ուսումնական հաստատություն և ընտանիք համագործակցության հիմքում մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամրագրումն է:



«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով ներկայացված են նախադպրոցական կրթության ոլորտում սանի ծնողների (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունքներն ու պարտականությունները, համաձայն որոնց ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն ընտրելու նախադպրոցական ուսումնական հաստատությունը, կրթական ծրագիրը և ծառայությունները: Ծնողները կարող են ընտրել ինչպես պետական և համայնքային, այնպես էլ՝ ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Չափազանց կարևոր է, որպեսզի ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն ընտրելիս ծնողները նախապես պարզեն՝ արդյոք տվյալ հաստատությունը նախադպրոցական կրթություն իրականացնելու համար ունի լիցենզիա՝ տրամադրված կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

Ծնողներն իրավունք ունեն երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման հարցերով դիմելու կրթության կառավարման համապատասխան մարմիններ, մասնակցելու նախադպրոցական կրթության գործընթացին, դիմելու տարածքային

մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ իրենց երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելու նպատակով, մասնակցելու երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատմանը, ուսումնական հաստատությունից պահանջելու խելամիտ հարմարեցումներ երեխայի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով նախադպրոցական կրթության իրավունքն իրացնելու համար, մասնակցելու երեխայի անհատական զարգացման և ուսուցման պլանի մշակմանը, մանկավարժների կողմից իրականացվող ծնողական կրթության դասընթացներին:

Նախադպրոցական կրթության ոլորտում ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) պարտավոր են երեխաների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք կրթական հաստատության և մանկավարժների, հայրենիքի, ազգային, պատմական, մշակութային արժեքների նկատմամբ:



Երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը չի ազդարում ընտանիքին նրան ընտանեկան միջավայրում դաստիարակելու, զարգացնելու և կրթելու պարտավորությունից:

Նախադպրոցական կրթության ոլորտում երեխայի իրավունքները ևս հստակ ամրագրված են «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում, ըստ որի երեխան ունի պաշտպանվածության իրավունք մտավոր և հոգեկան զարգացմանը վնասող ցանկացած տիպի տեղեկատվությունից և քարոզչությունից, առողջությանը վնասող ցանկացած տիպի շահագործումից, բռնությունից և ազդեցությունից, ֆիզիկական և հոգեբանական ճնշումից, արժանապատվության նվաստացումից:

Երեխան իրավունք ունի զարգանալու և սովորելու երեխայակենտրոն, ներառական և անվտանգ միջավայրում, որտեղ հաշվի կառնվեն յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկությունները, որտեղ կկարողանա արտահայտել կարծիք և մասնակցել իրեն վերաբերող որոշումների կայացմանը՝ իր տարիքի և զարգացման առանձնահատկություններին համապատասխան:



ԸՆՏԱՆԻՔ - ՆՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծնողների հետ համագործակցությունը սկսվում է այն պահից, երբ երեխան սկսում է հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան ունի քույր կամ եղբայր այդ հաստատությունում, և համագործակցությունը շարունակականություն է պահանջում:

Սակայն շատ ավելի կարևոր է ծնողների հետ աշխատանքը սկսել երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելուց առաջ, քանի որ անհրաժեշտ է երեխային նախապատրաստել ՆՈՒՀ հաճախելուն:

Բազմաթիվ ծնողները հաճախ իրենք էլ պատրաստ չեն բաժանվելու երեխայից, և երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը կարող է ցավոտ լինել և՛ ծնողի, և՛ երեխայի համար: Հետևաբար, ՆՈՒՀ-ը նտանիք համագործակցության առաջին քայլը երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելուն նախապատրաստելն է:

Հասակակիցների հետ շփման առաջին փորձառությունը երեխան ձեռք է բերում նախադպրոցական ուսումնական հաստատությունում, առաջին անգամ տևական ժամանակով բաժանվում է ծնողից: Փափուկ ադապտացիայի (հարմարունակության) իրականացման համար չափազանց կարևոր է ծնողների հետ վստահելի և գործընկերային հարաբերությունների կառուցումը, ծնողների ներգրավվածությունը սաների հետ կազմակերպվող աշխատանքներում:

Աղապտացիան երեխայի հուզական, սոցիալական, ֆիզիկական հարմարումն է նոր՝ նախադպրոցական ուսումնական հաստատության միջավայրին: Այն պետք է իրականացվի աստիճանաբար, փուլային, որպեսզի երեխան կարողանա բաժանվել ծնողից և ընդունի դաստիարակին: Չափազանց կարևոր է դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը, որն իր մեջ ներառում է և՛ ծնողների ու դաստիարակների միջև կառուցողական համագործակցությունը, և՛ միջավայրի հարմարեցումները:

Յուրաքանչյուր ուստարվա մեկնարկին նախադպրոցական ուսումնական հաստատություններն իրենց դռներն են բացում բազմաթիվ փոքրիկների առջև, որոնց հարմարունակության կազմակերպումը պետք է իրականացվի համաժամանակյա: Սա շատ բարդ փուլ է և՛ սաների, և՛ ծնողների, և՛ նաև մանկավարժների համար:

Երեխայի հարմարունակության գործընթացը հնարավորինս սահուն և անցնցում կազմակերպելու համար, ինչպես արդեն նշվեց, շատ արդյունավետ է ծնողական համայնքի հետ համագործակցությունը նախապես սկսելը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություն-ընտանիք համագործակցությունը մանկավարժին հնարավորություն է տալիս նախապես ծանոթանալու երեխայի առանձնահատկություններին, հետաքրքրություններին, նախասիրություններին, բնավորության որոշ գծերին: Սա անհրաժեշտ է երեխայակենտրոն ուսուցման համատեքստում երեխայի հետ հաղորդակցվելու, համագործակցելու, երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների հաշվառմամբ ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու համար:

Ծնողների համար, նախքան երեխայի հաստատություն հաճախելը, համագործակցությունը համար շատ լավ հնարավորություն է ծանոթանալու իրենց երեխայի հետ աշխատող մանկավարժին, քննարկելու երեխայի նախասիրությունները, դաստիարակության մոտեցումները և, վերջապես, լինելու այն միջավայրում, ուր շուտով իր փոքրիկն է հաճախելու:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատանքը շուրջտարյա է, հետևաբար հարց կարող է առաջանալ. իսկ ինչպե՞ս կազմակերպել նախնական հանդիպումներ սաների և ծնողների հետ, քանի որ դաստիարակները մշտական զբաղվածություն ունեն և իրենց հանգստի և ընդմիջման ժամերն անգամ անցկացնում են սաների հետ:

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի՝ տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումը այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը,

հետևաբար ավագ խմբի սաները օգոստոսի 20-ից չեն հաճախելու նախադպրոցական ուսումնական հաստատություն, խմբասենյակն ազատ է, և դաստիարակը հնարավորություն ունի աշխատանքներ իրականացնելու նոր ընդունվող սաների և նրանց ծնողների հետ:

Առաջարկվում է օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում պլանավորել նախնական հանդիպումների և սաների հարմարունակության գործընթացի կազմակերպումը:

Յուրաքանչյուր ՆՈՒՀ իր առաձնահատկություններով պայմանավորված պլանավորում է ծնողական համայնքի հետ աշխատանքն այս ուղղությամբ:

Խիստ ցանկալի է, որ նախնական հանդիպումները ծնողի և սանի հետ կազմակերպվեն մինչև նոր ուստարվա մեկնարկը:

Սակայն մինչ նախնական հանդիպումներ կազմակերպելն առաջարկվում է նոր ընդունվող սաների ծնողների հետ աշխատանքը սկսել՝ նրանց էլեկտրոնային հասցեներին ուղարկելով հուշաթերթեր:

Հուշաթերթերում կարող են ներառված լինել՝

- հարմարունակության գործընթացի արդյունավետ կազմակերպման վերաբերյալ խորհուրդներ,
- տվյալ տարիքային խմբի սաների օրվա մոտավոր կանոնակարգի, ռեժիմային տարբեր պահերի վերաբերյալ տեղեկատվություն,
- նախադպրոցական ուսումնական հաստատության սննդակարգը,
- նախադպրոցական ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների վերաբերյալ տեղեկատվություն,
- այլ:



Հուշաթերթերը մշակվում են նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի, մեթոդիստի, դաստիարակի, հոգեբանի և բուժքրոջ կողմից: Նույնաբովանդակ հուշաթերթ կարող է տեղադրվել նաև ՆՈՒՀ-ի կայքէջում:

Անհրաժեշտ է, որպեսզի ծնողները նախքան երեխայի ՆՈՒՀ հաճախելը, նրա ռեժիմը՝ քնելու, սնվելու, զբոսնելու և խաղալու ժամերը փորձեն հարմարեցնել նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնակարգին:

Տարիքային տարբեր խմբերի համար օրինակելի կանոնակարգերը ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ-ում:

Հարմարունակության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար ծնողական համայնքի հետ հետագա աշխատանքը պետք է լինի պլանավորված՝ հստակ մշակված քայլաշարով:

Քայլ 1. Անհատական հանդիպումներ սանի և նրա ծնողների հետ:

Քայլ 2. Ենթախմբային աշխատանքների կազմակերպում սաների և նրանց ծնողների հետ՝ 1-1.5 ժամ տևողությամբ:

Ծնողների մասնակացությունը սաների հետ կազմակերպվող աշխատանքներում ըստ անհրաժեշտության է:

Քայլ 3. Ծնողական հանդիպումների, քննարկումների կազմակերպում բազմամասնագիտական խմբի հետ:



Քայլ 1-ը ենթադրում է օրվա ընթացքում անհատական հանդիպումներ սաների և նրանց ծնողների հետ: Դաստիարակը կարող է յուրաքանչյուր օր 5-6 սանի և նրանց ծնողներին տարբեր ժամերի հրավիրել ՆՈՒՀ:

Կրտսեր առաջին խմբում (2-3 տարեկաններ) ըստ ԿԳՄՍ նախարարի 11 հոկտեմբերի 2021 թ. 76-Ն հրամանի սաների սահմանային թիվը 20-ն է, իսկ կրտսեր երկրորդ խմբում (3-4 տարեկաններ)՝ 30-ը, հետևաբար մեկ շաբաթը բավարար է բոլոր սաների հետ անհատական հանդիպումներ կազմակերպելու համար:

Ծնողների և սաների հետ հանդիպումները պետք է լինեն պլանավորված: Հանդիպմանը դաստիարակը նախապես պատրաստվում է: ՆՈՒՀ-ի համակազմը ևս տեղեկացվում է նոր ընդունվող սաների և նրանց ծնողների հետ իրականացվող նախնական հանդիպումների մասին:

Հանդիպման ընթացքում դաստիարակը ծանոթանում է երեխայի և երեխայի ծնողների հետ, նրանց է ներկայացնում դաստիարակի օգնականին: Երեխան և ծնողները շրջում են ՆՈՒՀ-ի տարածքում, խմբասենյակում: Ծնողին և երեխային ներկայացվում են այն տարածքը, որտեղ երեխան մշտապես կամ հաճախակի լինելու է՝ բակը, խաղասենյակը, ֆիզկուլտուրայի դահլիճը, բուժկետը և այլն:

Հաջորդիվ գրույցի ընթացքում դաստիարակը ծանոթանում է երեխայի նախասիրություններին, հետաքրքրություններին: Տեղեկատվությունն ամբողջությամբ հիշելու նպատակով դաստիարակը հարցաթերթիկ է տրամադրում ծնողներին, խնդրում է տանը պատասխանել բոլոր հարցերին և վերադարձնել: Կարելի է վերադարձնել նաև էլեկտրոնային տարբերակով, որպեսզի դաստիարակը բոլոր սաների վերաբերյալ տեղեկատվությունն ունենա՝ նախքան հաջորդ քայլին՝ կարճատև ենթախմբային աշխատանքներ պլանավորելուն անցնելը:

Հարցաթերթը կարող է պարունակել՝

- ընդհանուր տեղեկատվական հարցեր սանի վերաբերյալ, օրինակ՝ սանի անուն, ազգանունը, ծննդյան ամիս, ամսաթիվ,
- ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկատվություն,
- տեղակատվություն, թե ով է մեծամասամբ հոգ տանում երեխայի մասին,
- բնավորության գծերի նկարագրության վերաբերյալ հարցեր,
- տեղեկություններ այն մասին, թե ում հետ է խաղում երեխան,
- հարցեր այն մասին, թե հուզված ժամանակ ինչպես է մայրիկը (խնամակալը) տանը հանգստացնում երեխային, ինչից է նա բարկանում, ինչպես է շփվում այլ երեխաների և մեծահասակների հետ,
- հետաքրքրությունների և նախասիրությունների վերաբերյալ հարցեր՝ սիրելի խաղեր, խաղալիքներ, գույներ և այլն,
- սննդային նախասիրությունների մասին տեղեկատվություն՝ սիրելի ուտեստ և այլն,
- այլ:

Կարելի է ևս մեկ անգամ, արդեն թղթային տարբերակով, հուշաթերթ տրամադրել, թե ինչպես կարելի է սանին նախապատրաստել նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելուն, որպեսզի հարմարունակության գործընթացը լինի արդյունավետ և փափուկ: Հուշաթերթում կարող են ներառվել ադապտացիայի վերաբերյալ տեղեկատվություն և խորհուրդներ:

Անհրաժեշտ է հիշել, որ ադապտացիան օրգանիզմի հարմարումն է նոր միջավայրին, և այն կախված է երեխայի տարիքային և անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններից, ընտանեկան հարաբերություններից և նախադպրոցական հաստատությունում գտնվելու պայմաններից:

Ծնողից բաժանումը կարող է լինել տխուր կամ ցավալի և սովորաբար երեխայի մոտ բարկություն կամ վախ է առաջացնում: Ցանկացած փոփոխություն (ընտանիքում նոր երեխայի ծնունդ, բնակարանի տեղափոխություն, հիվանդություն, նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը և այլն) երեխայի մոտ բաժանման տագնապ է առաջացնում: Նույնիսկ քնելը երեխայի համար բաժանման իմաստ ունի, ուստի կարևոր է, որ ծնողը նախապես երեխային պատմի, թե ուր են հաճախելու և ինչ են անելու այնտեղ: Հարկավոր է երեխային նախապես ներկայացնել նախադպրոցական ուսումնական հաստատության առօրյան, ինչ են անում երեխաներն այնտեղ, ինչու են հաճախում:

Ծնողը պետք է զրուցի դաստիարակի հետ երեխայի ներկայությամբ: Երեխան ծանոթանում է այն մարդու հետ, ով պետք է հոգ տանի իր մասին: Նրան ապահովության զգացողություն է տալիս այն հանգամանքը, որ իր մայրիկի (խնամակալի) և դաստիարակի շփումը ջերմ է և հանգիստ:

Երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու առաջին օրերին ծնողը պետք է լինի մանկապարտեզում կամ մոտակա տարածքում: Առաջին օրերին ցանկալի է, որ երեխան մանկապարտեզում մնա կարճ ժամանակով:

Եթե ծնողը նորից պետք է աշխատանքի անցնի, ցանկալի է, որ այդ ժամանակահատվածը չհամընկնի երեխայի ՆՈՒՀ հաճախելու, ադապտացիայի առաջին օրերի հետ: Ծնողը կարող է հեռանալ երեխայից այն ժամանակ, երբ երեխան արդեն պատրաստ է բաժանման:

- Հեռանալիս անպայման պետք է երեխային հրաժեշտ տալ:
- Երեխային խոստացած ժամին պետք է վերցնել մանկապարտեզից:

Երեխայի մոտ ժամանակային պատկերացումների դեռևս ձևավորված չեն, հետևաբար դա կապում ենք նրա գործունեության ձևերի հետ՝ զբոսանքից հետո, ճաշից հետո, խաղից հետո և այլն:

- Երեխայի նկատմամբ պահանջները պետք նույնը լինեն մանկավարժական աշխատողի և ծնողի կողմից:

Յուրաքանչյուր երեխա յուրովի է հարմարվում նախադպրոցական ուսումնական հաստատության միջավայրին:

Մինչև 2-3 տարեկան երեխաները խաղում են կողք կողքի, բայց ոչ միասին: Այս տարիքում մեծահասակը երեխայի համար հանդիսանում է որպես խաղընկեր, և բավարարում է երեխայի համագործակցության կարիքը: Հասակակիցները չեն կարող դա տալ, քանի որ իրենք նույն բանի կարիքն ունեն:

2-3 տարեկան երեխաները վախ են զգում անծանոթ մարդկանցից: Այս վախերը հանդիսանում են նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի հարմարվելու դժվարությունների պատճառներից մեկը: Երեխան հնարավոր է դառնա գրգռված, խոցելի, նույնիսկ հաճախ հիվանդանա:

Այդ իսկ պատճառով, կարևորվում է փափուկ ադապտացիայի կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Խմբի բոլոր սաների և նրանց ծնողների հետ անհատական հանդիպումներից հետո, երբ արդեն դաստիարակը ունի տեղեկություններ բոլորի անհատական առանձնահատկությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների մասին, առաջարկվում է կազմակերպել ենթախմբային աշխատանքներ նրանց հետ:



Քայլ 2. Դաստիարակն օրվա տարբեր ժամերին 1-1.5 ժամ տևողությամբ աշխատանքներ է պլանավորում ընդհանուր թվով 6-8 սաների հետ: Անհրաժեշտ է, որ բոլոր սաները ամեն օր հաճախեն: Երկու խումբ կարող է հաճախել մինչև սաների քնի կազմակերպումը, ևս երկու խումբ՝ քնից հետո:

Անհրաժեշտ է ունենալ 1-1.5 ժամ տևողությամբ աշխատանքների պլանավորման մի քանի տարբերակներ՝ ծնողների մասնակցությամբ և առանց ծնողների: Անհրաժեշտության դեպքում այս աշխատանքներին ծնողները կարող են մասնակցել կամ սպասել միջանցքում: Առաջին օրերին ծնողներն անպայման պետք է լինեն երեխայի տեսադաշտում, որպեսզի անհրաժեշտության դեպքում երեխան կարողանա մոտենալ նրանց:

Այսպես, փոքր ենթախմբերով, խմբի բոլոր երեխաները տարբեր ժամերի հնարավորություն կունենան կարճաժամկետ հաճախելու ՆՈՒՀ և հարմարվելու նոր միջավայրին:

Սաների՝ ՆՈՒՀ-ում մնալու տևողությունը պետք է ավելացնել աստիճանաբար՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները:

Այն սաները, որոնք մինչ այդ հաճախել են ՆՈՒՀ կամ որևէ զարգացման կենտրոն և ադապտացիայի հետ կապված խնդիրներ չունեն, կարող են ամբողջ օրով մնալ հաստատությունում:

Յուրաքանչյուր հանդիպումից հետո դաստիարակը զրուցում է ծնողների հետ, անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցում, նաև տրամադրում է խորհուրդներ՝ սաների ադապտացիան արդյունավետ կազմակերպելու համար: Ստորև ներկայացվում են մի քանի խորհուրդներ.

- Երեխային ՆՈՒՀ տանելիս, ցանկալի է ունենալ դրական տրամադրվածություն և ցույց չտալ ներքին անհանգստությունը:
- ՆՈՒՀ հաճախելուց առաջ պարբերաբար զրուցել երեխայի հետ նոր միջավայրի և նոր ընկերների ունենալու մասին:
- Անհրաժեշտ է երեխային դրական տրամադրել մանկավարժական համակազմի և ՆՈՒՀ-ի հանդեպ:

Հարմարունակության գործընթացի գրագետ կազմակերպումը հնարավորություն կտա երեխային վստահելու մանկավարժական աշխատողին, ավելի հեշտ հարմարվելու նոր միջավայրին:



Քայլ 3. Հաջորդ քայլն արդեն ընդհանուր ծնողական հանդիպման կազմակերպումն է, որին ներկա են լինելու սանի հետ աշխատող բոլոր աշխատակիցները՝ տնօրենը, մեթոդիստը, երաժշտության դաստիարակը, ֆիզիոհանգիչը, լոգոպեդը, հոգեբանը, բուժքույրը, դաստիարակի օգնականը և այլն:

Քննարկվում են սաների հետ տարբեր ուղղություններով կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում ծնողները կարող են յուրաքանչյուր մասնագետի հետ անհատական զրույց ունենալ:

Ծնողական համայնքի հետ համագործակցությունը հետագայում շարունակվում է տարբեր ձևերով:





ՆՈՒՀ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

ՆՈՒՀ-ը նտանիք համագործակցությունը ավելի է կարևորվում ներկայումս: Աշխարհաքաղաքական բուռն փոփոխությունները, մարդկային հարաբերությունների վիրտուալացումը, շփման բացակայությունը նոր իրականություն են թելադրում՝ առաջացնելով համագործակցության նոր ձևերի տիրապետման անհրաժեշտություն:

Նախադպրոցական կրթության ավարտին ակնկալվում է 9 առանցքային կարողունակություններով օժտված նախադպրոցականի ձևավորում, որը կկարողանա հաղորդակցվել տարբեր իրավիճակներում և միջավայրերում՝ ըստ անհրաժեշտության կիրառելով նաև իր տարիքին համապատասխան մեղիա գործիքներ, ակտիվ մասնակցություն կունենա հասարակական կյանքին, ճանաչողական հետաքրքրություն կցուցաբերի շրջապատող աշխարհի հանդեպ, կկարողանա ինքնուրույն կողմնորոշվել և լուծումներ գտնել տարբեր խնդրահարույց իրավիճակներում, կդրսևորի քննադատական վերաբերմունք շրջապատող միջավայրի հանդեպ, կդրսևորի ինքնուրույնություն, կունենա ինքնասպասարկման և ինքնակազմակերպման հմտություններ, կտիրապետի առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոններին, բարեվարքության և սոցիալական պարզագույն կանոններին: Այս ամենն իրականացնելու և, վերջապես, երեխային երջանիկ մանկություն պարգևելու համար անհրաժեշտ է ապահովել ծնողական համայնքի հետ շարունակական համագործակցություն:

ՆՈՒՀ-ի և ընտանիքի համագործակցությունն արդյունավետ է, երբ համագործակցության նպատակները միասնական են, և այն կառուցված է փոխադարձ հարգանքի ու փոխվստահության վրա:

Ընտանիք-ՆՈՒՀ համագործակցության արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ բարձրանում է երեխաների դաստիարակության և ուսուցման հարցերի շուրջ ծնողական գրագիտությունը, ապահովվում է միասնական մոտեցում երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման, խնամքի և առողջության հետ կապված հարցերի շուրջ:

Ծնողական կրթության արդյունավետության գրավականը ծնողական հանդիպումների լավ նախապատրաստումն է, կարիքի գնահատումը, դրա հիման վրա ծնողական հանդիպումների համար թեմաների առանձնացումը:

Ներկայումս ՆՈՒՀ-երում իրականացվում են ծնողների հետ համագործակցության մի շարք ավանդական և ոչ ավանդական ձևեր՝

- Բաց դռների օրեր, որի ընթացքում ծնողները գալիս են նախադպրոցական ուսումնական հաստատություն, ներկա են գտնվում կանոնակարգային տարբեր պահերին, մասնակցում են ուսումնադաստիարակչական աշխատանքներին:
- «Ծնողական արհեստանոցներ», որոնք հաճախ կազմակերպվում են, երբ անհրաժեշտ է որևէ թեմատիկ միավորի շրջանակում ստեղծել դիդակտիկ պարագաներ: Այն դրական, հուզական, ջերմ մթնոլորտի վրա հենված համագործակցային ձև է: Համագործակցության այս ձևի արդյունքում ստեղծվում է նյութական արդյունք: Ծնորհալի ծնողները, տատիկները և պապիկները դաստիարակների և երեխաների հետ միասին ստեղծում են դիդակտիկ նյութեր, տարբեր ձևավորումներ, բնական նյութերից կոմպոզիցիաներ:
- Անհատական և խմբային խորհրդատվություններ: Անհատական խորհրդատվությունները մեծամասամբ կազմակերպվում են համագործակցության սկզբնական փուլում: Խմբային խորհրդատվությունները կազմակերպվում են այն դեպքում, երբ քննարկվող թեման ընդհանուր է բոլորի համար:
- Կլոր սեղան, որը ինտերակտիվ համագործակցության ձև է և հնարավորություն է տալիս տարբեր հարցեր քննարկել ակտիվ երկխոսության միջոցով:
- Սեմինարներ, վեբինարներ և այլն:

Ներկայումս հաճախ կազմակերպվում են նաև վերինարներ՝ տարբեր թեմաներով: Վերինարը կարող են վարել դաստիարակը, բազմամասնագիտական խմբի անդամները՝ հոգեբան, լոգոպեդ և այլն: Երբեմն վերինար կարող է վարել նաև մասնագետ ծնողը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ ծնողներ ունեն ինքնակրթության համար ժամանակի սահմանափակում, ցանկալի է, որ մանկավարժներն ընտրեն ընտանիքների հետ աշխատանքի այս ձևը, որպեսզի հնարավորինս ներգրավեն ծնողներին:

Հանդիպումների մասին ծնողներին պետք է տեղեկացնել նախապես՝ հանդիպումից 10 օր կամ երկու շաբաթ առաջ, որպեսզի ծնողները կարողանան ապահովել իրենց մասնակցությունը: Անհրաժեշտ է հանդիպումից մի քանի օր առաջ ևս հիշեցնել՝ հստակ նշելով հանդիպման օրը, ժամը, վայրը և թեման:

Առաջարկվում է նոր ուստարվա սկզբին նախատեսել թեմաներ, որոնց շրջանակում կարելի է իրականացնել ծնողական կրթությունը:

Ստորև տեղադրվում է ծնողական կրթության ժամանակացույցի նմուշօրինակ: Յուրաքանչյուր խմբի համար այն, բնականաբար, կարող է տարբեր լինել:

1. «Փափուկ ադապտացիա» Կրտսեր I և կրտսեր II խմբեր	Սեպտեմբեր
2. «Անվտանգ վարքագծի ձևավորումը երեխաների մոտ» Ավագ և միջին խմբեր	Սեպտեմբեր
3. «Տարիքային ճգնաժամերը, դրանց դրսևորումներն ու հաղթահարման ուղիները»	Հոկտեմբեր
4. «Ագրեսիվ վարքագիծ»	Նոյեմբեր
5. «Երբ երեխան դժվարությամբ է ընկերանում»	Դեկտեմբեր
6. «Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի վրա»	Հունվար
7. «Մեդիագործիքների կիրառման ազդեցությունը նախադպրոցական տարիքում»	Փետրվար
8. «Մանկական վախեր»	Մարտ
9. «Երեխայի խոսքի զարգացումը նախադպրոցական տարիքում»	Ապրիլ
10. «Երեխային դպրոցին նախապատրաստելու խնդիրները» Ավագ խումբ	Մայիս
11. «Կարգապահություն»	Մայիս

**ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ (2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ԽՄԲԻ ՕՐՎԱ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(9-ժամյա՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով)**

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1.	Սաների ընդունելություն, խաղեր, ինքնուրույն գործունեություն, առավոտյան մարմնամարզություն	8.30 - 9.30	8.30 - 9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30 - 10.00	9.30 - 10.00
3.	Խաղ-պարապմունքի նախապատրաստում	10.00 - 10.15	10.00 - 10.15
	Խաղ-պարապմունքներ՝ ենթախմբերով	10.15 - 10.30	10.15 - 10.30
	Խաղ-պարապմունք առաջին	10.30 - 10.45	10.30 - 10.45
	Խաղ- պարապմունք երկրորդ	10.45 - 11.00	
		11.00 - 11.15	
4.	Զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք, ինքնուրույն գործունեություն)	11.15 - 11.55	10.45 - 11.55 (կոփիչ միջոցառումներ բակում)
5.	Վերադարձ զբոսանքից	11.55 - 12.15	11.55- 12.15
6.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.15 - 12.45	12.15 - 12.45
7.	Ազատ գործունեություն	12.45 - 12.55	12.45 - 12.55
8.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	12.55 - 14.55	12.55 - 14.55
9.	Աստիճանական արթնացում, վարժություններ արթնացումից հետո	14.55 - 15.30	14.55 - 15.30
10.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.30 - 16.00	15.30 - 16.00
11.	Խաղեր, ինքնուրույն գործունեություն	16.00 - 16.30	16.00 - 16.30
12.	Զբոսանքի նախապատրաստում զբոսանք. տուն ճանապարհել	16.30 - 17.30	16.30 - 17.30

**ԿՐՏՍԵՐ 2-ՐԴ ԽՄԲԻ (3-4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ)
ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(9-ժամյա, հնգօրյա աշխատանքային ռեժիմով)**

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1	Սաների ընդունելություն, խաղեր, ինքնուրույն գործունեություն, առավոտյան մարմնամարզություն	8.30 - 9.30	8.30 - 9.30
2	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30 - 10.00	9.30 - 10.00
3	Պարապմունքների նախապատրաստում	10.00 - 10.15	10.00 - 10.15
	Պարապմունք առաջին Պարապմունք երկրորդ	10.15 - 10.35 10.50 - 11.10	10.15 - 10.35
4	Զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք, ինքնուրույն գործունեություն)	11.10 - 11.55	10.35 - 12.05 (կոփիչ միջոցառումներ բակում)
5	Վերադարձ զբոսանքից	11.55 - 12.15	12.05 - 12.15
6	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.15 - 12.45	12.15 - 12.45
7	Ազատ գործունեություն	12.45 - 12.55	12.45 - 12.55
8	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	12.55 - 14.55	12.55 - 14.55
9	Աստիճանական արթնացում, վարժություններ արթնացումից հետո	14.55 - 15.30	14.55 - 15.30
10	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.30 - 16.00	15.30 - 16.00
11	Խաղեր, ինքնուրույն գործունեություն	16.00 - 16.30	16.00 - 16.30
12	Զբոսանքի նախապատրաստում զբոսանք. տուն ճանապարհել	16.30 - 17.30	16.30 - 17.30

**ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ (4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ)
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(9-ժամյա, հնգօրյա աշխատանքային ռեժիմով)**

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1.	Սաների ընդունելություն, խաղեր առավոտյան մարմնամարզություն	8.30 - 9.30	8.30 - 9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30 - 10.00	9.30 - 10.00
3.	Պարապմունքի նախապատրաստում Պարապմունք առաջին Պարապմունք երկրորդ Պարապմունք երրորդ/ազատ գործունեություն	10.00 - 10.10 10.10 - 10.35 10.45 - 11.10 11.20 - 11.45	10.00 - 10.10 10.10 - 10.35
4.	Զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)	11.45 - 12.30	10.35 - 12.30 (կոփիչ միջոցառումներ)
5.	Վերադարձ զբոսանքից	12.30 - 12.45	12.30 - 12.45
6.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.45 - 13.15	12.45 - 13.15
7.	Ազատ գործունեություն	13.15 - 13.25	13.15 - 13.25
8.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13.25 - 15.15	13.25 - 15.15
9.	Աստիճանական արթնացում, վարժություններ արթնացումից հետո, ազատ խաղեր	15.15 - 15.50	15.15 - 15.50
10.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.50 - 16.10	15.50 - 16.10
11.	Զբոսանքի նախապատրաստում զբոսանք, խաղեր, տուն ճանապարհել	16.10 - 17.30	16.10 - 17.30

**ԱՎԱԳ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ (5-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ)
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(9-ժամյա, հնգօրյա աշխատանքային ռեժիմով)**

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1.	Սաների ընդունելություն, խաղեր, առավոտյան մարմնամարզություն	8.30 - 9.30	8.30 - 9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30 - 9.55	9.30 - 9.55
3.	Պարապմունքի նախապատրաստում	9.55 - 10.05	9.55 - 10.05
4.	Պարապմունք առաջին երկրորդ երրորդ	10.05 - 10.35 10.45 - 11.15 11.25 - 11.55	10.05 - 10.35
5.	Զբոսանքի նախապատրաստում, զբո- սանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)	11.55 - 12.40	10.35 - 12.40 (կոփիչ միջոցառումներ)
6.	Վերադարձ զբոսանքից	12.40 - 12.50	12.40 - 12.50
7.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.50 - 13.20	12.50 - 13.20
8.	Ազատ գործունեություն	13.20 - 13.30	13.20 - 13.30
9.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13.30 - 15.15	13.30 - 15.15
10.	Աստիճանական արթնացում, վարժու- թյուններ արթնացումից հետո, ազատ խաղեր	15.15 - 15.50	15.15 - 15.50
11.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.50 - 16.10	15.50 - 16.10
12.	Զբոսանք, խաղեր, տուն ճանապարհել	16.10 - 17.30	16.10 - 17.30

ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև ներկայացվում են Մասարու Իբուկայի մտքերը երեխաների դաստիարակության և ուսուցման վերաբերյալ:

1. Երեխան գրքի նկարներով բոլորովին այլ պատմություն կարող է պատմել, քան այն, որը կարդում է մեծահասակը:
2. Հաճախ գրկեք երեխային:
3. Այլ անձանց ներկայությամբ մի՛ ծիծաղեք երեխայի վրա:
4. Յուրաքանչյուր երեխա կարող է լավ սովորել, ամեն ինչ կախված է դաստիարակության մեթոդից:
5. Երեխան հիշում է այն, ինչն իրեն հետաքրքիր է:
6. Բազմաթիվ հմտություններ անհնար է ձեռք բերել, եթե նա դրանք չի յուրացրել մանկությունում:
7. Վաղ մանկության տպավորությունները որոշում են երեխայի մտքերի և գործողությունների հետագա պատկերը:
8. Նորածին երեխան զգում է, երբ ծնողները վիճում են:
9. Երեխայի չարությունն ու նախանձը անզորության արտահայտություն են:
10. Ընտանիքում որքան շատ են երեխաները, այնքան ավելի լավ են շփվում միմյանց հետ:
11. Պապիկների և տատիկների ներկայությունը լավ խթան է երեխայի զարգացման համար:
12. Ռեժիմը զարգացնում է ժամանակի զգացողությունը:
13. Շրջապատեք երեխաներին այն լավագույնով, որն ունեք:
14. Մի աշխատանքում ունեցած հաջողությունները վստահություն են տալիս այլ աշխատանքում:
15. Երեխային հնարավորինս շուտ մատիտ տվեք:
16. Գրքերը միայն կարդալու, իսկ խորանարդիկները միայն շինարարության համար չեն:
17. Ֆիզիկական վարժությունները նպաստում են ինտելեկտի զարգացմանը:
18. Վարժեցրեք ձախ ձեռքն այնպես, ինչպես աջը:
19. Երեխայի համար խաղն ու աշխատանքը նույնն են:
20. Չկա ավելի կարևոր բան, քան երեխաների դաստիարակությունն է:





ՆՈՒՀ-ԻՑ ԴՊՐՈՑ

ՆՈՒՀ-ից դպրոց անցումը թվում է սահուն, սակայն իրականում թռիչքը մեծ է, որն իր հետ բերում է նոր միջավայր, նոր առօրյա, նոր ժամանակացույց, նոր ակնկալիքներ, և, իհարկե, նոր պահանջներ: Այս ամենը վերաբերում է նաև ծնողներին, ովքեր նույնպես պետք է հարմարվեն փոփոխություններին: Մեր իրականությունում հաճախ դպրոց հաճախելուն պատրաստվելը ասոցացվում է նոր հագուստ կամ գրենական իրեր գնելու հետ, որին զուգահեռ անտեսվում է հոգեբանական պատրաստվածությունը, ինչը, թերևս, կարևորագույններից է այս գործընթացում: Այս համատեքստում ծնողը պետք է տեղեկացված լինի սպասվելիք փոփոխություններին, վերջիններիս ազդեցությանը, պատրաստ լինի ինտեգրվել դրանց և օգնել իր իսկ երեխային հնարավորինս հեշտ անցում կատարել:

Ի՞նչ փոփոխություններ կարող են կատարվել առօրյայի, ակնկալիքների և ժամանակացույցի մեջ.

- անձանոթ միջավայր
- նոր երեխաներ
- չքները
- խորտիկը, իսկ ճաշը կարող է լինել ավելի ուշ
- պետքարանները /երեխաները կարող են ուզել զուգարան գնալ ընկերոջ հետ/
- նույնիսկ վերարկուների կախիչները
- կարող են ավելի երկար ժամանակ մնալ իրենց տեղերում
- կարող են շարժվել դասասենյակից դասասենյակ
- կարող են մի ուսուցչի մոտից մեկ այլ ուսուցչի մոտ տեղափոխվել
- կարող են օրվա ընթացքում չունենալ բավականաչափ խաղաժամանակ:

Անհրաժեշտ է թվարկվածների շուրջ պատրաստել ապագա դպրոցականին, ամուր բռնել նրա ձեռքը և միասին հաղթահարել այդ փուլը:

Ուսումնական տարվա սկզբին որոշ ժամանակ ամեն ինչ ճիշտ ուղու վրա դնելով՝ դուք կարող եք օգնել ձեր առաջին դասարանցուն առավելագույնս արդյունավետ օգտագործել հետաքրքիր և կարևոր ուսումնական տարին: Առաջին դասարանցու պահանջի փոփոխության պատճառով աշակերտները տուն կգան ավելի հոգնած, քան նախկինում, հատկապես, եթե նրանք սովոր են ցերեկային քնին: Առաջնահերթություն՝ տվեք հանգստին և քնին: Դուք կարող եք կրճատել կամ վերահսկել դպրոցից հետո անցկացվող գործունեությունը մոտավորապես առաջին ամսվա ընթացքում: Բավականաչափ քունը կարևոր փոփոխություն կբերի ձեր երեխայի առողջության, էներգիայի և նոր իրավիճակներին հարմարվելու ունակության մեջ, քանի որ քունը նույնքան կարևոր է ձեր երեխաների զարգացման և բարեկեցության համար, որքան սնունդը և ֆիզիկական ակտիվությունը: Քնի չափն ու որակը կարող են ազդել երեխայի զգոնության, ինչպես նաև հիշողության, տրամադրության, վարքի և սովորելու ունակությունների վրա:

Չմոռանաք նաև նախաճաշը. այն շատ կարևոր է: Անկախ նրանից՝ ձեր երեխան նախաճաշում է տանը, թե դպրոցում, կարևոր է առավոտներն այնպես պլանավորել, որ երեխայի նախաճաշն ապահովված լինի, քանի որ այն համարվում է ուսուցման համար էներգիայի աղբյուր, ուստի լցրե՛ք ձեր երեխայի ճաշատուփը առողջ նախուտեստներով, որի վրա երբեմն կարելի է փակցնել «սիրո գրություն», որպեսզի նա իմանա, թե ինքը որքան յուրահատուկ է: Իմանալով, որ իրենց սիրում են՝ երեխաների համար ավելի հեշտ է բարյացական լինել ուրիշների հանդեպ:

Առավոտյան, մինչ ձեր երեխան դուրս կգա դռնից կամ դուք կգնաք աշխատանքի, գրկե՛ք նրան, նայե՛ք նրա աչքերին և ասե՛ք, թե որքան հպարտ եք նրանով և որքան եք սիրում նրան, ինչը պաշտպանվածության զգացողություն է առաջացնում երեխայի մոտ և հաղորդում է ինքնավստահություն, որն էլ էլ կօգնի նրան լավ դրսևորվել ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքում:

Երբ երեխան դպրոցից վերադառնա տուն կամ դուք աշխատանքից տուն վերադառնաք, նախքան որևէ գործի անցնելը 10-20 րոպե խոսեք ձեր երեխայի հետ՝ ստանդարտ «Ինչպե՞ս անցավ ձեր օրը դպրոցում» հարցից զատ տալով տարբեր տեսակի հարցեր ևս, ինչպիսիք են.

- Այսօր դպրոցում ինչ-որ ծիծաղելի բան պատահե՞լ է /դրական նոտա հաղորդե՞ք ձեր զրույցին/:
- Քեզ այսօր դպրոցում որևէ բան զարմացրե՞լ է /հետաքրքրություն տվե՞ք զրույցին/:
- Ի՞նչ օգտակար բան ես արել դու և քո ուսուցիչը քեզ կամ դասընկերներիդ համար:
- Այսօր դպրոցում քեզ ինչ-որ բան անհանգստացրե՞լ է:
- Կա՞ որևէ բան, որի մասին ցանկանում ես խոսել:

Այս դասարաններում սովորող երեխաները դեռևս ամուր կապված են խաղին. թո՛ւյլ տվեք նրանց խաղալ՝ բավարարելով նրանց հանգիստը, որից հետո միայն անցե՛ք տնային աշխատանքների կատարմանը: Ստեղծե՛ք տնային առաջադրանքների կամ դասապատրաստման համար հատուկ տարածք, ցանկալի է, որ նա ունենա սեփական գրասեղան, որը կլինի հավաք և առանց ավելորդ իրերի: Առաջադրանքները կատարելիս խրախուսե՛ք ուշադրությունը, բայց թույլ տվեք ձեր երեխաներին նաև սխալվել, քանի որ դա միակ միջոցն է, որով ուսուցիչները դիտարկում են, թե արդյոք նրանք հասկացել են նյութը: Սա նաև հնարավորություն կտա երեխաներին սովորել պատասխանատվություն ստանձնել իրենց աշխատանքի որակի համար:

Լցրե՛ք ձեր երեխայի կյանքը սովորելու սիրով՝ ցույց տալով նրան ձեր սեփական հետաքրքրասիրությունը, հարգելով նրա հարցերը և խրախուսելով նրա ջանքերը՝ ոչ թե նրա փոխարեն մտածելով և քայլ առ քայլ մատնանշելով աշխատանքում իր անելիքները: Հիշե՛ք, որ դա ձեր երեխաների տնային աշխատանքն է, ոչ թե ձերը:

Այս փուլը ճգնաժամային է, սակայն ոչ անհաղթահարելի: Հետևելով սույն ձեռնարկի առաջարկություններին և խորհուրդներին՝ միասին կհաղթահարենք այն:





Ծնող-դպրոց կապը

ԴՊՐՈՑ-ԾՆՈՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԸ



Չափազանց կարևոր է հասկանալ, թե ինչպես է կառուցվում դպրոց-ծնող գործընկերությունը: Ճիշտ հիմքի վրա դրված գործընկերությունը օգնում է երեխային ոչ միայն միջանձնային կապեր ձևավորելու, այլև առաջադիմության բարելավման գործում:

Այդ գործընկերության հիմնաքարերն են՝ հարգանքը, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները:



ՀԱՐԳԱՆՔ

Հարգանքի առկայության դեպքում և՛ ծնողը, և՛ դպրոցը գնահատված են, նրանք փոխադարձաբար միմյանց վստահում են: Երկուսն էլ գիտակցում են, որ ընտանիքի տեսակետն անգնահատելի է պատկերացում և տեղեկատվություն տրամադրելու համար, թե ինչ է անհրաժեշտ երեխային դպրոցում հաջողակ լինելու համար: Ծնողները լիիրավ գործընկերներ են որոշումների կայացման գործընթացում, քանի որ այդ տեղեկատվությունը շատ կարևոր է, և կա այն, ինչ մենք անվանում ենք բաց դռների քաղաքականություն դպրոցում: Բաց դռներ, քանի որ կա մթնոլորտ, որը ողջունում է ծնողների մասնակցությունը և արտահայտում է մտահոգություն նրանց, ինչպես նաև երեխայի կարիքների համար: Կա նաև այն, ինչ մենք անվանում ենք սահմանների ճանաչում: Ծնողները ունեն սահմանափակումներ, նրանք ունեն նաև այլ պարտականություններ, այնպես որ դպրոցը հնարավորություն են տալիս օգտվելու իր ծառայություններից, աջակցությունից, ռեսուրսներից և հանդիպումներին մասնակցել ծնողներին ժամանակում և վայրում: Փոխադարձ հարգանքի դեպքում կա այն համոզմունքը, որ և՛ դպրոցը, և՛ ծնողն իսկապես ցանկանում են այն, ինչը լավագույնն է երեխայի համար: Եթե երկուսն էլ ցանկանում են այն, ինչ լավագույնն է այդ երեխայի համար, ապա երկուսն էլ պատրաստ են կիսել երեխայի հաջողության պատասխանատվությունը:



Ո՛չ դպրոցը, ո՛չ ծնողը չեն մեղադրում մեկը մյուսին այն բանի համար, ինչ չի ստացվում, փոխարենը նրանք պատասխանատվություն են կրում դպրոցի հաջողության համար: Շատ կարևոր է ստեղծել ծնողներին հարմար դպրոցներ և դպրոց-բարեկամ տներ: Երբ մենք խոսում ենք ծնողների համար հարմար դպրոցների մասին, մենք խոսում ենք բոլոր այն դպրոցների մասին, որոնք ողջունում են իրենց տարբերություններով աչքի ընկնող երեխաներին, և ծնողները դա գնահատում են, քանի որ իրենց երեխան կարևորված է: Երբ մենք խոսում ենք ծնողի պատասխանատվության մասին, մենք դիտարկում ենք, որ ծնողները օգնում են երեխաներին տնային առաջադրանքների հարցում, և փաստում ենք, որ տանը ևս կարևորվում է դպրոցի դերը: Դա նաև նշանակում է, որ դպրոցները պատասխանատվություն են կրում կապի մեջ մնալու, իսկ ծնողները՝ կապված մնալու պատասխանատվության հանդեպ: Ծնողները պետք է իրազեկ լինեն իրենց երեխայի կարողություններին: Նրանք պետք է կիսեն իրենց ճանապարհորդությունը այդ երեխայի հետ, իսկ դպրոցները պետք է կապվեն և պատասխանատվություն ունենան՝ կապվելու ընտանիքների հետ: Մենք հաճախ ասում ենք, որ հաղորդակցությունը պետք է լինի կանոնավոր, շարունակական, իմաստալից, երկկողմանի՝ ներառյալ հետադարձ կապը: Իմաստային հաղորդակցությունը տրամադրում է տեղեկատվություն, թույլ է տալիս մեզ իմանալ նպատակների, ուսումնական ծրագրի շրջանակի և հաջորդականության մասին և թույլ է տալիս մեզ իմանալ տնային աշխատանքների պարտականությունների մասին: Այլ կերպ ասած, հաջողակ և պատասխանատու գործընկերությունը ենթադրում է երկուստեք տեղեկացված լինելու անհրաժեշտությունը: Ծնողները հասանելիություն ունեն դպրոցի կայքին, թվային ռեսուրսներին, դպրոցում գործում է բաժին, որը կենտրոնանում է ծնողների կարիքների և նրանց հետ տարվող աշխատանքների վրա: Կա ծնողական բլոգ և կա ծնողի տեսակետ: Պատասխանատվությունը նշանակում է կապի մեջ մնալ և տեղեկացված լինել:



ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարաբերությունները վստահություն են ձևավորում և պահպանում են որակյալ գործընկերությունները: Գործընկերների հետ հարաբերություններ կառուցելու բանալիները նույնն են, ինչ դասարանում հարաբերություններ կառուցելը: Ծնողը պետք է զգա, որ իր կարծիքը կարևոր է, ինչպես նաև դպրոցը պետք է հենվի ծնողի վրա: Հարաբերությունները սնուցում են համագործակցությունը, որն այնքան անհրաժեշտ է գործընկերության գոյատևման և երեխաներին դպրոցում հաջողության հասնելու համար:

Դպրոցն ու ծնողը չափտի մոռանան, որ ծնողներն են իրենց երեխաների առաջին ուսուցիչները: Նրանք պարտավոր են դրականորեն շփվել իրենց երեխաների հետ, կառուցել առողջ հարաբերություններ, ծառայել որպես իրենց օրինակ և առաջնորդություն տրամադրել: Ուսումնական գործընթացում գործընկերներ են նաև ծնողները: Նրանք կարող են տեղեկատվություն փոխանակել և կարող են մասնակցել այդ որոշումների կայացմանը: Նրանք կարող են օգնել դպրոցում, և նրանց համագործակցությունն օգնի՝ ձևավորելու այն գործընկերությունները, որոնք օգնում են՝ բավարարելու բոլոր երեխաների կարիքները:





ԾՈՒՆ-ԴՊՐՈՑ ԿԱՊԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնող-դպրոց դրական հաղորդակցությունը օգտակար է և՛ ծնողների, և՛ դպրոցի համար: Ծնողների հետ հաղորդակցվելու և շփվելու ձևը ազդում է ծնողների ներգրավվածության աստիճանի և իրենց երեխաների

րի ուսման որակի վրա: Դպրոցները, որոնք ավելի հաճախ ոչ դրական տեղեկատվություն են փոխանցում ծնողներին սովորողների կատարողականի վերաբերյալ, քան առաջադիմության, խոչընդոտում են ծնողների ներգրավվածությունը՝ ստիպելով նրանց կարծել, որ չեն կարող արդյունավետորեն օգնել իրենց երեխաներին: Ծնողները նաև օգուտ են քաղում իրենց երեխաների կրթության մեջ ներգրավվելուց՝ դպրոցից գաղափարներ ստանալով, թե ինչպես օգնել և աջակցել իրենց երեխաներին և ավելին իմանալ դպրոցի ակադեմիական ծրագրի և դրա աշխատանքի մասին:



Ի՞նչ է ծնողների ներգրավվածությունը:

Դպրոցներում ծնողների ներգրավվածությունը սահմանվում է որպես ծնողների և դպրոցի անձնակազմի համատեղ աշխատանք՝ աջակցելու և բարելավելու երեխաների և դեռահասների ուսումը, զարգացումը և առողջությունը: Դպրոցներում ծնողների ներգրավվածությունը համատեղ պատասխանատվություն է, որով դպրոցները պարտավորվում են ապահովել ծնողների բովանդակալից ներգրավումը դպրոցում, իսկ ծնողները պարտավորվում են ակտիվորեն աջակցել իրենց երեխաների ուսմանը և զարգացմանը: Աշակերտի հաջողության լավագույն կանխատեսումն այն է, թե որքանով են ընտանիքները խրախուսում սովորելը տանը և ներգրավվում են իրենց երեխայի կրթության մեջ: Ուսուցիչները, ովքեր նույնպես կենտրոնանում են ծնողների ներգրավվածության վրա, հաճախ տեսնում են խորը փոփոխություն իրենց դասարաններում: Որքան շատ ծնողներ ներգրավված լինեն իրենց երեխաների կրթության մեջ, այնքան ավելի լավ են դառնում նրանց ամբողջ դասարանի մոտիվացիան, վարքը և գնահատականները:

Ծնողների ներգրավվածության պարագայում ծնողներն ու ուսուցիչները կիսում են պատասխանատվությունը՝ օգնելու երեխաներին սովորել և հասնել կրթական նպատակներին: Ծնողների ներգրավվածությունը տեղի է ունենում, երբ ուսուցիչները ծնողներին ներգրավում են դպրոցական հանդիպումներին կամ միջոցառումներին, իսկ ծնողները կամավոր տրամադրում են իրենց աջակցությունը տանը և դպրոցում: Այս կերպ նրանք պարտավորություն են ստանձնում առաջնահերթություն տալ իրենց երեխայի կրթական նպատակներին, իսկ ուսուցիչները պարտավորվում են լսել և համագործակցության դաշտ տրամադրել:

Ահա հիմնական պատճառները, թե ինչու է կարևոր կապ հաստատել Ձեր երեխայի դպրոցի հետ.



Ձեր երեխայի առաջընթացի մասին տեղեկացված լինելու համար

Որքան ավելի շատ իմանաք այն մասին, թե ինչպես է ձեր երեխան սովորում և ինչ է նա անում դպրոցում, այնքան ավելի լավ պատրաստված կլինեք աջակցելու նրա ակադեմիական հաջողություններին: Պարբերաբար ստուգեք էլեկտրոնային մատյանը, սակայն մի հենվեք միավորների վրա, փոխարենը փորձեք հասկանալ՝ որտեղ է թերացել ձեր երեխան և ինչպես կարող եք օգնել նրան առաջընթացի համար: Ավելի հաճախ կարևորեք նրա հաջողությունները, քան սևեռվեք չստացվածների վրա: Եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ ձեր երեխայի առաջընթացի վերաբերյալ, մի՛ կաշկանդվեք դիմել նրա ուսուցչին: Ուղարկեք նամակներ, նշումներ կամ զանգեր կատարեք՝ ստուգելու և տեսնելու, թե ինչպես են ընթանում գործերը: Պարզեք, թե ձեր երեխայի ուսուցիչը հաղորդակցության ինչպիսի ձևեր է նախընտրում, և դա կպահի հաղորդակցության սահուն ընթացքը:



Ձեր երեխայի ուսուցչի հետ հարաբերություններ հաստատելու համար

Ձեր երեխայի ուսուցչի հետ ամուր հարաբերությունները կարող են օգնել ձեզ ավելի լավ հասկանալու ձեր երեխայի կարիքները և արդյունավետորեն պաշտպանելու դրանք: Հնարավորության դեպքում օգտագործեք ցանկացած հնարավորություն՝ հանդիպելու ձեր երեխայի ուսուցչին: Եթե ուսուցիչն ուղարկել է հարցաթերթիկներ, անպայման լրացրե՛ք այդ հարցումները կամ գնացե՛ք դպրոց: Դուք կարող եք նաև նրանց հակիրճ գրություն ուղարկել՝ ընդգծելով ձեր երեխայի ուժեղ կողմերն ու հետաքրքրությունները և կիսվել այն ամենով, ինչից ձեր երեխայի ուսուցիչը պետք է տեղյակ լինի: Սա հաջող գործընկերության սկիզբն է, ինչպես նաև հեշտացնում է մարտահրավերներին արձագանքելը և խնդիրների լուծումը:



Ձեր երեխայի կրթության մեջ ներգրավվելու համար

Ձեր երեխայի կրթության մեջ ներգրավվելու բազմաթիվ եղանակներ կան, օրինակ՝ դասարանում կամավոր լինելը, դպրոցական միջոցառումներին մասնակցելը կամ ծնողական ժողովներին մասնակցելը: Ներգրավվելը կարող է օգնել ձեզ աջակցելու ձեր երեխայի ուսմանը և համոզվելու, որ նա առավելագույն օգուտ է քաղում իր կրթությունից: Ձեր երեխայի ուսման մեջ ձեր ներգրավվածությունը և՛ ապահովում է իրազեկվածությունը, և՛ պահպանում է սովորողի զգոնությունն ու բարձրացնում է վերջինիս պատասխանատվությունը: Ձեր ներգրավվածությունը միևնույն ժամանակ դյուրացնում է ուսուցչի աշխատանքը. ավելի հեշտ և համակարգված կարելի է աշխատել տեղեկացված ծնողների հետ:



Ծնողական համայնքի անդամ դառնալու համար

Ձեր երեխայի դպրոցի հետ կապը կարող է օգնել ձեզ կապ հաստատել այլ ծնողների հետ և դառնալ ծնողական համայնքի մի մասը: Սա կարող է հատկապես օգտակար լինել, եթե դուք նոր եք այդ տարածքում և չունեք այլ ծանոթներ կամ ընկերներ տարածքում: Բացի այդ ծնողական դրական և կառուցողական շփումները կարող են դրական ազդեցություն ունենալ նույն դասարանում սովորող երեխաների շփումներին: Որքան առողջ և ակտիվ է տվյալ դասարանի ծնողական համայնքը, այնքան և բարձր է տվյալ դասարանի կազմակերպվածությունն ու առաջընթացը:

Այս աշխատանքների կազմակերպման համար նախընտրելի է, որ դպրոցն ունենա ծնողների հետ համագործակցության աշխատանքային պլան:



ԾՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Հ.	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԺԱՄԿԵՏ	ՆՊԱՏԱԿ
1.	Առանձնահատուկ հոգածության կարիք ունեցող երեխաների տվյալների հավաքագրում դասղեկ-մենթորներից	սեպտեմբեր-հոկտեմբեր	խնդիրների վաղաժամ դուրսբերում, միասնական մոտեցումների ճշգրտում
2.	Օրենսդրական փաստաթղթերի հետ ծանոթացում	հոկտեմբեր-նոյեմբեր	Փոխգործակցության միասնական դաշտի ստեղծում
3.	Բաց դռների օրեր	սեպտեմբեր	Ծանոթացում դպրոցի կանոնակարգին, տեսակետների և առաջարկությունների դուրսբերում
4.	Մասնագետ ծնողների կողմից դասերի, սեմինարների վարում	տարվա ընթացքում	Ծնողական համայնքի դերի կարևորում
5.	Դպրոցական անհրաժեշտ կայքերին հասանելիություն	սեպտեմբեր	Իրազեկվածության ապահովում
6.	Ծնողական հարթակի ստեղծում	սեպտեմբեր-հոկտեմբեր	Ծնողական համայնքի կարիքների հետ ծանոթացում և արագ արձագանքում բարձրացրած խնդիրներին
7.	Մասնակցություն դպրոցական հանդեսների կազմակերպմանն ու ներկայացումներին	տարվա ընթացքում	Փոխադարձ պատասխանատվության բարձրացում
8.	Մասնակցություն արտադպրոցական միջոցառումներին, էքսկուրսիաներին, դրանց վարում	տարվա ընթացքում	Փոխադարձ պատասխանատվության բարձրացում
9.	Բարեգործական միջոցառումների կազմակերպում և իրականացում	տարվա ընթացքում	Դպրոցի զարգացման տեսլականի կրում
10.	Ծնողական համալսարանի վարում	տարվա ընթացքում	Մանկավարժական համակազմի զարգացում և իրազեկում
11.	Ծնողական հանդիպումներ	յուրաքանչյուր կիսամյակ	Ծնող-դպրոց-ուսուցիչ կապի ամրապնդում



ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Երեխայի ուսումնառության մեջ առանցքային է սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դերակատարումը, վերջինիս կողմից պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, ինչպես նաև ուսուցչի, դպրոցի ու մանկավարժական այլ աշխատողների հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Այսուհանդերձ ականայից ծնողը սկսում է մեծ դերակատարություն ստանձնել դպրոցում՝ ինքնաբերաբար ձևավորելով ծնողական համայնք, որը միավորում է ծնողների խումբ, ովքեր կամավոր ստանձնում են կրթական հաստատությունում երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման հետ կապված խնդիրների լուծման պատասխանատվությունը:

Դպրոցի ծնողական համայնքն ունի լայն լիազորություններ: Միջոցառումների կազմակերպմանն ու ուսումնական գործընթացին վերահսկելուն օգնելուց բացի, նրանք կարող են մասնակցել դպրոցական զանազան միջոցառումների: Ծնողների ներգրավումն ավելի համակարգված դարձնելու նպատակով ծնողական համայնքից ընտրվում է ծնողական կոմիտե որոշակի ժամկետով, որի կազմը կարող է պարբերաբար փոխվել:

Կարևոր է նշել, որ ծնողկոմիտեն կոչված է օգնելու ուսուցիչներին կազմակերպելու ուսումնական գործընթացը, կապ ապահովելու ծնողական համայնքի մյուս անդամների հետ և ստեղծելու հարմարավետ պայմաններ երեխաների համար: Այնուամենայնիվ, նրանց գործառույթներն ու լիազորությունները կարող են տարբեր լինել՝ կախված կոնկրետ դպրոցից:

Ծնողական համայնքի հետ կապը խիստ կարևոր է. այն ապահովում է դպրոց-տուն փոխհարաբերությունները: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն ուղիղ հաղորդակցման հնարավորություն: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանում առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Բացի նշվածից, ծնողական ժողովներն ապահովում են նաև ծնող-ծնող կապը. չէ՞ որ առանց միմյանց հետ փոխհարաբերվելու չի կարող ամուր համայնք ձևավորվել:



Ծնողական ժողովների կարևորությունն ու վարման էթիկան

Ծնող-ուսուցիչ հանդիպումները առանցքային են բաց հաղորդակցությունը խթանելու, հարաբերություններ կառուցելու և աջակցող կրթական միջավայր ստեղծելու համար: Ծնողական ժողովները սովորաբար լինում են տարին մի քանի անգամ, հանդիպումների տևողությունն էլ կախված է լինում ժողովի նպատակներից կամ օրակարգից:

Ծնողական ժողովը հիանալի հնարավորություն է.

1. ներկայացնելու սովորողի ակադեմիական առաջընթացն ու աճը՝ հիմնված դասարանի դիտարկումների, գնահատումների, թղթապանակների /առկայության դեպքում/ և առաջադրանքների վրա
2. ծնողներից կամ խնամակալներից տեղեկանալու սովորողների ուժեղ կողմերի, կարիքների, վարքագծի և սովորելու ոճերի մասին
3. քննարկելու սովորողների ուսմանը աջակցելու ռազմավարություններ
4. քննարկելու հարցեր, որոնք կարող են ազդել ուսման վրա, ինչպիսիք են սովորողների վարքային և սոցիալական զարգացումը և այլն
5. բացահայտելու և լուծելու սովորողի առջև ծառացած մարտահրավերները
6. հեշտացնելու քննարկումները ծնողների և ուսուցիչների միջև՝ ուսումնասիրելու հարմարեցված ռազմավարություններ, որոնք կարող են կիրառվել ինչպես դպրոցում, այնպես էլ տանը՝ արդյունավետորեն աջակցելով երեխայի աճին և ընդհանուր զարգացմանը:

Ծնողական ժողովները կարող են լինել **դեմ առ դեմ** հանդիպումների ձևաչափով, որտեղ ծնողներն ու ուսուցիչներն անձամբ են հանդիպում, կամ **էլեկտրոնային հանդիպումներ**, որոնք անցկացվում են հեռախոսով կամ տեսաժողովների համակարգերի միջոցով, ինչպիսիք են Microsoft Teams-ը, Zoom-ը, Google Meet-ը և այլն: Դեմ առ դեմ հանդիպումներն ապահովում են անձնական շփում, որն այս ձևաչափի դրական կողմն է: Այս դեպքում պահանջվում է ծնողների ու ուսուցիչների ֆիզիկական ներկայությունը նույն տեղում, ինչն էլ կարող է համարվել թույլ կողմ, քանի որ հաճախ շատ ծնողներ օբյեկտիվ պատճառներով չեն կարողանում ֆիզիկապես ներկա գտնվել ժողովին: Նման դեպքերում կարելի է ճկունորեն կիրառել մյուս ձևաչափը՝ հեռավար հանդիպման հարթակը:

Էլեկտրոնային ժողովները հնարավորություն են ընձեռում և՛ ծնողներին, և՛ ուսուցիչներին՝ տեսաժողովին միանալ իրենց նախընտրած վայրից, որը նաև չի ենթադրում որևէ կոնկրետ ժամի դասասենյակների զբաղեցում, հարմարեցում: Սա այս ձևաչափի ուժեղ կողմն է: Տեսաժողովների պարագայում միակ պայմանը լավ կապի առկայությունն է, մնացյալ աշխատանքների արդյունավետության ապահովումը պայմանավորված է ուսուցչի՝ ժողովին պատրաստվածության մակարդակից:

Այս ձևաչափի թույլ կողմը թերևս ծնող-ուսուցիչ, ծնող-ծնող կենդանի շփման ու տվյալ ուսումնական հաստատությանն ավելի մոտիկից ծանոթ լինելու հնարավորության բացակայությունն է. չէ՞ որ ծնողի համար շատ կարևոր է, թե կրթական ինչպիսի պայմաններում է սովորում իր երեխան, ինչպիսի ենթակառուցվածքներով է ապահովված ուսումնական հաստատությունը, ուստի շատ կարևոր է՝ հեռավարից զատ ապահովել նաև առկա հանդիպումներ:

Ծնողական ժողովների երկու ձևաչափերի դեպքում էլ որևէ դասարանի ծնող-ուսուցիչ հանդիպումները կարելի է կազմակերպել տարբեր ենթաձևաչափերով.



անհատական հանդիպումներ ծնողի և ուսուցչի միջև. Այս ենթաձևաչափն

օգտագործվում է, երբ ծնողները ցանկանում են առանձին հանդիպել տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների հետ: Հանդիպման այս տեսակն առաջարկում է առավելագույն գաղտնիություն և թույլ է տալիս անկաշկանդ ներակայացնել որևէ առարկայի շրջանակում սովորողին վերաբերող ողջ տեղեկատվությունը: Սակայն նմանատիպ հանդիպումները դժվար է պլանավորել, քանի որ դրանք պահանջում են ծանրաբեռնված ժամային գրաֆիկ և դասասենյակների հարմարեցումներ:



հանդիպումներ մեկ ծնողի և մի քանի ուսուցիչների միջև. Ժողովի այս

տեսակը կարող է օգտագործվել, եթե երեխան խնդիրներ ունի բազմաթիվ առարկաներում կամ երբ ծնողը գալիս է դպրոց կանոնավոր պլանավորված ծնող-ուսուցիչ կոնֆերանսի ժամանակից դուրս՝ միանգամից մի քանի ուսուցիչների հանդիպելու համար:



հանդիպումներ մի քանի ծնողների և մեկ ուսուցչի միջև. Սովորաբար այս

ենթաձևաչափով հանդիպումներին մասնակցում են նույն դասարանում սովորող մի քանի սովորողների ծնողները և որևէ առարկայի ուսուցիչ կամ տվյալ դասարանի դասղեկը: Այս տեսակը հիմնականում տարածված է տարրական դասարաններում և համեմատաբար հեշտ է ժամանակացույց կազմելու տեսանկյունից, բայց չունի գաղտնիություն՝ կոնկրետ սովորողների առաջադիմությունը քննարկելու համար:



հանդիպումներ բոլոր ծնողների և դասղեկի /նաև դասավանդող ուսուցիչների/ միջև. Հանդիպումների այս տեսակը ամենատարածվածն է և կիրառվում է հատկապես դասարանի ընդհանրական հարցերի քննարկման նպատակով՝ ծնողական խորհրդի անդամների ընտրություն կատարելու, դպրոցի, տարբեր միջոցառումների, ընդհանուր կանոնակարգերի փոփոխությունների և այլնի մասին ընդհանուր տեղեկություններ ստանալու համար: Այս պարագայում, սակայն, բացակայում է անհրաժեշտ գաղտնիության հարցերի քննարկումը:

Ծնողական ժողովի ժամանակ անհրաժեշտ է օգտագործել դպրոցական միջավայրին հարիր բառանյութ, այս առումով ևս լինել խիստ պահանջատեր՝ հիշեցնելով ծնողներին, որ ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները գործընկերային հիմքերի վրա են ձևավորված, ուստի այն հարգել և պահպանել է պետք: Ժողովը պետք է լինի գործնական, ժողովի արդյունքները պետք է լինեն կառավարելի գործողություններ կամ ռազմավարություններ: Այն պետք է կառուցի գործընկերային հարաբերություններ:

Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը, ուստի ուսուցիչը այն կազմակերպելիս պետք է ուշադրություն դարձնի ինչպես ժողովի ընթացքում, այնպես էլ դրանից առաջ և հետո նախատեսված անելիքներին: Ծնողական ժողովներին վերաբերող աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել 3 հիմնական փուլի.

1. Նախապատրաստական աշխատանքներ

Ժողովից օրեր առաջ պետք է նախապես տեղեկացնել ծնողներին վերջինիս մասին՝ ներկայացնելով օրակարգը: Ելնելով նախատեսված ժողովի նպատակից՝ կարևոր է ժողովից առաջ նյութեր նախապատրաստել՝ ձեռքի տակ ունենալով աշխատանքային պլան կամ աշխատաթերթեր, որտեղ նշված կլինեն սովորողների կամ տվյալ դասարանի ուժեղ կողմերը, կարիքները, ինչպես նաև սոցիալական կամ առհասարակ վարքագծային նշումներ՝ օգնելու առաջնորդվել ժողովի ընթացքում:

Ծնողական ժողովից առնվազն մեկ օր առաջ ցանկալի է պատրաստել և որևէ ձևաչափով ծնողներին ուղարկել հիշեցման գրություն, ուր ժողովի մանրամասներից զատ կառաջարկվի անցնել ուսուցչի կողմից նախապես պատրաստված հղումով /Google forms կամ Teams forms/՝ հարցեր տալու համար:

Օրինակ՝

Հարգելի՛ ծնող/խնամակալ, եթե օրակարգից զատ ունեք այլ հարցեր, որոնց կուզենայիք, որ մենք անդրադառնանք առաջիկա ժողովի ընթացքում, խնդրում ենք սեղմել այս [հղման](#) վրա՝ ձևակերպելու ձեր հարցը(երը):

Եթե որևէ սովորողի կամ ընդհանուր դասարանի հետ կապված խնդիր կա, ապա այդ մասին ծնողին կամ ծնողներին նախապես պետք է տեղեկացնել. եթե ծնողը գիտի որևէ մտահոգության մասին ժողովից առաջ, հավանական է, որ և՛ նա, և՛ ուսուցիչը ավելի լավ պատրաստված կլինեն ժողովի ընթացքում հնարավոր լուծումները քննարկելու համար:

Այս փուլը թեև նախապատրաստական է, սակայն այստեղ էլ աշխատանքները շատ են և հենց այս փուլի արդյունավետությունից է կախված հետագա աշխատանքների որակը: Այստեղ պետք է պատրաստ լինել փոփոխությունների և ճկունություն ցուցաբերել. շատ ծնողների գուցե ժողովի ժամը կամ օրն ու ձևաչափը հարմար չլինեն, ուստի անհրաժեշտ է համագործակցել նրանցից յուրաքանչյուրի հետ և փոխհամաձայնեցնել հանդիպման մանրամասները:

Ժողովի ընթացքում կարևոր է ստեղծել հյուրընկալ միջավայր՝ դասարանը դարձնելով հարմարավետ ծնողների համար (ժողովն անցկացնել այնպիսի դասասենյակում կամ սրահում, որը կունենա մեծահասակների համար նախատեսված սեղաններ և աթոռներ: Եթե ծնողները պետք է իրենց հետ տանեն իրենց փոքր երեխային, ապա պետք է առանձնացրել մի տարածք՝ խաղերով, մաքուր թերթիկներով ու մատիտներով կամ այլ հետաքրքիր միջոցներով): Եթե այսքանը հաջողվել է, ապա առջևում է 2-րդ փուլը:

2. Հանդիպում-քննարկում.

Ժողովի սկզբում անհրաժեշտ է ծնողներին ներկայացնել աշակերտների ակադեմիական առաջադիմության և աճի մասին տեղեկություն և թե ինչպես է նրանց երեխան դրսևորվում դպրոցական միջավայրում՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ բոլոր ծնողները հպարտանում են իրենց երեխաներով և բնականաբար ցանկանում են լսել իրենց երեխայի ուժեղ կողմերի, ինչպես նաև մարտահրավերների մասին, այնպես որ պետք է անպայման քննարկել երկուսն էլ, բայց սկսել դրական կողմերից և ծանոթացնել երեխայի կարողություններին ու հմտություններին կամ դասարանի մակարդակների՝ օգտագործելով ցուցադրական աշխատանքի օրինակներ կամ գրավոր աշխատանքների արդյունքներ: Հնարավոր է, որ քննարկումները շեղվեն ժողովի ժամանակ, այնպես որ պետք է փորձել սահմանափակել բոլոր խոսակցությունները՝ խոսելով կոնկրետ տվյալ հարցի մասին և քննարկելով, թե ինչպես աջակցել սովորողին:

Շատ ծնողներ կցանկանան իմանալ, թե ինչպես են իրենց երեխաների առաջադիմությունը իրենց հասակակիցների հետ համեմատության համատեքստում, բայց պետք է հիշեցնել նրանց, որ քննարկվում է իրենց երեխայի անհատական ուսուցման մակարդակը՝ միևնույն ժամանակ տեղեկացնելով նրանց դասարանի մակարդակի ակնկալիքների և այդ համատեքստում յուրաքանչյուր սովորողի գործունեության մասին:

Պետք է հարցեր տալ ծնողներին կամ խնամակալներին և ուշադիր ու հետաքրքրությամբ լսել նրանց կարծիքը սովորողների ուժեղ կողմերի, կարիքների և սովորելու ոճերի, ինչպես նաև նրանց հույսերի և երազանքների մասին: Հարցերը պետք է լինեն պարզ, միևնույն ժամանակ՝ կարևոր, որոնք կարող են շատ տեղեկություններ տալ և օգտակար լինել դասարանում: Կարելի է հանդես գալ առաջարկություններով՝ տանը ուսուցմանն աջակցելու նպատակով: Ծնողական ժողովների ընթացքում կատարած արձանագրումների և խնդիրների բարձրաձայնման հատվածում կարող են ներկա գտնվել նաև այլ ուսուցիչներ, հոգեբաններ: Այսպես քննարկումն ավելի արդյունավետ և կառուցողական բնույթ կարող է կրել:

3. Եզրափակում.

Ժողովի ավարտին պետք է հստակեցնել ժողովի օրակարգային հարցերից բխող հետագա անելիքները, ըստ անհրաժեշտության՝ աշխատանքի բաժանումը և պարզապես շնորհակալություն է պետք հայտնել ծնողներին կամ երեխայի խնամակալին՝ հիշեցնելով նրանց ծնողական ժողովի ընթացքում կայացած որոշումների և առաջիկայում անելիքների մասին: Ժողովին չներկայացած ծնողներին կարելի է առաջարկել հաղորդակցվելու այլընտրանքային ուղիներ:

Ժողովի ընթացքը կարելի է արձանագրել ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտության դեպքում կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:





Ծնողավարությունը ժողովրդավար հասարակությունում

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է ժողովրդավարական ծնողավարությունը:

Ժողովրդավարական ծնողավարությունը ծնողի և երեխայի միջև համագործակցային հարաբերություն է, որտեղ ծնողները ոչ միայն ուղղորդում են, այլև տրամադրում են սեփական ընտրություն կատարելու հնարավորություն:

Ժողովրդավար ծնողը ծնողավարման այնպիսի մոտեցում ունեցող անձ է, որը խրախուսում է երեխայի մասնակցությունը ընտանիքի որոշումներում, լսում և կարևորում է երեխայի կարծիքը և հարգում նրա իրավունքները՝ միաժամանակ պահպանելով առողջ սահմաններ: Ժողովրդավար ծնողը ոչ միայն հետաքրքրված է երեխայի դպրոցական առաջընթացով, այլև ձգտում է խորապես ներգրավվել կրթական գործընթացում՝ ստեղծելով գործընկերային և վստահելի կապ դպրոցի հետ: Նրանք նպաստում են երեխայի սոցիալական, հուզական և մտավոր զարգացմանը՝ ապահովելով աջակցող, բայց նաև պատասխանատու միջավայր:

2. Ժողովրդավարական սկզբունքները ծնողավարության մեջ.

Ժողովրդավարությունը ծնողավարության կարևոր նախապայման

Ժողովրդավարության ամենակարևոր սկզբունքներից մեկն է անհատների կարծիքների և ազատության հարգումը: Ծնողները կարող են երեխաներին համարել գործընկերներ՝ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր երեխա ունի իր կարծիքը, որը պետք է լսվի և հաշվի առնվի: Ժողովրդավարական ծնողավարությունը ենթադրում է, որ երեխաներն ունեն իրավունք՝ իրենց կարծիքը, զգացմունքները և մտքերն արտահայտելու, ինչը թույլ է տալիս ստեղծել ավելի առողջ հարաբերություններ ընտանիքում:

Այս սկզբունքի շրջանակում կարելի է քննարկել, թե ինչպես երեխաներին կարող են ներգրավվել ընտանեկան որոշումների մեջ՝ սկսած պարզ հարցերից, ինչպիսիք են ընտանեկան արձակուրդների ընտրությունը կամ ընտանեկան միջոցառումների կազմակերպումը, մինչև ավելի մեծ հարցեր՝ օրինակ, մեծ համատեղ ընտանիքային որոշումներ:

Բաց երկխոսության ու լսելու կարևորությունը

Ժողովրդավարության մեջ կարևոր է ազատության, հավասարության և փոխհարգանքի սկզբունքների իրականացմանը: Այս դերը կրում է երկխոսությունը՝ բաց և ազնիվ հաղորդակցություն՝ ծնողների ու երեխաների միջև: Ժողովրդավարական ծնողները չեն մոռանում լսել իրենց երեխաներին, հասկանալ նրանց մտահոգությունները, և դա նույնպես պետք է արտացոլվի ընտանեկան միջավայրում: Սա չի նշանակում, որ երեխաներին պետք է թույլատրվի լիակատար ինքնուրույնություն, բայց նրանց մասնակցությունը որոշումների կայացմանը հանգեցնում է ավելի լավ արդյունքների և ամրացնում է ընտանեկան կապերը:

Ժողովրդավարական ծնողավարությունը ենթադրում է, որ ծնողները չեն գտնվում «ամենակարող» դիրքում, այլ պատրաստ են լսել երեխայի կարծիքը և հասկանալ, թե ինչն է կարևոր նրա համար: Երեխայի կարծիքի լսումը օգնում է նրան հասկանալ, որ նրա խոսքն արժեքավոր է, ինչը նաև նպաստում է նրա ինքնավստահության և անկախության զարգացմանը:

Համագործակցություն ու փոխադարձ հարգանք

Ժողովրդավարական սկզբունքների հիմնական բաղադրիչներից մեկը փոխադարձ հարգանքն է: Ծնողները պետք է երեխաներին ոչ միայն սովորեցնեն իրենց իրավունքները պաշտպանել, այլև հարգել մյուսների կարծիքները, զգացմունքներն ու իրավունքները: Այս մոտեցումը ձևավորում է այնպիսի միջավայր, որտեղ փոխադարձ հարգանքն ու աջակցությունը նախանշում են հարաբերությունների կառուցման հիմնական սկզբունքները:

Ժողովրդավար ծնողը հասկանում է, որ ընտանիքը պետք է լինի միասնության, բայց նաև անհատականության հարգման վրա հիմնված: Սա նշանակում է, որ ընտանեկան համերաշխությունը չի կարող պահանջել, որ բոլորը լինեն նույնը: Ծնողը կարող է աջակցել երեխայի զարգացող ինքնությունը՝ միևնույն ժամանակ դրսևորելով խմբային պատասխանատվություն:

Անհատական ազատություն և պատասխանատվություն

Մի կողմից, ժողովրդավարական ծնողավարությունը ենթադրում է, որ երեխաներին պետք է տրվի ազատություն՝ ընտրելու իրենց գործողությունները: Սակայն, մյուս կողմից, այդ ազատությունը պետք է ուղեկցվի պատասխանատվությամբ, ինչը երեխաներին սովորեցնում է, որ ցանկացած գործողություն ունի հետևանքներ: Ծնողները օգնում են երեխաներին հասկանալ ազատության և պատասխանատվության սահմանները՝ նրանց ցույց տալով, որ իրենց որոշումները ազդում են ոչ միայն իրենց, այլ նաև ընտանիքի մյուս անդամների վրա:

Չնայած ժողովրդավարական մոտեցումը նշում է երեխաների մասնակցությունը որոշումների կայացմանը, ծնողները պետք է դրսևորեն առաջնորդություն՝ ապահովելու սահմաններ ու կանոններ, որոնք պետք է հարգվեն: Այս սահմանները պետք է լինեն բացատրելի և հասկանալի երեխային՝ դառնալով համատեղ հասկացված ու ընդունված:

Կարծիքների բազմազանություն և կարծիքների հարգում

Ժողովրդավարական մոտեցումը ենթադրում է, որ ընտանիքում յուրաքանչյուր անդամ իրավունք ունի արտահայտելու իր տեսակետները՝ առանց վախի, որ դրանք կվերաբերվեն որպես «սխալ» կամ «ոչ ընդունելի»: Դրանով երեխաները սովորում են, որ յուրաքանչյուրը կարող է ունենալ տարբեր կարծիքներ, բայց այն չի նշանակում հակամարտություն կամ անհաշտություն:

Ծնողներն, ովքեր հետևում են ժողովրդավարական մոտեցմանը, երեխաներին խրախուսում են քննարկել և քննադատել իրենց մոտեցումները, սովորեցնել նրանց բացահայտել տարբեր տեսակետներ և արտահայտել իրենց մտածելակերպը: Սա նպաստում է երեխայի ինտելեկտուալ և սոցիալական զարգացմանը:

Ժողովրդավարական կրթություն՝ երեխայի ինքնուրույնության զարգացման համար

Ժողովրդավարական մոտեցում ունեցող ծնողները սովորեցնում են իրենց երեխաներին ինքնուրույնություն՝ զարգացնելով նրանց որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ստանձնելու ունակությունները: Այս մոտեցումը ոչ միայն տալիս է երեխաներին հնարավորություն ունենալ սեփական կարծիք, այլ նաև նպաստում է նրանց գիտակցության և անձնական պատասխանատվության զարգացմանը:

Երեխաները, որոնք մեծանում են ժողովրդավարական ծնողավարման ազդեցության տակ, սովորաբար դառնում են ինքնավստահ, ինքնուրույն, պատասխանատու, հարգալից և ակտիվ քաղաքացի, կարող են արդյունավետ շփվել այլոց հետ, կարողանում են վերահսկել իրենց հույզերը և տրամաբանական որոշումներ կայացնել՝ հաշվի առնելով մյուսների կարծիքը, արտահայտել կարծիք և լիարժեքորեն մասնակցել հասարակական կյանքին:

3. Ժողովրդավարական մոտեցումները ծնողավարության և կրթության

մեջ

Ինչպես ընտանիքում, այնպես էլ դպրոցում, ժողովրդավարական մոտեցումը հիմնվում է ազատության և պատասխանատվության գաղափարների վրա: Շատ կարևոր է, որ երեխաները գիտակցեն իրենց իրավունքները, բայց նաև ունենան պարտավորություններ՝ ոչ միայն իրենց, այլ նաև մյուսների նկատմամբ:

Ժողովրդավարական կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է երկխոսության խթանումը՝ թե ընտանիքում, թե դպրոցում: Ծնողները պետք է երեխաներին սովորեցնեն, որ նրանց կարծիքը կարևոր է, և այդ կարծիքը պետք է արտահայտվի ոչ միայն խոսքի միջոցով, այլ նաև գործողությունների: Դպրոցներում պետք է կազմակերպվեն քննարկումներ, որոնք կօգնեն երեխաներին հասկանալ, թե ինչպես կարող են իրենց մտքերն ու զգացմունքները հաղորդակցել ուրիշներին՝ առանց ստիպելու կամ վախեցնելու:

Ժողովրդավարական մոտեցումները նաև նշանակում են, որ պետք է խթանել ընդունելու և ներառականության մշակույթը: Սա նշանակում է, որ երեխաները պետք է հասկանան, որ մարդիկ տարբեր են՝ ի դեմս ազգության, կրոնի, մշակույթի և սոցիալական կարգավիճակի: Դպրոցն ու ընտանիքը պետք է զարգացնեն երեխաների փոխհարաբերությունները՝ հարգելով տարբերությունը և տարբեր մարդկանց իրավունքը:

Ժողովրդավարական մոտեցումները պահանջում են, որ ծնողները ակտիվորեն ներգրավված լինեն իրենց երեխաների կրթության մեջ: Սա չի սահմանափակվում միայն երեխայի դպրոցական հաջողությունները քննարկելով, այլ նաև ընտանիքի և դպրոցի միջև երկխոսություն հաստատելով: Ծնողներն ու ուսուցիչները պետք է համագործակցեն, որպեսզի միասին կազմակերպեն այնպիսի միջավայր, որտեղ երեխան կարող է բացահայտել իր ուժեղ կողմերը՝ հաշվի առնելով նաև իր թույլ կողմերը:

Դպրոցներում ծնողական խորհուրդները կամ հանդիպումները կարող են հնարավորություն տալ ծնողներին՝ իրենց կարծիքները հայտնելու ուսումնական ծրագրերի և դպրոցի գործունեության վերաբերյալ: Ժողովրդավարական դպրոցում այսպիսի մասնակցությունը չափազանց կարևոր է, քանի որ դա բարելավում է ընտանիքի և դպրոցի հարաբերությունները, ինչպես նաև դպրոցական միջավայրի մշակույթը:

Ծնողներն ու ուսուցիչները պետք է ունենան զրույցներ, փոխգործակցեն, միասնաբար ձևավորելով երեխայի դաստիարակության ռազմավարություն՝ համախոհությամբ ու զուտ մանկավարժական հիմունքներով: Ժողովրդավարական կրթությունն ընդգրկում է ծնողների մասնակցությունը մանկավարժական աշխատանքներում, ինչը կարևոր է երեխայի հաջողության համար:

Ժողովրդավարական մոտեցումներում կարևոր է նաև երեխայի իրավունքների ճանաչումը, որը ներառում է երեխայի ազատությունները և դրանց սահմանները: Դպրոցներում և ընտանիքներում պետք է բացատրվի, թե ինչ են երեխաների իրավունքները, ինչպես նաև այդ իրավունքները պետք է պաշտպանվեն: Սա կարևոր է, որպեսզի

երեխաները դառնան ինքնություն և պատասխանատու քաղաքացի, ովքեր գիտեն, թե ինչպես պաշտպանել իրենց իրավունքները, ինչպես նաև՝ ուրիշների:

Ժողովրդավարական ծնողավարությունը ենթադրում է, որ ծնողներն ունեն երեխային ուղղորդելու, ոչ թե «վերստին կառավարելու» դեր: Դրանք դաստիարակության սկզբունքներ են, որոնք միտված են երեխային ինքնություն որոշումներ կայացնելու հնարավորություններ տալուն, միաժամանակ նրանց սովորեցնելու, թե ինչ է նշանակում պատասխանատվություն:

Ծնողներն պետք է ունենան այնպիսի մոտեցում, որտեղ երեխաներին տալիս են ընտրություն՝ որոշակի հարցերում, բայց սահմանափակումներ են կիրառվում, երբ հարցը վերաբերում է անվտանգությանը, բարոյականությանը կամ ընտանեկան շահերի պաշտպանությանը:

4. Խոսքի մշակույթի դերը ծնողավարության մեջ

Խոսքի մշակույթը կարևոր դեր է խաղում երեխայի հուզական, մտավոր և սոցիալական զարգացման վրա: Ծնողի խոսքը ձևավորում է երեխայի ինքնագնահատականը, սոցիալական հմտությունները և հաղորդակցման ոճը:

Խոսքը ծնողավարման հիմնական գործիքներից մեկն է, որը կարող է լինել թե՛ դրական ազդեցության միջոց, թե՛ բացասական՝ կախված նրա կիրառման ձևից: Խոսքի մշակույթն ազդում է երեխայի հոգեբանական վիճակի, վարքի և անհատականության զարգացման վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ խրախուսող և հարգալից խոսքը նպաստում է երեխայի ինքնավստահության և սոցիալական հմտությունների զարգացմանը: Մինչդեռ վիրավորական և նվաստացնող խոսքը կարող է առաջացնել հուզական անկայունություն և վարքային խնդիրներ:

Դրական խոսքի օրինակներ են.

- 😊 «Ես հավատում եմ, որ դու կկարողանաս»
- 😊 «Դու մեծ առաջընթաց ես գրանցել»
- 😊 «Ի՜նչ հետաքրքիր մոտեցում ունես»

Վնասակար խոսքի օրինակներ են.

- 😞 «Դու երբեք չես կարողանում ճիշտ կատարել առաջադրանքները»
- 😞 «Դու շատ վատն ես»
- 😞 «Եթե այսպես շարունակես, ոչինչ չես դառնա»

Ծնողավարության մեջ կարևոր է ոչ միայն խոսքի բովանդակությունը, այլև հաղորդակցման ձևը: Վեճերի ընթացքում ծնողները հաճախ բարձրացնում են ձայնը կամ օգտագործում վիրավորական արտահայտություններ, որոնք կարող են երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենալ երեխայի հուզական աշխարհի վրա:

Խորհուրդներ՝ կոնֆլիկտներից խուսափելու համար.

- Խոսել հանգիստ տոնով,
- Երեխայի կարծիքը լսել առանց ընդհատելու,
- Խնդիրները քննարկել «Ես»-հայտարարություններով, օրինակ՝ «Ես զգում եմ, որ...»՝ մեղադրանքների փոխարեն:
- Սահմանել փոխադարձ հարգանքի կանոններ ընտանիքում:

Բազմաթիվ հոգեբանական հետազոտություններ հաստատում են, որ խրախուսող խոսքը դրական ազդեցություն ունի երեխայի մոտիվացիայի և վարքի վրա: Դրական խոսքը պետք է լինի հստակ, անկեղծ և կոնկրետ:

Խրախուսման օրինակներ են.

- 😊 «Ես տեսնում եմ, որ դու շատ ես ջանում, և դա հիասքանչ է»
- 😊 «Քո ջանքերն արդեն արդյունք են տալիս, շարունակիր նույն կերպ»
- 😊 «Ես հպարտ եմ քեզանով»

Պեպք է խուսափել

- 😞 Չափազանցված գովեստներ շոայլելուց, որոնք երեխան չի ընկալում որպես անկեղծ
- 😞 Երեխաներին համեմատել իրար հետ, օրինակ՝ «Տես, թե ինչ լավն է քո ընկերը, դու էլ պետք է այդպես անես»:

Ծնողները կարող են կատարել հետևյալ քայլերը՝ խոսքի մշակույթ ձևավորելու համար.

1. *Օրինակ ծառայել* – երեխաները կրկնօրինակում են ծնողների խոսքը և վարքը: Երեխաները սովորում են ծնողների վարքագծից և խոսքից: Եթե նրանք լսում են աջակցող և դրական խոսք, նրանք հակված են նույն կերպ վարվել ուրիշների հետ:
2. *Կիրառել ակտիվ լսում* – երեխայի հետ երկխոսելիս կենտրոնանալ նրա ասածի վրա, չընդհատել և հստակ արձագանքել:
3. *Սպեղծել դրական միջավայր* – խրախուսել սիրալիր ու բաց հաղորդակցությունը: Դրական խոսքն օգնում է երեխային զարգացնել էմոցիաների կարգավորման հմտություններ, ինչը շատ կարևոր է սոցիալական հարաբերություններում:
4. *Խուսափել մեղադրանքներից* – կենտրոնանալ խնդիրների լուծման վրա:
5. *Շեշտադրել երեխայի ուժեղ կողմերը* – օգնել երեխային զարգացնելու ինքնավստահություն՝ հստակ ու անկեղծ խոսքի միջոցով:

Հարգալից հաղորդակցությունը ձևավորում է վստահության միջավայր ընտանիքում: Ծնողները պետք է ապահովեն երեխայի խոսքի ազատությունը՝ խրախուսելով նրան արտահայտել իր կարծիքը:

Խոսքի մշակույթը ծնողավարման մեջ ազդում է ոչ միայն երեխայի հուզական վիճակի, այլև նրա հաղորդակցման հմտությունների զարգացման վրա: Դրական, խրախուսող խոսքը նպաստում է երեխայի ինքնավստահության, սոցիալական ինտեգրման և հուզական կայունության ձևավորմանը: Ծնողները պետք է գիտակցեն, որ իրենց խոսքը ոչ միայն դաստիարակչական գործիք է, այլև երեխայի ապագա հարաբերությունների հիմքը: Այն կարող է ձևավորել հոգեբանորեն առողջ, վստահ ու ազատ հաղորդակցվող անձնավորություն:

5. «Երեխաների իրավունքները և Ժողովրդավարությունը. ի՞նչ դեր ունի ծնողավարությունը

Երեխայի իրավունքները առաջին անգամ միջազգայինորեն ճանաչվել են ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայով (1989), որն ամբողջ աշխարհում ընդունվեց որպես երեխաների իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունք: Այդ իրավունքները ներառում են՝ կյանքի իրավունք, կրթություն, առողջություն, ազատություն դավանանքից, կարծիքի արտահայտում, մասնակցություն հասարակական կյանքին, և այլն: Այս և այլ իրավունքներ պետք է պաշտպանվեն ոչ միայն պետության, այլ նաև ընտանիքի կողմից, ու հատկապես՝ ծնողների միջոցով:

Ժողովրդավարության սկզբունքները, ինչպիսիք են հավասարությունը, արդարությունը, ազատությունը և մասնակցությունը, անմիջականորեն կապված են երեխաների իրավունքների պաշտպանության հետ: Ժողովրդավարական հասարակություններում երեխաներին որպես անձիք ճանաչվում են իրենց իրավունքներով՝ սկսած ընտանիքից մինչև պետական մակարդակ:

Ծնողները պետք է լինեն առաջին հերթին երեխաների իրավունքների պաշտպաններ: Նրանց դերը ոչ միայն երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման մեջ է, այլև երեխաներին սովորեցնելու մեջ՝ ինչպես ճանաչել ու պաշտպանել իրենց իրավունքները:

Կարծիքները տարբեր երկրների ու տարածաշրջանների միջև տարբեր են, թե ինչ-պիսի իրավական և բարոյական դեր ունեն ծնողները երեխաների իրավունքների պաշտպանության մեջ: Օրինակ՝ ԱՄՆ-ում և Եվրոպայում երեխաներին կարող են ակտիվորեն ներգրավել որոշումների կայացման մեջ, երբ խոսքը վերաբերում է կրթության, առողջության և ընտանեկան կյանքի հարցերին:

Ծնողները կարող են կիրառել ժողովրդավարության սկզբունքները՝ երեխաներին դասավանդելով իրենց իրավունքները: Դա կարող է տեղի ունենալ ոչ միայն հղումներ տալով իրավաբանական փաստաթղթերին, այլև մարդկային իրավունքների, արժանապատվության և համատեղ ապրելու հնարավորությունների մասին կրթությամբ:

Երեխաների իրավունքները պետք է լինեն ոչ միայն պաշտպանված, այլև սահմանափակված որոշակի շրջանակներում, որոնք անհրաժեշտ են երեխայի անվտանգության և բարեկեցության համար: Ժողովրդավարական մոտեցումը ենթադրում է, որ երեխաներին պետք է տրվի որոշակի ազատություն՝ ընտրելու իրենց գործողությունները և նախասիրությունները, բայց այդ ազատությունն, իհարկե, պետք է լինի պատասխանատվության հետ համատեղ:

Ծնողները պետք է մանկավարժական մոտեցումներ կիրառեն, որոնք միաժամանակ կպաշտպանեն երեխայի իրավունքները, սակայն ձևավորեն նաև խելամիտ սահմանափակումներ և պատասխանատվություն:

Ծնողները կարող են կազմակերպել ընտանիքի ներսում ժողովրդավարական համակարգ, որտեղ երեխաները ունեն իրենց ձայնը, իրավունքները և պարտավորությունները: Այս մոտեցումը դիտարկում է ընտանիքի դերը որպես նախադպրոցական հասարակություն, որտեղ երեխաներին սովորեցնում են լինել ակտիվ և պատասխանատու քաղաքացիներ:

Ծնողները պետք է ունենան բաց դռների քաղաքականություն, լսելու և երեխայի կարծիքների ընդունելու պատրաստակամություն: Երեխայի մասնակցությունը ընտանեկան որոշումների մեջ կարող է հանգեցնել այն բանին, որ նա ընդունի ավելի մեծ պատասխանատվություն իր գործողությունների համար և ավելի լավ հասկանա իր իրավունքները:

6. Ինչպե՞ս կարող է դպրոցը նպաստել ժողովրդավար ծնողավարության զարգացմանը

Դպրոցը կարող է կարևոր դեր խաղալ ժողովրդավարական ծնողավարության զարգացման մեջ՝ ստեղծելով միջավայր, որտեղ ծնողները կարող են սովորել, կիրառել և զարգացնել ժողովրդավարական սկզբունքները՝ իրենց երեխաների հետ փոխհարաբերություններում: Ահա մի քանի ուղիներ, թե ինչպես դպրոցը կարող է աջակցել ժողովրդավար ծնողավարությանը.

1. *Կրթական ծրագրերի կազմակերպում*
2. *Ծնողների հետ համագործակցության խրախուսում*
3. *Բաց դռների քաղաքականություն և շփման ազատ միջավայր*
4. *Խնդիրների լուծման համար համատեղ քննարկումների կազմակերպում*
5. *Ծնողական ակումբներ և խմբեր*
6. *Հեղադարձ կապի պարբերական տրամադրում*
7. *Ուսումնական միջոցներ և ձեռնարկներ*
8. *Աջակցություն անհատական խորհրդարկության միջոցով*
9. *Մոդելի և օրինակների ներկայացում*



Կրթական ծրագրերի կազմակերպում - Դպրոցը կարող է կազմակերպել սեմինարներ, քննարկումներ և կրթական դասընթացներ ծնողների համար, որոնք կկենտրոնանան ժողովրդավարական ծնողավարման սկզբունքների վրա: Այս ծրագրերը կարող են ներառել թեմաներ, ինչպիսիք են երեխայի ծայնի լսումը, խնդիրների լուծման հմտությունների զարգացումը և երեխաների հետ առողջ շփման ձևերը:



Ծնողների հետ համագործակցության խրախուսում - Ժողովրդավարական դպրոցի մոդելը կարող է խրախուսել ծնողներին ակտիվ մասնակցել դպրոցական միջոցառումներին և որոշումների կայացման գործընթացներին, ինչպիսիք են դպրոցական խորհուրդները, համատեղ քննարկումները և ուսուցողական ծրագրերի կազմումը: Սա հնարավորություն է տալիս ծնողներին ներգրավվել դպրոցի կյանքում և իրենց երեխայի կրթության մեջ:



Բաց դռների քաղաքականություն և շփման ազատ միջավայր - Դպրոցը կարող է խրախուսել բաց շփումը ծնողների, ուսուցիչների և դպրոցի ադմինիստրացիայի միջև: Բաց դռների քաղաքականությունը, որտեղ ծնողներն ունեն ազատ շփվելու և իրենց հարցերն ու առաջարկները ներկայացնելու հնարավորություն, կօգնի նրանց զգալ, որ իրենք արժեքավոր են դպրոցի և իրենց երեխաների կրթության համար:

 **խնդիրների լուծման համար համապեղ քննարկումների կազմակերպում** - Դպրոցը կարող է կազմակերպել խնդիրների լուծման կլոր սեղան քննարկումներ ծնողների հետ՝ քննարկելու նրանց երեխաների կրթական և սոցիալական հարցերը: Սա կնպաստի ծնողների և ուսուցիչների միջև փոխադարձ հասկացողության ամրապնդմանը, ինչպես նաև ծնողներին կտրվորեցնի ժողովրդավարական ձևով լուծել խնդիրները:

 **Ծնողական ակումբներ և խմբեր** - Դպրոցը կարող է կազմակերպել ծնողական ակումբներ կամ խմբեր, որտեղ ծնողները կարող են միմյանց հետ կիսվել իրենց փորձով, խորհրդատվություն ստանալ և քննարկել ժողովրդավարական ծնողավարման մոտեցումները: Նման խմբերը հնարավորություն կտան ծնողներին սովորելու միմյանցից և կիրառելու տարբեր մոտեցումներ:

 **Հետադարձ կապի պարբերական տրամադրում** - Դպրոցը կարող է մշակել արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմներ, որտեղ ուսուցիչները և ծնողները պարբերաբար կքննարկեն երեխայի առաջընթացը: Այս քննարկումներն իրականացվում են ժողովրդավարական միջավայրում՝ յուրաքանչյուր կողմի կարծիքն ու առաջարկությունները հաշվի առնելով: Հետադարձ կապը նպաստում է ծնողների մոտ ժողովրդավարական մոտեցումների ամրապնդմանը:

 **Ուսումնական միջոցներ և ձեռնարկներ** - Դպրոցը կարող է տրամադրել ուսումնական նյութեր, ձեռնարկներ և այլ ռեսուրսներ ծնողներին՝ ժողովրդավարական ծնողավարման սկզբունքների վերաբերյալ: Այս նյութերը կարող են ներառել խորհուրդներ, դեպքերից օրինակներ և գործնական խորհուրդներ՝ ինչպես արդյունավետ և ժողովրդավարական ձևով դաստիարակել երեխային:

 **Աջակցություն անհատական խորհրդատվության միջոցով** - Դպրոցը կարող է տրամադրել անհատական խորհրդատվություն ծնողներին, որտեղ հոգեբանները կամ փորձառու մանկավարժները կարող են օգնել նրանց կիրառելու ժողովրդավարական սկզբունքները ընտանիքում: Այս մոտեցումը կարող է լինել հատկապես օգտակար այն ծնողների համար, որոնք նախկինում ժողովրդավարական ծնողավարման փորձ չունեն:

 **Մոդելի և օրինակների ներկայացում** - Դպրոցը կարող է լինել ժողովրդավարական արժեքների մոդել՝ ցուցադրելով փոխադարձ հարգանքի, լսելու, համագործակցության և թիմային աշխատանքի արժեքները: Ծնողները, տեսնելով այդպիսի օրինակ, կարող են կիրառել դա իրենց ընտանեկան միջավայրներում:

Այս միջոցառումներն ու նախաձեռնությունները կարող են նպաստել ոչ միայն ծնողների գիտելիքների և հմտությունների զարգացմանը, այլև դպրոցի և ընտանիքի միջև ամուր և աջակցող հարաբերությունների ստեղծմանը, ինչը կնպաստի երեխայի կրթական և սոցիալական զարգացմանը:

7. Ժողովրդավարական ծնողավարության խնդիրները Հայաստանում

Հայաստանում ժողովրդավարական ծնողավարությունը, որպես հասարակական և կրթական մոտեցում, հանդիպում է մի քանի մարտահրավերների, որոնք կապված են ինչպես մշակութային, այնպես էլ սոցիալական, տնտեսական ու իրավական համակարգերի հետ: Այս խնդիրները կարող են սահմանափակել ժողովրդավարական արժեքների տարածումը ծնողների կողմից և դժվարացնել դրանց ներդրումը երեխաների դաստիարակության մեջ: Ահա մի քանի հիմնական խնդիրներ՝

1) Պատմական և մշակութային ֆոնի ազդեցությունը

Հայաստանում, ինչպես նաև այլ մի շարք երկրներում, ժողովրդավարական մտածողությունը հաճախ ի հայտ է գալիս որպես նոր երևույթ, որի մշակույթը դեռ ամբողջովին ձևավորված չէ: Դարերի ընթացքում ձևավորված ավանդական ընտանիքային ու հասարակական արժեքները ազդում են ծնողների և երեխաների հարաբերությունների վրա: Դրանք սովորաբար դրսևորվում են հստակ կերպով հաստատված հիերարխիական կառուցվածքում, որտեղ ծնողները իրականացնում են իրենց իշխանությունը՝ առանց լսելու երեխաների կարծիքները կամ մասնակցության հնարավորություն տալու նրանց որոշումների ընդունման գործընթացում:

2) Ծնողների տեղեկացվածության բացը

Ժողովրդավարական ծնողավարությունը ենթադրում է ծնողների բարձր տեղեկացվածություն և պատրաստվածություն՝ բացատրելու և հիմնավորելու իրենց որոշումները: Սակայն Հայաստանում ծնողներն հաճախ չեն ունենում անհրաժեշտ կրթական ռեսուրսներ, որպեսզի իրենց երեխաներին ուսուցանեն ժողովրդավարական արժեքներ: Շատ ծնողներ չեն պատկերացնում, թե ինչպես պետք է տեղեկացնել երեխաներին ազատության, իրավունքի և պատասխանատվության մասին, քանի որ նրանք հիմնականում ավանդական մոտեցումներով են դաստիարակվել: Սա կարող է հանգեցնել որոշումների կայացման մեջ մենաշնորհային մոտեցման:

3) Սոցիալական և տնտեսական ճնշումներ

Հայաստանում տնտեսական դժվարությունները կարող են անդրադառնալ ծնողների և երեխաների հարաբերությունների վրա, քանի որ հաճախ ծնողները ստիպված են կենտրոնանալ հիմնական ֆինանսական խնդիրների վրա՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու երեխայի հոգևոր ու մտավոր զարգացմանը: Սոցիալական ճնշումները՝ մասնավորապես անբավարար աշխատանքային պայմանները, աշխատուժի արտագաղթը և կրթական համակարգի խնդիրները, կարող են ծնողներին ստիպել ավելի շատ վերահսկել իրենց երեխաներին՝ միաժամանակ չհասկանալով, որ դա կարող է սահմանափակել երեխաների ինքնարտահայտման ու մասնակցության իրավունքը:

4) Դպրոցական համակարգի հնացած մոդելներ

Հայաստանի կրթական համակարգը հաճախ չի համապատասխանում ժողովրդավարական կրթության մոդելներին: Հաշվի առնելով դեռևս պահպանվող ավանդական ուսուցման մեթոդները, որտեղ ուսուցիչը համարվում է հեղինակություն, աշակերտների մասնակցությունը որոշումների կայացմանը կամ ինքնուրույն կրթական գործունեության իրականացումը հաճախ անտեսվում է: Եթե դպրոցը չի որդեգրում ժողովրդավարական սկզբունքներ, ապա ծնողների համար դժվար է այդ արժեքները ներմուծելու իրենց երեխաների կյանք:

5) Ցածր վստահություն պետական ինստիտուտների նկատմամբ

Հայաստանում բարձր չէ վստահությունը պետության կողմից առաջարկվող ծառայությունների, այդ թվում՝ կրթական համակարգի նկատմամբ: Որպեսզի ծնողները վստահեն, որ երեխաների իրավունքները պաշտպանված են և համապատասխանաբար կրթվում են ժողովրդավարական սկզբունքներով, պետք է պետական համակարգի դերը մեծանա: Սովորաբար դա չի իրականացվում արդյունավետ, և ծնողները կարող են դիմել ավանդական մոտեցումներին, քանի որ այլընտրանքային ձևերի չեն տիրապետում:

6) Արձանագրված սեռական ու սոցիալական կարծրափայեր /ստերեոտիպեր/

Հայաստանյան հասարակությունը դեռևս ունի տարբեր սեռական և սոցիալական կարծրափայեր /ստերեոտիպեր/, որոնք հաճախ ազդեցություն ունեն ծնողների մոտեցումների վրա: Ծնողների վարքագիծը չի խթանում երեխաների մեջ հավասարության, ինքնուրույնության և համագործակցության արժեքների ձևավորմանը: Դրա արդյունքում երեխաների դաստիարակությունը հիմնված է լինում գերիշխող նախապաշարմունքների վրա, որոնք հակասում են ժողովրդավարական սկզբունքներին:

7) Սոցիալական բախումներ և անհավասարություն

Հայաստանում գյուղական և քաղաքային շրջանների միջև գոյություն ունեն կրթական և սոցիալական տարբերություններ, որոնք կարող են խոչընդոտել ժողովրդավարական ծնողավարության արդյունավետ կիրառմանը: Գյուղերում ծնողները հաճախ ունենում են ավելի ավանդական աշխարհայացքներ, որտեղ հեղինակավոր հարաբերություններն առավել տարածված են: Քաղաքներում երեխաներն ու ծնողները կարող են ավելի բաց լինել ժողովրդավարական գաղափարների նկատմամբ, սակայն դրանք էլ հաճախ չեն խթանվում պետական կամ հասարակական մակարդակներում:

8) Հոգեբանական և կրթական աջակցություն

Հայաստանում դեռևս սահմանափակ են հոգեբանական աջակցման հնարավորությունները, ինչը կարևոր է երեխաների ազատությունն ու ինքնարտահայտման հմտությունների զարգացման համար: Ծնողները շատ հաճախ չեն հասկացվում, թե ինչպես աջակցել երեխային կայացնելու իր սեփական ընտրությունները, տարբերվող կարծիքներ ունենալու և դրանց արտահայտման հարցերում: Ծնողներին պետք է տրամադրվեն ավելի շատ ռեսուրսներ՝ հոգեբանական, կրթական և այլ տեսակի աջակցություն, որպեսզի նրանք կարողանան ավելի լավ դաստիարակել իրենց երեխաներին ժողովրդավարական սկզբունքներով:

Այսպիսով, ժողովրդավարական ծնողավարության մարտահրավերները Հայաստանում հիմնականում կապված են ավանդական մշակույթի, կրթական համակարգի սահմանափակումների, սոցիալ-տնտեսական դժվարությունների և քիչ տեղեկատվության հետ, սակայն զարգացող հասարակության մեջ հնարավոր են լուծումներ՝ համատեղ աշխատանքի և բարեփոխումների միջոցով:



8. Ժողովրդավարական ծնողավարության զարգացման միտումները

21-րդ դարում

Ժամանակակից ծնողավարման և ժողովրդավարության սկզբունքների կիրառման մեջ տեղի են ունենում փոփոխություններ: Ահա մի քանի հիմնական միտումներ.

❖ Ավելի բաց և «լսող» ծնողավարության զարգացում

Ժամանակակից ծնողները ավելի հակված են լսելու իրենց երեխաներին և կարևորելու նրանց կարծիքը՝ դաստիարակելով ինքնավստահ և կարծիքն արտահայտելու կարողություն ունեցող երեխաներ: Այս նոր մոտեցումը ավելի քիչ կենտրոնանում է խիստ կարգուկանոնի վրա և ավելի շատ՝ երեխայի անհատականության զարգացման վրա:

❖ Համագործակցության և համադրելի որոշումների կայացման կարևորությունը

21-րդ դարում ծնողներն ավելի հաճախ են ներգրավում երեխաներին ընտանիքի որոշումներում, ինչպիսիք են ընտանեկան ծրագրերի պլանավորումը, ֆինանսական հարցերում խորհուրդ տալը և այլ կարևոր որոշումների մեջ ներգրավվածությունը: Սա հնարավորություն է տալիս երեխաներին զարգացնել պատասխանատվության զգացում և թիմային աշխատանքի հմտություններ:

❖ Դաստիարակության հանդեպ գիտական մոտեցում

Ժամանակակից ծնողները հաճախ ուսումնասիրում են գիտական աղբյուրներ՝ դաստիարակության մեջ լավագույն մեթոդները հասկանալու և ժողովրդավարական մոտեցումներով երեխայի զարգացմանը նպաստելու համար: Պատրաստակամությունը ուսումնասիրել և ներդնել նոր գիտելիքներ մեծ ազդեցություն է ունենում ժողովրդավարական արժեքների ինտեգրման հարցում:

❖ Հուզական աջակցություն և ապրումակցման զարգացում

Ներկայիս ծնողավարության մեջ մեծ ուշադրություն է դարձվում երեխայի հուզական զարգացմանը: Ծնողները կարևորում են երեխայի զգացմունքները, փորձում են ճանաչել դրանք և ուղղորդել երեխային հույզերի կառավարման հարցում: Ժողովրդավարական ծնողավարությունը միտված է բաց խոսել և երեխայի հուզական կարիքները հաշվի առնելու վրա:

❖ Սոցիալական ցանցերի և տեխնոլոգիաների ազդեցությունը ժողովրդավար ծնողավարման վրա

Սոցիալական ցանցերը և թվային տեխնոլոգիաները լայն ազդեցություն են ունենում ծնողավարման վրա: Ժողովրդավար ծնողներն ավելի հակված են թույլ տալու իրենց երեխաներին նորարարական եղանակներով ինքնարտահայտվել և կապ հաստատել այլ մարդկանց հետ, բայց միաժամանակ սահմանափակումներ են մտցնում՝ երեխաներին ապահով և առողջ միջավայրում պահելու համար:

❖ Մշակութային բազմազանության և հանդուրժողականության զարգացում

21-րդ դարի ժողովրդավար ծնողավարության մեջ մեծ տեղ ունի բազմազանության և հանդուրժողականության գաղափարը: Ժամանակակից ծնողները փորձում են երեխաներին սովորեցնել հարգել այլ մշակույթները, լինել բաց աշխարհին և ընդունել տարբե-

րությունները: Այս մոտեցումը նպաստում է սոցիալական գիտակցության և հարգանքի զարգացմանը:

❖ *Անկախության և ինքնուրույնության խրախուսում*

Ժողովրդավարական ծնողները ձգտում են երեխաներին տալ անհրաժեշտ ազատություն և աջակցություն՝ իրենց կարողությունները և հետաքրքրությունները զարգացնելու համար: Սա հատկապես կարևոր է 21-րդ դարի արագ փոփոխվող աշխարհում, որտեղ ինքնուրույնությունը և նոր հմտություններ սովորելու կարողությունը ավելի մեծ նշանակություն ունեն:

❖ *Թվային գրագիտություն և պատասխանատու վարքագծի խրախուսում*

Ժողովրդավարական ծնողավարությունը ներառում է նաև երեխաներին թվային գրագիտություն սովորեցնելը: Ծնողները փորձում են երեխային սովորեցնել պատասխանատու օգտվել տեխնոլոգիաներից՝ հատկապես ինտերնետում, սոցիալական մեդիայում և այլ թվային հարթակներում: Թվային գրագիտությունը նոր կարևորություն է ստացել ծնողավարման մեջ, քանի որ այն մեծացնում է երեխայի անվտանգությունն ու գիտակցված մոտեցումը թվային աշխարհին:

❖ *Հասարակական և էկոլոգիական պատասխանատվության խրախուսում*

Ժողովրդավար ծնողները երեխաներին սովորեցնում են կարևորել շրջակա միջավայրը, լինել ակտիվ քաղաքացի և սոցիալապես պատասխանատու: Էկոլոգիական խնդիրների, կլիմայի փոփոխությունների և այլ գլոբալ մարտահրավերների առկայության պայմաններում շատ ծնողներ իրենց երեխաներին դաստիարակում են որպես ապագա պատասխանատու և կիրթ քաղաքացիներ:

❖ *Ծնողների ինքնակրթության և նորամուծությունների նկատմամբ հետաքրքրության աճ*

Ժամանակակից ծնողները մեծ ուշադրություն են դարձնում ինքնակրթությանը՝ օգտագործելով հանրային ռեսուրսներ, հետազոտություններ և նորամուծություններ, որոնք կարող են բարելավել իրենց ծնողական հմտությունները: Այս գործընթացը օգնում է նրանց ավելի լավ հասկանալ ժողովրդավարական արժեքները և նոր մոտեցումներ մշակել՝ առավելագույնս աջակցելու երեխայի զարգացմանը:

Այս բոլոր միտումները ցույց են տալիս, որ 21-րդ դարի ժողովրդավար ծնողավարությունը կենտրոնանում է երեխայի իրավունքների հարգման, համատեղ որոշումների կայացման և երեխաների ինքնուրույնության ու պատասխանատվության խթանման վրա՝ միաժամանակ հարմարվելով տեխնոլոգիաների և սոցիալական փոփոխությունների դարաշրջանին:



Ծնողավարությունը թվային դարաշրջանում

ԹՎԱՅԻՆ ԾՆՈՂ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Թվային աշխարհ, թվային հասարակություն, թվային կրթություն, թվային դաստիարակություն, թվային քաղաքացի, թվային ծնող...

Այսօր ապրում ենք մի աշխարհում, որը փոխակերպվել է թվային տեխնոլոգիաների շնորհիվ՝ հնարավորություն ընձեռելով հեշտությամբ կապվել սոցիալական մեդիայի միջոցով և հասանելի լինել հսկայական քանակությամբ տեղեկատվության՝ միևնույն ժամանակ դառնալ թվային քաղաքացի: Թվային քաղաքացին այն մարդն է, ով կարողանում է գրագետ և դրականորեն կիրառել զարգացող թվային տեխնոլոգիաները, ակտիվ, շարունակական և պատասխանատու կերպով մասնակցում է հասարակական և քաղաքացիական գործունեությանը, ներգրավված է ցկյանս ուսման գործընթացում (ֆորմալ և ոչ ֆորմալ պայմաններում) և հանձնառու է շարունակաբար պաշտպանել մարդու իրավունքները և արժանապատվությունը:

Այս գերհարուստ տեղեկատվության իմաստավորումը և արդյունավետ ու պատասխանատու ներգրավվածությունը ենթադրում է թվային քաղաքացիության կրթություն, որի նպատակն է երեխաներին զինել անհրաժեշտ հմտություններով կրթության միջոցով՝ զարգացնելով այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են ակտիվորեն սովորելու և այսօրվա թվայնացված հասարակության մեջ մասնակցելու համար: Կրթությունը դիտարկում է որպես քաղաքացիության գործընթացի կայծ և ազդեցություն՝ նոր մարտահրավերների առջև կանգնեցնելով ուսուցիչներին, ուսանողներին, միայնակ չեն այս գործում, եթե իրենց կողքին ունեն թվային ծնողներ, գրագետ թվային ծնողներ:

Թվային ծնող

Եթե դու ծնող ես այսօրվա թվային դարաշրջանում, ուրեմն դու **թվային ծնող** ես:

Ծնողների դերն այսօրվա խիստ թվայնացված հասարակության մեջ ավելի դժվար է, քան երբևէ: Անհրաժեշտ է վստահորեն նավարկել թվային հարթակներում իրենց երեխաների հետ՝ վերջիններիս անվտանգ պահելով առցանց դաշտում: Սա ենթադրում է ծանոթ լինել թվային դարաշրջանում դաստիարակության հետ կապված մարտահրավերներին ու դրանց դիմակայման հնարավորություններին՝ կառավարելով էկրանի ժամանակը, վերահսկելով քնի ժամանակը և թվային դաշտում երեխայի ինքնադրսևորումը:

Թվային ծնողները պետք է լինեն պատասխանատու, օրինակելի ծնողներներ և ստեղծեն վստահություն, որպեսզի երեխաները բաց քննարկեն իրենց ինքնավար առցանց գործունեությունը: Թվային ծնողները պետք է հասկանան նաև, թե դաստիարակության որ ոճն է լավագույնս ազդում իրենց երեխաների վրա, որպեսզի իրենց երեխաները ոչ միայն մասնակցեն թվային դարաշրջանին, այլ իրականում բարգավաճեն՝ միևնույն ժամանակ պաշտպանված լինելով այս նոր միջավայրից բխող ցանկացած ռիսկից: Անհրաժեշտ է նաև ուշադիր հետևել երեխաների վարքագծին, երբ նրանք կիսվում են առցանց որևէ բովանդակությամբ՝ խրախուսելով պատասխանատվություն ցուցաբերել իրենց իսկ կիսված նյութի նկատմամբ:

Թվային դաստիարակություն

Բոլորս քաջ գիտակցում ենք, որ թվային դարաշրջանում անհնար է և ոչ տեղին երեխաներին հեռու պահել թվային դաշտից: Փոխարենը խրախուսվում է «դրական թվային դաստիարակության» գաղափարը, որի հիմնային նպատակն է ապահովել երեխաներին համապատասխան ռեսուրսներով՝ ապահով և պատասխանատու կերպով ներգրավվելու թվային միջավայրում: «Թվային դաստիարակությունը» հիմնականում վերաբերում է ծնողի կողմից երեխայի առցանց գործունեության նկատմամբ վերահսկողությանը՝ օգտագործելով նրանց հասանելի թվային գործիքները:

Կյանքի շատ ոլորտներում տեխնոլոգիաների տարածմանը զուգահեռ ավելի է մեծանում թվային դաստիարակության դերը՝ ստիպելով ծնողներին կամրջել թվային սերնդի բացը, տիրապետել մի շարք նոր հմտությունների:

Թվային դաստիարակության հմտություններն օգնում են ծնողներին հավասարակշռել մարդկային և վիրտուալ/թվային կապերը: Թվային ծնողները պետք է ծանոթանան տեխնոլոգիաներին, թվային սարքերին, սոցիալական մեդիայի հավելվածներին, ինչպես նաև խաղերին: Նրանք նաև պետք է լավ տեղյակ լինեն այդ տեխնոլոգիաների պատշաճ կիրառմանը: Այս տեղեկացվածության շնորհիվ ծնողները հնարավորություն են ունենում.

- ուղղորդել երեխաներին թվային ռեսուրսների պատշաճ և ճիշտ օգտագործման հարցում,

- ավելի լավ հասկանալ երեխային այս կիբեր դարաշրջանում,
- վստահություն ձեռք բերել իրենց երեխաների մոտ՝ ստանալով նրանց թվային խնդիրների վերաբերյալ տեղեկություն,

- իրենց երեխաների հետ բաց զրույցներ վարել շատ հարցերի շուրջ:

Բացի վերը նշվածից կան նաև որոշ օգտակար հավելվածներ՝ երեխայի գտնվելու վայրը իմանալու, նրան հետևելու համար, ինչպես նաև նրանց առցանց գործունեությունը վերահսկելու համար:

Թվային դաստիարակության հմտությունները օգնում են գիտակցել թվային տարածության վտանգները և սպառնալիքները: Որքան էլ հետաքրքիր, հուզիչ և բովանդակալից թվա թվային աշխարհը, այն, անշուշտ, վտանգներ և սպառնալիքներ է պարունակում: Այս թվային դարաշրջանում ծնողների համար անհրաժեշտ է ոչ միայն հասկանալ այս առցանց վտանգների և սպառնալիքների մասին, այլ նաև տեղյակ լինել երեխայի առցանց անվտանգությունն ապահովելու համար առաջարկվող ուղիների և միջոցների մասին: Թվային դաստիարակության հմտությունները ապահովում են այն գործիքների արդյունավետ և անվտանգ օգտագործումը, որոնց հասանելի են երեխաները: Այդ գործիքները կարող են օգնել ծնողներին ակտիվացնել գաղտնիության ընտրանքները երեխաների համար հասանելի թվային սարքերի անվտանգության համապատասխան կարգավորումներով՝ խուսափելով իրենց տարիքի համար անհամապատասխան առցանց շփումից և նաև օգնելով նրանց ապահով լինել առցանց հարթակում:

Թվային ծնողները կարող են արդյունավետորեն կառավարել երեխայի թվային ժամանակը և վերահսկել նրանց թվային գործունեությունը՝ հետևելով հետևյալ խորհուրդներին.

- երբ երեխաների կողքին եք, շատ մի զբաղվեք թվային սարքերով,
- երբ նրանք փորձում են ձեզ հետ խոսել իրենց թվային խնդիրների մասին, լսեք նրանց,
- հարգեք նրանց տեսակետը, սուր մի քննադատեք նրանց միջոցը և մի դատապարտեք,

- քննարկեք հնարավոր լուծմանը հասնելու տարբեր ուղիներ,
- հնարավորինս նրբորեն ներկայացրեք ժամանակակից կիբեր դարաշրջանի ներկայիս սցենարները՝ հետևելով տարիքային համապատասխան բովանդակությանը,
- ձեր երեխաների հետ այցելեք մի քանի կայքեր և ստուգեք՝ արդյոք դրանց պարունակած տեղեկատվությունը իրական է,
- երեխաների հետ այցելեք վիրտուալ ցուցահանդեսներ,
- նրանց հետ կիսվեք համացանցից օգտվելու ձեր փորձառությամբ:

Եկեք խոստովանենք՝ որքան էլ խուսափենք թվային աշխարհից, այն այլևս ամենուր է մեզ շրջապատում: COVID 19-ի պայմաններում ոչ միայն մեր երեխաները, այլև մենք ակամայից հայտնվեցինք թվային դասարանում, դասարան բառն էլ հոմանիշ դարձավ հյուրասենյակի, ճաշասենյակի, խոհանոցի: Բոլոր դժվարություններով հանդերձ դրականն էլ գտանք այդ գործընթացում՝ ներկա գտնվելով դասագործընթացին, երբեմն էլ ստանձնելով ուսուցչի օգնականի դերը: Ուսուցիչը սահմանում էր դասի նպատակը, պլանը, այն թվայնորեն փոխանցում էր սովորողին, և ծնողին մնում էր կառավարել իր երեխայի վարքագիծը, օգնել առցանց ուսուցման ընթացքում և պահել իր երեխայի ուշադրությունը առցանց աշխատանքի վրա: Սա մարտահրավեր էր, որն արդեն իսկ որոշ դժվարություններով հաղթահարեցինք:

Այժմ հրամայական է դարձել այն հարցը, թե ինչպես կարող ենք ծնողներին օգնել պահպանել կրթության մակարդակը, որը պահանջվում է մեր երեխաների համար զարգացման յուրաքանչյուր փուլում՝ հեռավար ուսուցման ընթացքում չորակազրկելով այն: Ճիշտ ուղղորդման համար անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ թվային ծնողների մոտեցումները հիմնականում երեք տիպի են՝ սահմանափակող, ակտիվացնող և առաջնորդող: Թվային դաստիարակության այս մոտեցումներից յուրաքանչյուրն ունի առավելություններ և թերություններ:

Սահմանափակող ծնողները հիմնականում իրենց երեխաներին հեռու են պահում առցանց հարթակներից և խստորեն սահմանափակում են էկրանի ժամանակը: Սա հատկապես հնարավոր է իրագործել, երբ երեխան փոքր տարիքի է. երեխայի տարիքի մեծացմանը զուգահեռ նվազում է վերահսկողության հնարավորությունը: Խիստ սահմանափակումների փոխարեն սովորեցնել է պետք երեխաներին, թե ինչպես օգտագործել տեխնոլոգիաները, համացանցը կամ հավելվածները՝ ցուցաբերելով պատասխանատվություն:

Հաճախ սահմանափակող ծնողները ավելի քիչ են ուսումնասիրում հատուկ ծրագրեր կամ հավելվածներ, որոնք իրենց երեխաները կօգտագործեն: Սահմանափակումների դրականությունը դրսևորվում է էկրանի առջև անցկացրած ժամանակի կառավարմամբ, իսկ թերությունը կայանում է նրանում, որ սահմանափակումն երեխաներին ավելի է դրդում մուտք գործել արգելված դաշտ՝ հատկապես հետաքրքրություն ցուցաբերելով արգելված հավելվածների նկատմամբ:

Երկրորդ տիպի թվային ծնողները համարվում են օժանդակող ծնողներ, ովքեր իրենց երեխաներին վստահում են և թույլ են տալիս, որ նրանք ինքնուրույն ընտրություն կատարեն, երբ խոսքը վերաբերում է առցանց հարթակներում գտնվելուն: Հասկանալով թվային աշխարհի մեծ դերն իրենց երեխաների կյանքում՝ այս ծնողները հաճախ իրենց երեխաներին են թողնում տեխնոլոգիաների ուսումնասիրումն՝ առանց նրանց ուղղորդելու: Վստահությունն ինքնին դրական դաշտ է ստեղծում, սակայն վստահության հետ մեկտեղ անհրաժեշտ է խթանել երեխաների թվային գրագիտության զարգացման ուղիները: Թվային այս տիպի դաստիարակության ազդեցության գոտում գտնվող երեխաները առցանց շփվելու ավելի բարձր մակարդակ են ունենում:



Ծնողների երրորդ տիպը առաջնորդող, ուսուցանող ծնողներն են, ովքեր ակտիվ դեր են խաղում իրենց երեխաներին թվային աշխարհում պատասխանատու քաղաքացիներ պատրաստելու գործում: Նրանք առաջնորդում են իրենց երեխաների առցանց գործունեությունը՝ նրանց հետ առցանց ժամանակ անցկացնելով, խրախուսելով առցանց ուսուցումը և օգնելով իրենց երեխաներին զարգացնել թվային հմտությունները: Այս մոտեցումը ձևավորում է թվային երեխաներ, որը բոլոր երեք խմբերից ամենաքիչ հավանական է, որ ներգրավվեն ցանկացած առցանց սխալ վարքագծի մեջ:

Այսպիսով, տնային պայմաններում տեխնոլոգիաները կառավարելու ծնողների մոտեցումն ուղղակիորեն ազդում է առցանց աշխարհում իրենց երեխայի վարքագծի վրա: Թվային աշխարհում նրանց ապահովությունը պահպանելու համար կարևոր է լինել գրագետ թվային ծնող, ուղղորդող, խրատող և, իհարկե, աջակցող:



Ծնողի աջակցությունը փանը

ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ի՞նչ է սովորելու հետ կապված դժվարությունը

Գոյություն չունի հստակ և լայնորեն ընդունված սահմանում այն մասին, թե ինչ է «սովորելու հետ կապված դժվարությունը»: Այս ոլորտի բազմաբնույթ լինելու պատճառով գոյություն ունի տարածայնություն դրա սահմանման խնդրի շուրջ: Ներկայումս կան ամենաքիչը 12 սահմանումներ, որոնք հանդիպում են մասնագիտական գրականության մեջ: Ուսումնական դժվարությունները կարող են արտահայտվել երկու ձևով.

- Առաջինը հենց բուն ուսումնական առանձնահատկությունների խնդիրներն են: Այսինքն՝ երեխան ձախողում է կոնկրետ առարկայի շրջանակներում, չի կարողանում ընկալել, յուրացնել, դժվարանում է կատարել հանձնարարությունները, հասկանալ, բացատրել իր մտքերը:

- Երկրորդ խնդիրը անձնային որակների դաշտից է: Այսինքն՝ երեխայի մոտ կարող է դրսևորվել ինքնուրույնության պակաս, նախաձեռնողականության պակաս, հրահանգներով աշխատելու կարողության պակաս կամ ենթարկվելու դժվարություններ:

Շատ կարևոր առանձնահատկություն է ուսումնական մոտիվացիան, որը ձևավորվում է մի շարք այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են ծնողների վերաբերմունքը, մանկապարտեզը, ինչպես նաև հենց բուն ուսումնական միջավայրը՝ դպրոցը, ուսուցիչները, ուսումնական նյութերը: Ուսումնական մոտիվացիան ևս անձնային ոլորտի խնդիր է, և եթե, օրինակ, երեխան ունի բարձր ընդունակություններ, բայց չունի ուսումնական մոտիվացիա, սա ևս կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի երեխան ունենա ուսումնական դժվարություններ:

Ինչու՞ է կարևոր այս խնդիրը ուշադրության կենտրոնում պահել և լուծումներ փնտրել:

Մենք լավ գիտենք, որ դպրոցահասակ երեխաները՝ հատկապես տարրական դպրոցի երեխաները, իրենց ամբողջ կյանքն ու ինքնադրսևորման միջավայրը համարում են դպրոցը: Եվ եթե այս գործընթացում, այս միջավայրում որևէ բան խանգարում է նրանց ինքնադրսևորման գործընթացին կամ ինքնադրսևորման գործընթացը հազեցած է անհաջողություններով, քննադատությամբ, մեղադրանքներով, վիրավորանքներով, ապա սա ուղղակիորեն ազդում է երեխայի ինքնագնահատականի և հետագա կյանքի ձեռքբերումների վրա:

Կարևոր է հաշվի առնել, որ հաջողության զգացումը, հաջողության ձգտելու ցանկությունը և հաջողության հասնելու մոտիվացիան ձևավորվում է հենց դպրոցական տարիքում: Երեխայի զարգացման ընթացքում կան շրջաններ, երբ կոնկրետ որակներ են ձևավորվում և տարրական դպրոցի տարիքը հենց հաջողության հասնելու մոտիվացիայի ձևավորման տարիքն է: Դրանից հետո մոտիվացիան և նպատակասլացությունը ձևավորելը շատ դժվար կլինի:

ՀՀ-ում սովորելու հետ կապված դժվարությունների հաղթահարման ուղիները:

Սովորողների մոտ առարկայական ծրագրերի ընկալման հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար իրականացվում է Երկարօրյա ուսուցում, որը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝

ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.

բ. դասապատրաստումներին աջակցելու.

գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:

2) Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշի (այսուհետ՝ ՀՊՁ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով: (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ. սեպտեմբերի 4-ի N 113-Ն հրաման, կետ 2):

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 2-4-րդ և 5-9-րդ դասարաններում ՀՊՁ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարորյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է Հաստատության տնօրենին, քանզի տվյալ սովորողի առաջադիմության վերաբերյալ ամենից իրազեկված անձիք վերջիններս են՝

1) 2-4-րդ դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.

2) 5-9-րդ դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում:

Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողներին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով երկարորյա խումբը կարող է ձևավորվել նույն առարկայական ծրագիրն ուսումնասիրող դասարանների սովորողներից (մեկից ավելի դասարանների առկայության դեպքում):

Ծնողի դիմումի հիման վրա իրականացվող երկարորյա խմբում ընդգրկվելու համար սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի)՝ Հաստատության տնօրենի անունով ներկայացված դիմումի հիման վրա Հաստատության տնօրենի և սովորողի ծնողի միջև ընթացիկ ուսումնական տարվա համար կնքվում է Հաստատության կողմից երկարորյա ուսուցման կազմակերպման պայմանագիր:

- Ծնողի դիմումի հիման վրա իրականացվող երկարորյա խմբերը ձևավորվում են ըստ կրթական աստիճանի (տարրական և միջին դպրոց) կամ նույն տարիքային խմբի տարբեր դասարանների սովորողներից:

- Երկարորյա խմբերի կազմը, դրանց հետ աշխատող մանկավարժական աշխատողների անվանական կազմը, աշխատանքի տարեկան պլանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների կարգացուցակը հաստատվում են Հաստատության տնօրենի հրամանով: ՀՊՁ ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով ձևավորված խմբերում Հաստատության տնօրենը և տնօրենի տեղակալը մանկավարժական գործունեություն ծավալել չեն կարող, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք դպրոցում առարկան դասավանդող միակ մասնագետն են: Երկարորյա խմբի պարապմունքներն անցկացվում են համապատասխան ուսումնական առարկան դասավանդող՝ տվյալ Հաստատության որևէ ուսուցչի կողմից:

• Երկարօրյա խմբերի ծրագրերը (այդ թվում՝ լրացուցիչ կրթական) հաստատվում են կրթության պետական լիազոր մարմնի կողմից:

• Երկարօրյա խմբի աշխատանքի կարգացուցակում նշվում են սովորողների դասապատրաստման, սննդի, հանգստի, ըստ անհրաժեշտության անհատական աշխատանքների, զբոսանքի, էքսկուրսիաների և խմբակներում ընդգրկված սովորողների անվանական կազմը, խմբակի աշխատանքի ժամերը, աշխատանքների իրականացման համար պատասխանատու մանկավարժական աշխատողների անունները:


• Երկարօրյա խմբի կարգացուցակով իրականացված աշխատանքները, ինչպես նաև խմբերում ընդգրկված սովորողների գրանցումը, հաճախումները, ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողների գնահատումն իրականացվում են էլեկտրոնային մատյանի «Երկարօրյա խմբեր» բաժնում:

• Երկարօրյա խմբերում ընդգրկված սովորողների առավելագույն թիվը 25 է:

• Ծնողի դիմումի հիման վրա իրականացվող երկարօրյա խմբերը ձևավորվում են ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 10-ը, երկրորդ կիսամյակում՝ մինչև հունվարի 15-ը, և համալրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

Հոգեբանական տեսանկյունից, եթե երեխան երկու-երեք ամիս տևողությամբ որևէ հարցում կայուն դժվարություն ունի և այս դժվարությունը որևէ կերպ, որևէ ազդեցությամբ փոփոխության չի ենթարկվում, վիճակը չի բարելավվում, մենք գործ ունենք խնդրի հետ, որը պետք է ինչ-որ կերպ հաղթահարել կամ բացահայտել խնդրի առաջացման պատճառները, այդ իսկ պատճառով ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողներին ուսումնառության արդյունքները բարելավելու համար երկարօրյա խմբերը ձևավորվում են ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ սկսած հոկտեմբերի 1-ից, երկրորդ կիսամյակում՝ սկսած փետրվարի 1-ից, քանզի նշված ժամանակահատվածում հնարավոր կլինի իրականացնել առնվազն 2 ամփոփիչ գնահատում և համալրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

Սովորողի երկարօրյա պարապմունքները դադարեցվում են ուսումնական պլանով սահմանված առարկայի դասավանդման ժամանակ առաջադիմության դրական արդյունք արձանագրելու դեպքում: Այն պահից, երբ տվյալ սովորողը այն թեմայից որի համար հաճախում է երկարօրյա ուսուցման խումբ և իր ընթացիկ արդյունքներով արձանագրվում է առաջադիմություն, դադարեցնում է երկարօրյա խումբ հաճախելը: Առաջադիմության դրական արդյունքը արձանագրվում է ոչ միայն ուսուցչի կողմից, այլ նաև տնօրենի հրամանագրով, որտեղ ամրագրվում է, որ տվյալ սովորողը լքել է երկարօրյա խումբը:



Ի՞նչն է առաջացնում սովորելու դժվարություն:


Սովորելու հետ կապված դժվարության առաջացման պատճառների մասին ներկայումս քիչ բան է հայտնի, այնուհանդերձ որոշ ընդհանրական դիտարկումներ կարող են արվել:

Որոշ երեխաներ նույն տարիքային խմբում ավելի դանդաղ են զարգանում և հասունանում, քան՝ մյուսները: Արդյունքում նրանք ի վիճակի չեն լինում ընկալել դպրոցի հանձնարարությունները: Սովորելու այսօրինակ դժվարությունը կոչվում է «հասունացման ուշացում»:

• Նորմալ տեսողությամբ և լսողությամբ որոշ երեխաներ նյարդային համակարգի որոշ անբացատրելի խախտումների արդյունքում կարող են սխալ կերպով ընկալել ամենօրյա պատկերները և ձայները:

• Նախքան ծնվելը կամ մանկության վաղ հասակում ստացած վնասվածքները հնարավոր է, որ պատճառ դառնան հետագայում սովորելու հետ կապված խնդիրների առաջացմանը: Երեխաները, որոնք ժամանակից շուտ են ծնվում կամ երեխաները, որոնք ծնվելուց հետո ունենում են բժշկական խնդիրներ, նույնպես երբեմն ունենում են սովորելու հետ կապված դժվարություններ:

• Սովորելու դժվարության հակում կա նաև ընտանիքներում, ինչը նշանակում է, որ որոշ դժվարություններ կարող են ժառանգվել: Սովորելու դժվարությունները առավել հաճախ հանդիպում են տղաների մոտ, քան՝ աղջիկների. հավանաբար այն պատճառով, որ տղաները ավելի ուշ են հասունանում:



Որո՞նք են սովորելու դժվարության «վաղ նախազգուշական նշանները»:

Սովորելու հետ կապված դժվարություն ունեցող երեխաները ցուցաբերում են բազմաթիվ նախանշաններ: Սա ներառում է կարդալու, մաթեմատիկայի, գրելու, ընկալելու, խոսակցական լեզվի, պատճառաբանելու, եզրահանգումներ անելու կարողության հետ կապված խնդիրներ: Հիպերակտիվությունը, ցրվածությունը, ընկալման կոորդինացումը ևս կարող են կապված լինել սովորելու դժվարության հետ, սակայն դրանք առանձին վերցված չեն համարվում սովորելու հետ կապված դժվարություններ: Սովորելու դժվարության առաջնային բնութագրիչը երեխայի՝ որոշ ոլորտներում հասած հաջողությունների և նրա ընդհանուր մտավոր կարողությունների միջև նշանակալի տարբերությունն է: Սովորելու դժվարությունները ազդում են 5 հիմնական հատվածների վրա՝

1. խոսակցական լեզվի՝ հապաղումներ, խախտումներ, լսելու և խոսելու շեղումներ,
2. գրավոր լեզվի՝ դժվարություններ կարդալիս, գրելիս և հեգելիս,
3. մաթեմատիկայի՝ թվաբանական գործողություններ կատարելու կամ հիմնական սկզբունքներն ընկալելու դժվարություն,
4. հիմնավորման՝ մտքերը կազմակերպելու և միավորելու դժվարություն,
5. հիշողության՝ տեղեկատվությունը և առաջադրանքները հիշելու դժվարություն:

Սովորելու դժվարությունների հետ կապված նախանշաններ են՝

- ցածր առաջադիմություն խմբակային թեստերի ժամանակ,
- չափը, ձևը և գույնը տարբերակելու դժվարություն,
- դժվարություն՝ կապված ժամանակի ընկալման հետ,
- մարմնի տեսքի վերաբերյալ շեղված ընկալում,
- գրելու և կարդալու հետ կապված խնդիրներ,
- ընդհանուր թափափվածություն,
- վատ տեսա-շարժողական կոորդինացիա,
- հիպերակտիվություն,
- տրված մոդելից ճիշտ արտանկարելու դժվարություն,
- աշխատանքը ավարտելու հապաղում,
- ցածր կազմակերպչական հմտություններ,
- հանձնարարություններից/ցուցումներից հեշտորեն շփոթվող,
- վերացական մտածողության և/կամ խնդրի լուծման դժվարություն,
- չկարգավորված մտածողություն,
- հաճախ մի թեմայից կամ գաղափարից կառչածություն,
- կարճաժամկետ կամ երկարաժամկետ վատ հիշողություն,
- իմպուլսիվ վարքագիծ, նախքան գործի անցնելը ռեֆլեկտիվ մտածողության բացակայություն,
- ֆրուստրացիայի նկատմամբ ցածր հանդուրժողականություն,
- քնած ժամանակ բարձր շարժունություն,
- ընկերական վատ հարաբերություններ,
- խմբային խաղերի ժամանակ չափից շատ ոգևորվածություն,
- սոցիալական ցածր դատողություն,
- մտերմության ոչ պատշաճ, ոչ ընտրողական, հաճախ՝ չափից դուրս ցուցադրում,
- զարգացման անկյունաքարերի հետ կապված դանդաղումներ (շարժում, լեզու և այլն),
- իրավիճակին ոչ հարիր վարքագծի դրսևորում,
- իր գործողությունների հետևանքները տեսնելու անկարողություն,
- չափից դուրս դյուրահավատ և ընկերների կողմից հեշտորեն կառավարվող,
- չափից դուրս մեծ տատանումներ տրամադրության և արձագանքելու առումով,
- միջավայրի փոփոխություններին վատ հարմարվողականություն,
- բարդություններ կենտրոնացման մեջ, չափից շատ ապակառուցողականություն,
- դժվարություններ որոշումներ կայացնելու մեջ,
- դժվարություններ առաջնահերթություն պահանջող առաջադրանքների նկատմամբ:

Այս նախանշանները հաշվի առնելիս պետք է հիշել հետևյալը, որ՝

1. ոչ ոք չունի բոլոր այս նախանշանները,
2. բոլոր մարդիկ ինչ-որ չափով ունեն այս խնդիրներից 2-3-ը,
3. կոնկրետ երեխայի դեպքում առկա նախանշանները դեռ չափորոշիչ չեն սահմանելու՝ նրա դժվարությունը մեղմ է, թե խիստ: Կարևոր է հասկանալ՝ արդյոք վարքագծերը խրոնիկ բնույթ են կրում և խմբով են հանդես գալիս, թե ոչ:

Սրանցից որոշ նախանշաններ կարող են մատնանշել դիսլեքսիայի (կարդալու հետ կապված խնդիր) առկայությունը: Որոշ նախանշաններ կարող են մատնանշել ուշադրության պակասի/գերակտիվության մասին:

Ի՞նչ պետք է անի ծնողը, եթե կասկածում է, որ երեխան սովորելու հետ կապված դժվարություններ ունի:

Ծնողը պետք է երեխային տանի ընտանեկան մանկաբույժի մոտ ամբողջական ֆիզիկական զննման համար: Հետազոտության միջոցով պետք է գտնել երեխայի ուղղելի խնդիրները (վատ տեսողություն կամ լսողության կորուստ), որոնք դպրոցում կարող են առաջացնել դժվարություններ:

Ինչպե՞ս է սովորելու դժվարությունը ազդում երեխայի ծնողների վրա:

Սովորելու դժվարություն ունեցող երեխայի ծնողը նախքան ընդունելը, որ իր երեխան խնդիրներ ունի, անցնում է մի շարք էմոցիոնալ էտապների միջով: Այս «փուլերը» անկանխատեսելի են: Ծնողը կարող է մի փուլից մյուսն անցնել շատ պատահականորեն: Որոշ ծնողներ բաց են թողնում շատ փուլեր, մինչդեռ մյուսները մնում են մի փուլում բավական երկար ժամանակ: Այդ փուլերն են՝

Մերժում՝ «Իրականում ոչինչ չի պատահել»: «Ես ևս այսպես էի երեխա ժամանակ, անհանգստանալու խնդիր չկա»: «Նա դուրս կգա դրանից»:

Ամոթանք/մեղադրանք՝ «Դու ես նրան մանկացնում»: «Դու չափից շատ ես ակնկալում նրանից»: «Դա իմ կողմից չէ ժառանգված»:

Վախ՝ «Միգուցե նրանք ինձ չեն հայտնում իրական խնդիրը»: «Արդյո՞ք այն ավելի վատ է, քան նրանք ասում են»: «Նա երբևէ կկարողանա՞ ամուսնանալ, գնալ քոլեջ, այն ավարտել»:

Նախանձ՝ «Ինչու՞ նա չէր կարող նման լինել իր քրոջը կամ զարմիկներին»:

Տխրություն՝ «Եթե սովորելու դժվարություն չունենար, կարող էր այնքան հաջողությունների հասնել»:

Բանակցություն՝ «Սպասիր մինչ եկող տարի»։ «Միգուցե խնդիրը բարելավվի, եթե մենք տեղափոխվենք (կամ նա գնա ճամբար)»։

Զայրույթ՝ «Ուսուցիչները ոչինչ չգիտեն»։ «Ես ասում եմ այս հարևանությանը, այս դպրոցը, այս ուսուցչին...»։

Մեղքի զգացում՝ «Մայրս ճիշտ էր, ես պետք է կտորից տակդիրներ օգտագործեի, երբ նա դեռ երեխա էր»։ «Ես չպետք է աշխատանքի գնայի նրա առաջին տարում»։ «Ես պատժվում եմ ինչ-որ բանի համար, իսկ իմ երեխան արդյունքում տառապում է»։

Մեկուսացում՝ «Ոչ ոք չգիտի, և ոչ ոք չի հոգում իմ երեխայի մասին»։ «Ես և նա կանգնած ենք դեմ առ դեմ աշխարհին. մեզ ոչ ոք չի հասկանում»։

Թռիչք՝ «Արի փորձենք այս նոր թերապիան. ասում են, որ այն օգնում է»։ «Մենք կգնանք բոլոր հիվանդանոցները, մինչև մեկն ինձ կասի այն, ինչ ես ուզում եմ լսել»։

Այս արձագանքումների ուղղությունը լիովին անկանխատեսելի է։ Նման իրավիճակը վատթարանում է նրանով, որ հաճախ մայրը և հայրը կարող են միաժամանակ ընդգրկված լինել տարբեր հակամարտող փուլերում (մեղադրանք, մերժում, զայրույթ, մեղքի զգացում)։ Սա կարող է շատ բարդացնել հաղորդակցությունը։

Այս ամենով հանդերձ՝ հուսադրողն այն է, որ պատշաճ օգնության պարագայում սովորելու դժվարություն ունեցող երեխաների մեծ մասը կարող են զգալի առաջընթաց արձանագրել։

Ցուցումներ սովորելու դժվարություն ունեցող երեխաների ծնողների համար

1. Հատկացրե՛ք ժամանակ լսելու ձեր երեխաներին այնքան շատ, որքան կարող եք (փորձե՛ք հասկանալ նրանց ասելիքը)։
2. Սիրե՛ք նրանց դիպչելով, գրկելով, զգվելով, գուրգուրելով (նրանք շատ ֆիզիկական շփման կարիք ունեն)։
3. Փնտրե՛ք և խրախուսե՛ք նրանց ուժեղ կողմերը, կարողություններն ու հետաքրքրությունները։ Օգնե՛ք նրանց դրանք օգտագործել՝ որպես սովորելու հետ կապված այլ դժվարությունների փոխհատուցում։
4. Պարգևատրե՛ք նրանց նվերներով, լավ խոսքերով, ժպիտով և թփթփացնելով նրա ուսին այնքան հաճախ, որքան կարող եք։
5. Ընդունե՛ք նրանց այնպիսին, ինչպիսին որ կան և զարգացման ու աճի իրենց ներուժով։ Ձեր ակնկալիքներում և պահանջներում եղե՛ք իրատեսական։
6. Ընդգրկե՛ք նրանց կանոններ, ժամանակային գրաֆիկներ կազմելու և ընտանեկան այլ միջոցառումներ կազմակերպելու գործում։

7. Ասացե՛ք նրանց, երբ իրենց վատ են պահում և պատմե՛ք, թե ինչպես եք ձեզ զգում նրանց վարքագծի պատճառով, այնուհետև առաջարկե՛ք նրանց մի այլ՝ առավել ընդունելի պահվածք:
8. Օգնե՛ք նրանց ուղղել իրենց սխալները՝ ցույց տալով, թե ինչ պետք է անեն:
9. Մի՛ փնթփնթացեք, մի՛ կառչեք մանրուքներից:
10. Տվե՛ք նրանց ընդունելի տնային գործեր նաև ընտանեկան աշխատանքի մշտական պատասխանատվություն ամեն հնարավոր առիթով:
11. Որոշակի գումար՝ տվեք նրանց և օգնե՛ք, որ սովորեն պլանավորել ինչպես ծախսել այն:
12. Ապահովե՛ք նրանց խաղալիքներով, ակտիվ միջոցառումներով և հնարավորություններով, որոնք կօգնեն խթանել նրանց զարգացումը:
13. Կարդացե՛ք հաճելի պատմություններ նրանց համար: Խրախուսե՛ք նրանց հարցեր տալ, քննարկել պատմությունները, պատմել, վերակարդալ այն:
14. Զարգացրե՛ք նրանց կենտրոնացման ունակությունը՝ նվազեցնելով միջավայրի շեղող հանգամանքները, որքանով որ հնարավոր է (ապահովե՛ք նրանց համար աշխատելու, խաղալու և սովորելու տարածք):
15. Մի՛ կառչեք ավանդական դպրոցական գնահատականներից: Կարևոր է, որ նրանք իրենց սեփական չափով առաջընթաց ապրեն և պարգևատրվեն դրա համար:
16. Տարե՛ք նրանց գրադարան և խրախուսե՛ք գիրք ընտրել իրենց հետաքրքրությունների շրջանակներում:
17. Արե՛ք այնպես, որ նրանք ցանկանան ձեզ հետ միասին օգտագործել իրենց գրքերը:
18. Տանը ապահովե՛ք կարդալու խթան հաղորդող գրքեր և այլ նյութեր:
19. Օգնե՛ք նրանց բարձրացնել ինքնագնահատականը և համեմատել այն իր հետ, ոչ թե ուրիշների:
20. Համոզե՛ք նրանց, որ սոցիալապես համագործակցեն՝ խաղալով, օգնելով և ծառայելով ընտանիքի և համայնքի անդամներին:
21. Նրանց համար օրինա՛կ ծառայեք՝ կարդալով և քննարկելով հետաքրքրող նյութեր: Տրամադրե՛ք նրանց որոշ բաներ, որ կարդում կամ անում եք:
22. Մի՛ հապաղեք խորհրդակցել ուսուցչի կամ այլ մասնագետի հետ, երբ անհրաժեշտություն կզգաք ավելի լավ հասկանալու, թե ինչպես կարելի է օգնել երեխային ավելի լավ սովորել:



Նամակ ծնողին

Սիրելի՛ ծնող,

Հանրակրթության ոլորտում մեծ բարեփոխումներ են տեղի ունեցել, ինչն իր տրամաբանական ազդեցությունն է ունեցել դպրոցի վրա:

Մինչ կատարված փոփոխություններին անդրադառնալը, ուզում ենք փոքր-ինչ ներկայացնել «Դպրոց» հաստատությունը:

Դպրոցը հասարակական, սոցիալական ինստիտուտ է, քաղաքացիական հասարակության սուբյեկտ, որը միավորում է համատեղ գործունեություն իրականացնող մարդկանց /սովորող, ուսուցիչ, ծնող/ և բազմաթիվ թելերով կապված է սոցիալական այն միջավայրի հետ, որտեղ գործում է և, բնականաբար, հարմարվում է նրա մեջ ընթացող զարգացումներին ու անմիջականորեն արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին:

Հանրակրթական դպրոցի գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի ձևավորումը, ինչպես նաև 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայող կարողունակ քաղաքացու ձևավորումն է, ով արագ, ճկուն և պատշաճ կերպով կարձագանքի ցանկացած իրավիճակում:

Ձեզնից բացի Ձեր երեխայի կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար դպրոցն էլ է պատասխանատու, ինչպես և պատասխանատու է հանրակրթության պետական չափորոշիչի դրույթների իրագործման համար: Հանրակրթության պետական չափորոշիչը հանրակրթության «ողնաշարային» փաստաթուղթն է, ուր գրված են Ձեր երեխայի ապագայի բանաձևերը՝ 8 կարողունակությունները և վերջիններիս ձևավորման ուղիները: Պետք է լինել կրթության մասնագետ, որ կարողանանք պատկերացում կազմել ասվածի վերաբերյալ, գիտակցել է պետք միայն, որ կրթության ոլորտի յուրաքանչյուր բարեփոխում իր դրական ազդեցությունն է ունենալու մեր երեխաների վրա, եթե մենք ծանոթ լինենք վերջիններիս և աջակցենք դրանց: Հիմա կմտածեք՝ ինչ բարեփոխումների կամ նորությունների մասին է խոսքը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը: Փոփոխվել է գնահատման համակարգը:

Տարրական կրթական աստիճանում գնահատումն իրականացվում է բնութագրիչներով (հանվել է միավորային գնահատումը): Ուշադրություն, ոչ թե սովորողները չեն գնահատվում, ինչպես սխալմամբ հաճախ է ասվում, այլ գնահատվում են յուրաքանչյուր առարկայի համար մշակված բնութագրիչներով, որն ավելի պատկերավոր է ներկայացնում Ձեր երեխայի կարողություններն ու առաջընթացը: Մի՛ շտապեք, Ձեր երեխաները դեռ կգնահատվեն միավորներով՝ սկսած 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից: Հիմա կասեք՝ իսկ ինչու 2-րդ կիսամյակից և ոչ՝ 1-ին: Մենք էլ Ձեզ կպատասխանենք՝ ինքնապատասխան չէ. Ձեր երեխայի հետ տարրական դասարաններում հիմնականում աշխատում են նույն ուսուցիչները՝ դասավանդելով մի քանի առարկա: Սակայն 5-րդ դասարանից սկսած (հիմնական դպրոցի սկիզբ) ավելանում են ուսուցանվող առարկաները, վերջիններիս հետ մեկտեղ նաև նոր ուսուցիչներ են սկսում դասավանդել: Ուստի 5-րդ դասարանի առաջին կիսամյակը ևս թողնված է բնութագրիչներով գնահատում իրականացնելուն, որպեսզի և՛ սովորողները ընտելանան նոր առարկաներին, և՛ ուսուցիչները ծանոթանան սովորողներին:

Ի դեպ, գնահատման հետ կապված ևս մեկ փոփոխություն. Ձեր երեխաների միավորային գնահատականները այլևս փոխված չեն լինելու (մինչ կատարված փոփոխությունները ուսուցիչը մեկ դասի ընթացքում հարցում էր կատարում մի քանի սովորողի շրջանակում և տվյալ օրվա համար գնահատում էր նրանց, հաջորդ հանդիպմանը մեկ այլ խումբ սովորողների և այդպես շարունակ), այլ լինելու են ուղղահայաց՝ մեկ շարքով ամփոփիչ գնահատում իրականացնելու միջոցով. ամփոփիչ գնահատման ժամանակ միավորով գնահատվում են բոլոր սովորողները:

Ձեր երեխան 7-րդ դասարանից սկսած կատարելու է նախագծային աշխատանքներ, որոնք կնպաստեն նրա ինքնաճանաչողության, մտածողության, երևակայության զարգացմանը, ինչպես նաև համագործակցային կարողությունների ձևավորմանը՝ տալով նրան մեծ ոգևորություն և ինքնագնահատման հնարավորություն: Նախագիծը թիմային աշխատանքի և թիմում համագործակցելու արդյունավետ միջոց է, որի ընթացքում ծնվում են նորանոր գաղափարներ: Սովորողը ուսումնական պաշար ձեռք բերելիս օգտվում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մեկնաբանում և ներկայացնում է իր աշխատանքը:

Հանրակրթության պետական նոր չափորոշչում շեշտադրվում են սովորողների.

- Ինքնուրույնությունը, ուստի այժմ դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվում Ձեր երեխայի ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ուսուցիչն իր բաժին աշխատանքն անում է դպրոցում, սակայն դրանից Դուք էլ անմասն չեք մնալու: Օգնեք ուսուցչին՝ տանը ևս նպաստելով Ձեր երեխայի ինքնուրույնությանը:

- Քննադատական մտածողությունը, որը մտավոր գործընթաց է և թույլ է տալիս ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգել, կիրառել, վերլուծել և գնահատել: Հիմա պատկերացնում եք, չէ՞, թե որքան կարևոր է տանը Ձեր երեխաների հետ որևէ գաղափարի շուրջ զրույց ձևավորելը, իրենց կարծիքը և մեկնաբանությունները լսելը: Խոսեք տարբեր իրերի, երևույթների և գաղափարների մասին, խթանեք դրանք տարբեր դիտանկյուններից վերլուծելու նրանց կարողությունները:
- Հաղորդակցման կարողությունը, որը ենթադրում է ինչպես խոսելու, այնպես էլ լսելու հմտություն: Լսելն ու խոսելը սերտորեն կապված են և զարգանում են միաժամանակ: Խոսելով սովորողներն արտահայտում են իրենց զգացմունքներն ու հույզերը, ինչպես նաև տեղեկատվություն են փոխանակում, իսկ լսելով ասվածը կապում են սեփական փորձի և գիտելիքի հետ: Խրախուսեք Ձեր երեխային խոսել հստակ, դիմացինին հասկանալի ձևով, խրախուսեք վերապատմել պատմություններ և վերլուծել, խոսելիս նայել խոսակցի աչքերին, ուշադիր լսել դիմացինին՝ հարգանք ցուցաբերելով նրա նկատմամբ: Հիշեք՝ Ձեր երեխան Ձեր արտացոլանքն է:

Պատկերացնում եք, եթե այս կարևորագույններին ավելացնենք այլք և դրանց ածանցյալները, թվարկումների շղթան անվերջանալի է թվալու:

Ուզում ենք՝ գիտակցենք դպրոցում ուսուցիչների կողմից կատարվող ահռելի, անգնահատելի և կենսական նշանակություն ունեցող բազմաբնույթ աշխատանքները, որոնք, խոստովանենք, միայն տանը անգամ խիստ հետևողականության արդյունքում չենք կարող անել: Ձեզ մնում է միայն աջակցել՝ կապ պահպանելով դպրոցի հետ, սերտորեն համագործակցելով ուսուցիչների հետ:





ՈՒՍՈՒՑԻՉ - ԾՆՈՂ

Ուսուցիչները և ծնողները երեխաների կյանքում ամենակարևոր մեծահասակներն են այն պահից, երբ սկսվում է նրանց դպրոցական կյանքը: Երեխայի հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ուսուցիչները և ծնողները որքան ուշադիր են դպրոցական կյանքի տարբեր խնդիրների նկատմամբ, որքանով են նրանք հետևողական իրենց գործողություններում: Սա շատ կարևոր որակ է, որովհետև երբ երեխան շարունակ հանդիպում է փոփոխական վերաբերմունքի, նա կարցնում է վստահությունը ուսուցչի և ծնողի հանդեպ: Իսկ վստահության կորուստը ամենամեծ ճեղքն է նրանց փոխհարաբերություններում:

ԵՐԵՒԱՆ ՊԻՏԻ ՎՍՏԱՀԻ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻՆ, ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ԻՍԿ ԴԱ ԿԱԽՎԱԾ Է ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐՔԱՆ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԵՆ ԻՐԵՆՑ ՔԱՅԼԵՐՈՒՄ:

Շատ հաճախ երեխայի վարքի և սովորելու մասին տարբեր պատկերացումներ են ունենում ծնողներն ու ուսուցիչները: Ծնողն ամեն կերպ փորձում է արդարացնել իր երեխայի վարքի այս կամ այն դրսևորումները՝ մեղադրելով ուսուցիչներին կամ դասընկերներին: Նաև հաճախ արդարացնում են իրենց երեխաներին՝ ներկայացնելով, որ տանը շատ են զբաղված և բոլոր առաջադրանքները կատարում են բարեխղճորեն, և դասարանում այդ ամենը չդրսևորելը պայմանավորում են դասարանական մթնոլորտով, ուսուցիչների վերաբերմունքով: Այո, ուսուցիչները և ծնողները կարող են ոչ միայն տարբեր վերաբերմունք ունենալ նույն երեխայի նկատմամբ, այլև տարբեր պատկերացումներ ունենալ իրավիճակի վերաբերյալ՝ կապված ինչ-որ խնդրի հետ: Սրա մեջ վատ բան չկա, բայց մենք միշտ պետք է հիշենք, որ մեծահասակների ընդհանուր որոշում կայացնելու անկարողությունը կամ չցանկանալը երբեք օգուտ չի բերի երեխային և կարող է ուսուցչին և ծնողին հակառակորդներ դարձնել: Միայն ուսուցչի և ծնողների միջև արդյունավետ հաղորդակցությունը կարող է շոշափելի օգուտներ բերել աշակերտին և ստիպել մեծահասակներին, որ բավարարված զգան իրենց: Նման արդյունավետ հաղորդակցություն հաստատելը երբեմն բավականին դժվար է:

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՊԻՏԻ ԼԻՆԵՆ, ՈՉ ԹԵ ՕՏԱՐՎԵՆ ՄԻՄՅԱՆՑԻՑ՝ ԱՄԵՆ ՄԵԿԸ ԻՐ ՃՇՄԱՐ-
ՏՈՒԹՅԱՆ ԹԵՉԸ ԱՌԱՋ ՏԱՆԵԼՈՎ, ԱՅԼ ԼՍԵՆ ՄԻՄՅԱՆՑ՝ ՀԱՆՈՒՆ
ԵՐԵԽԱՅԻ:**

**ԵՐԵԽԱՆ ՏԱՆՆ ՈՒ ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ
ՉՊԻՏԻ ՀԱՅՏՆՎԻ:**

Շատ ծնողներ իրենց մտքում ունեն դպրոցի մասին իդեալական պատկեր, որը ոչ միշտ է համապատասխանում իրականում տեսածին: Ուսուցիչները բողոքում են երեխաների ամենաթողությունից. ծնողները՝ երեխայի ներաշխարհը չհասկանալուց: Ուսուցիչները չեն ընդունում, որ ծնողների մեծ մասը, մանկավարժական կրթություն չունենալով, իրենց մանկավարժություն է սովորեցնում, իսկ ծնողներն էլ հաճախ տրտնջում են ուսուցիչների կանխակալ վերաբերմունքից: Այսպես երկուստեք մնում են իրենց պատկերացումների շրջանակում՝ առանց դեպի իրար ընթանալու փոքրիկ քայլերի:

**ԱՄԵՆ ՈՒՍԱՐՎԱ ՍԿՋԲԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՊԻՏԻ ԻՐԱՋԵԿՎԻ
ԴՊՐՈՑԻ ՈՐԴԵԳՐԱԾ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻՆ, ՈՐԸ ԿԲԱՑԱՌԻ ԸՆԹԱՑՔԻ
ՏՀԱՃ ԵՎ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ:**

Շատ կարևոր է, որ ուսուցիչը ծնողներին մանրամասն տեղեկացնի, թե ինչպես է ընթանում ուսումնական գործընթացը, ինչ արդյունքներ ունի երեխան, ինչ դժվարություններ է ունենում, ինչ է նա լավագույնս անում, ինչպես է շփվում հասակակիցների և մեծահասակների հետ և այլն: Տեղեկատվությունը հնարավոր է փոխանցել տարբեր ձևերով. օրինակ՝ սոցիալական ցանցում դասարանի խումբ ստեղծելը, էլ. նամակներ, SMS ծանուցումներ, իրազեկում ուղարկելը (օրագրերում, դասարանում, դասարանի կայքում, էլեկտրոնային մատյանում): Ծնողները ակտիվորեն պիտի ներգրավված լինեն դպրոցական միջոցառումներին (տարրական դպրոցում դա վառ արտահայտված լինում, այնուհետև՝ գնալով նվազում):

Այսպես, ծնողներին կարող է հանձնարարվել դպրոցական երեկույթի սցենար մշակել. առաջարկել մասնակցել դերերի բաշխմանը և փորձերին: Կարելի է խնդրել նրանց օգնել դեկորացիայի և զգեստների պատրաստման գործում: Կարող եք հրավիրել մեկ կամ մի քանի ծնողների դասարանական էքսկուրսիա կազմակերպել կամ օգնել կազմակերպելու հանդիպում հետաքրքիր մարդկանց հետ և այլն: Միևնույն ժամանակ, միջոցառման ընթացքում ծնողները պետք է հետևեն իրենց երեխային և ամբողջ դասարանին: Օրինակ, նրանք պետք է տեսնեն, թե ինչպես են իրենց երեխաները անհանգստանում իրենց անհաջողությունների և դասընկերների սխալների համար, ինչպես են նրանք արձագանքում հաղթանակին և այլն:

Համատեղ միջոցառումից հետո նրանք պետք է ծնողների հետ քննարկեն, թե ինչն է լավ անցել, ինչը՝ ոչ: Եվ, իհարկե, դպրոցն էլ պիտի շնորհակալություն հայտնի ամենաակտիվ ծնողներին իրենց մասնակցության համար:

ԴՊՐՈՑԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԻՏԻ ԳՈՐԾԻ ԱԿՏԻՎ ԿԱՊԻ ՇՂԹԱ, ՔԱՆԻ ՈՐ ԾՆՈՂՆԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ՈՒՆԵՆ ՆՈՒՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

Այսօր արդեն դպրոցներում առկա է հոգեբանական ծառայությունը, որը կարող է մեծ դեր խաղալ ուսուցիչների, ծնողների և երեխաների միջև արդյունավետ հաղորդակցության հաստատման գործում: Կարելի է հաճախակի կազմակերպել հոգեբանի հետ հանդիպումներ և քննարկել անպիսի խնդիրներ, որոնք հաճախ անլուծելի են համարվում կամ չեն բարձրաձայնվում: Կարելի է ընտրել ոչ միանշանակ պատասխան ունեցող հարցեր, և խաղերի միջոցով գտնել լուծումներ: Օրինակ, ուսուցիչներից ու ծնողներից կարելի է առանձին խմբեր ձևավորել և նույն հարցը ուղղել երկու կողմին էլ: Եվ հոգեբանը որպես ուղղորդող, կարող է օգնել՝ հասնելու արդյունավետ լուծումների:

Նման հարցերի օրինակներ՝

Ի՞նչ խորհուրդ կտաք երեխային, եթե

ա/ ընկերները շարունակ ծաղրում են երեխային, դասամիջոցներին հարվածում ու փախչում:

բ/ ուսուցիչը հարց է տվել, բայց ընկերները չեն հուշում (ուսուցիչը չէր նկատի, զբաղված էր գործընկերոջ հետ զրույցով), որ ստանա դրական գնահատական:

գ/ ընկերոջ հետ խոսելու պատճառով միայն մեկին է դասարանից դուրս հանում, ոչ թե երկուսին:

դ/ պայմանավորվել էին գաղտնի պահել չարաճճի պլանը՝ դասից 15 րոպե ուշանալու, բայց դասընկերները մատնում են, որ դա իրենց ընկերոջ մտահոլացումն էր, իրենք դեմ էին, բայց ենթարկվել են:

ե/ ուզում է ընկերոջ հրավերն ընդունել՝ ծնունդին մասնակցելու, բայց սոցիալական խնդիրների պատճառով ի վիճակի չէ պատշաճ նվեր գնելու:

զ/ երկու ընկեր սիրում են նույն աղջկան, և ընկերը ստիպում է հրաժարվել այդ աղջկանից և այլևս քայլեր չձեռնարկել:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ԽՆԴԻՐԸ ԱՌԱՆՁՆԱՅՆԵՆ ԱՆՁԻՑ: ՆՄԱՆ ՈՉ ՄԻԱՆԱՇԱՆԱԿ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏՔ Է ՆՎԱՋԵՑՆԵԼ ՀՈՒՋԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆԵԼ ՄԻԱՅՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ, ԱՅՆ ԷԼ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ՈՉ ԹԵ ՄԻԱՅՆ ՏՎՅԱԼ ԻՐԱԴԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ:



ԾՆՈՂԱԿԱՆ ՍԵՐ

Երեխայի հանդեպ սերը ծնողների կողմից քնքշության, ջերմության և հոգատարության դրսևորման մեջ է: Ծնողական սերը թերևս ամենաանկեղծն է, քանի որ դրա հիմքում ընկած է գիտակցված ու անսահման անձնագոհությունը, ծնողների նվիրումը:

Ծնողական բնագործը երբեմն չափազանց պաշտպանիչ է, նույնիսկ երբ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի վրա: Ժամանակակից հոգեբանները նշում են «գերսիրո» առավել բնորոշ դրսևորումները.

սիրել - թույլ տալ երեխային ամեն ինչ, տալ նրան լիակատար ազատություն.

սիրել - ամեն ինչ անել երեխայի համար, ֆինանսապես ապահովել նրան.

սիրել - զգոն կերպով վերահսկել նրա յուրաքանչյուր քայլը, նրա յուրաքանչյուր գործողություն;

սիրել - անընդհատ արտահայտել ձեր զգացմունքները երեխայի հանդեպ, գրկել, համբուրել նրան;

սիրել «ինչ-որ բանի համար»՝ հաջողության, ուրիշների գովասանքի, ինչ-որ արժանիքների համար:

Ծնողական սերը պետք է իրեն պաշտպանի երկու վտանգավոր ծայրահեղություններից՝ «կույր անձնագոհությունից» և «չափից ավելի հոգատարությունից»: Առաջին դեպքում բարոյական արժեքների համակարգը խառնվում է երեխայի մտքում՝ առաջացնելով էգոցենտրիզմ այլ մարդկանց նկատմամբ և սպառողական վերաբերմունք ծնողների նկատմամբ:

Անհատականության զարգացումը կախված է ծնողական սիրո քանակից, քան որևէ այլ բանից, քանի որ «ծնողական սերը երեխաներին տալիս է ապահովության զգացում, կյանքում աջակցություն, նրանց դարձնում ավելի ուժեղ և վստահ: Եթե երեխային մանկության տարիներին սիրեն, նա ինքը կկարողանա սիրել»:



Թեստ ծնողների համար

Այս թեստը կօգնի թե՛ հորը, թե՛ մորը գնահատելու այն հիմքը, որի վրա հիմնված է ձեր վերաբերմունքը երեխայի հանդեպ: Եթե համաձայն եք վերը նշված հայտարարության հետ, ապա ձեզ մեկ միավոր տվեք: Եթե համաձայն չեք, ոչ մի միավոր մի՛ տվեք: Բոլոր հարցումներին պատասխանելուց հետո հաշվարկեք ձեր ընդհանուր միավորը:

- Երբ երեխան մեծանա, նա անխուսափելիորեն կբախվի կյանքում դժվարությունների, ուստի ծնողների պարտականությունն է առայժմ պաշտպանել նրան դրանցից:
- Երբեմն մի փոքր տխուր է, երբ տեսնում ես երեխայիդ մեծանալը. չէ՞ որ նա այնքան քաղցր է իր մանկության տարիներին:
- Եթե երեխան սուտ է ասում, ապա նա, ամենայն հավանականությամբ, չի ստում, այլ պարզապես բարձրաձայն ֆանտազիա է անում:
- Ժամանակակից դպրոցական ծրագրերը չափազանց բարդ են:
- Մայրը պետք է ծառայի որպես մի տեսակ հուզական բուֆեր երեխայի և հոր միջև, քանի որ հայրերը հիմնականում բնութագրվում են չափազանց խստությամբ:
- Եթե երեխան ինչ-որ օգտակար բան է անում, բայց ոչ մի հաջողության չի հասնում, նրան պետք է գովել իր ջանքերի համար:
- Միամիտ ինքնաբուխ պահվածքը ավելի շատ մանկության ցուցիչ է, քան թերություն:
- Ձեր երեխան կարող էր ավելի հաջողակ լինել դպրոցում, եթե ուսուցիչներն ավելի աջակցեին:
- Յուրաքանչյուր երեխա ունի իր ուժեղ կողմերը, որոնք շատ ավելի կարևոր են, քան նրա թերությունները:
- Երբ հայրն ու մայրը համաձայն չեն երեխայի վարքի գնահատման հարցում, ավելի ճիշտ է լսել մոր կարծիքը, քանի որ կանայք բնական դաստիարակներ են:
- Մանկության տարիներին սպորտն անհրաժեշտ է ոչ այնքան բարձր նվաճումների, որքան ընդհանուր ֆիզիկական զարգացման համար:
- Ընտանեկան սեղանի լավագույն պատառները պետք է տրվեն երեխաներին:
- Երեխաների անհնազանդությունը հաճախ առաջանում է նրանից, որ ծնողները չափազանց շատ են պահանջում երեխայից:
- Եթե ձեր երեխան չի սիրում մթության մեջ քնել, դուք պետք է գիշերային լույս վառեք նրա մահճակալի մոտ:
- Երեխաների վատ պահվածքի շատ դրսևորումներ կարելի է բացատրել հասակակիցների վատ ազդեցությամբ:

Արդյունքներ

12-15 միավոր: Եթե հայրը հավաքել է այս միավորները. երեխայի հանդեպ ձեր վերաբերմունքի մեջ դուք հիմնականում կիսում եք մայրական դիրքը: Սա, մի կողմից, վատ չէ, քանի որ նպաստում է ձեր ծնողական ռազմավարության միասնությանը: Այնուամենայնիվ, դուք թերագնահատում եք ավանդական տղամարդու դերը դաստիարակության մեջ: Երեխայի հանդեպ ձեր պահանջներն ավելի հաճախ թելադրված են ձեր տրամադրությամբ, քան նրա պահվածքով: Մտածեք, թե արդյոք դուք լիովին խթանում եք ձեր երեխայի մտավոր, հուզական և ֆիզիկական զարգացումը: Հավանաբար, ձեր կողմից մի փոքր ավելի բարեհաճ պահանջկոտությունը միայն օգուտ կտա նրան: Եթե ձեր մայրը հավաքել է այս միավորները, դուք դավանում եք ծնողական դաստիարակության տիպիկ կանացի մոտեցում՝ լի սիրով և հոգատարությամբ: Պարզապես մի՛ մոռացեք, որ այս մոտեցման սրումը կարող է հետագայում հանգեցնել երեխայի անկախության բացակայությանը: Բայց իր կյանքում նա ոչ միայն պետք է հաճոյանա ձեզ, այլև ինքը լուծի բազմաթիվ խնդիրներ:

8 միավորից պակաս: Հայր. Դուք հավատարիմ եք կրթության մեջ արական ավանդական արժեքներին, ցանկանում եք ձեր երեխային տեսնել որպես կայացած և հաջողակ մարդ: Ձեր պահանջներն ու գնահատականները հզոր խթան են նրա ձեռքբերումների համար: Պարզապես փորձեք չչափազանցել այս պահանջները և չափազանց խիստ դատավոր մի՛ եղեք:

Մայր. Դուք նախընտրում եք դաստիարակության ավելի տղամարդկային ոճ, ձեր սերը երեխայի հանդեպ զուգորդվում է նրա նկատմամբ բավականին բարձր պահանջներով. Ձեր նպատակները միանգամայն արդարացված են, բայց մենք կարող ենք դրանց ավելի հաջող հասնել մեղմության և քաջալերանքի միջոցով:

Եթե հայրն ու մայրը հավաքել են **9-12 միավոր**, ապա այս դիրքը կարելի է անվանել միջանկյալ՝ ծայրահեղություններից զուրկ: Այս մոտեցումը լավ է, քանի որ այն պաշտպանում է ցանկացած ավելորդությունից: Այնուամենայնիվ, մտածեք դրա մասին.

Հուզական անջատում կա՞ այստեղ: Ուշադիր նայեք ձեր երեխային, նրա խնդիրներին, նա ձեզանից ավելի մեծ մասնակցություն ակնկալու՞մ է:

Ըստ նշված աղբյուրի՝ <http://xn--5-8sb3aeo2d.xn--p1ai/vneklassnaya-rabota/psixolog/proyavlenie-i-krajnosti-roditelskoj-lyubvi/>



ԾՆՈՂԱԿԱՆ ՍԻՐՈՆ ՏԵՍԱԿՆԵՐ

*Ա. Ս. Սվիվակովսկայա
մանկական հոգեթերապևտ*

Առանձնացվում է ծնողական սիրո ուժ տեսակ.



Արդյունավետ սեր (հավանում, հարգանք, մտերմություն): Ընտանեկան դաստիարակության բանաձևը սա է՝ ես ուզում եմ, որ իմ երեխան երջանիկ լինի, և ես կօգնեմ նրան այս հարցում: Արդյունավետ սերը ներառում է ակտիվ ուշադրություն երեխայի շահերի հանդեպ, այդպիսի սերը երեխային ընդունում է որպես անկախ մարդ և ցուցաբերում է ջերմ հուզական վերաբերմունք:



Կտրված սեր (համակրանք, հարգանք, բայց շփման մեջ կա մեծ հեռավորություն): Կրթությունն իրականացվում է ըստ բանաձևի՝ տեսեք, թե ինչ հրաշալի երեխա ունեմ, ափսոս, որ այդքան քիչ ժամանակ ունեմ նրա հետ շփվելու համար: Ծնողները բարձր են գնահատում երեխային, հատկապես նրա հաջողությունները կամ կարողությունները, բայց դա զուգորդվում է նրա հոգեկան աշխարհի անտեղյակության, նրա խնդիրներին օգնելու անկարողության հետ:



Արդյունավետ խղճահարություն (համակրանք, մտերմություն, բայց հարգանքի բացակայություն): Բանաձևը հետևյալն է՝ թեև իմ երեխան բավականաչափ խելացի և զարգացած է, ես դեռ սիրում եմ նրան: Այս ոճը բնութագրվում է երեխայի մտավոր կամ ֆիզիկական զարգացման իրական (և հաճախ երևակայական) շեղումների ճանաչմամբ, ինչի արդյունքում ծնողները սկսում են չափազանց պաշտպանված լինել, չհավատալ նրա հնարավորություններին, չվստահել երեխային:



Հարգալից հեռացում (համակրանք, անհարգալից վերաբերմունք, հաղորդակցության մեջ կա մեծ հեռավորություն): Դաստիարակություն սկզբունքով՝ արգելում են մեղադրել իր երեխային, որ նա բավականաչափ խելացի ու զարգացած չէ: Ծնողները գիտակցաբար վանում են իրենցից երեխայի թերությունների պատճառները, չեն փորձում հիմնավորել երեխայի անձնական հատկանիշները նրա ժառանգականությամբ և ծննդյան պայմաններով: Նրանք կարծես ճանաչում են երեխայի դժբախտության իրավունքը և միևնույն ժամանակ առանձնապես չեն ձգտում կանխել դա, չեն խառնվում նրա գործերին և վատ են տեղեկացված նրա փորձառությունների և ներաշխարհի մասին:



Արհամարհանք (հակասիրություն, անհարգալից վերաբերմունք և փոքր հեռավորություն շփման մեջ): Այս վերաբերմունքը համապատասխանում է բանաձևին. ես տառապում եմ, քանի որ իմ երեխան շատ թերզարգացած է, խելամիտ չէ և տհաճ է ուրիշների համար: Ծնողը սովորաբար ոչ մի դրական բան չի նկատում երեխայի մեջ, անտեսում է ցանկացած ձեռքբերում, բայց միևնույն ժամանակ ցավազին է ապրում իր կապը նման պարտվողի հետ: Ծնողների համար բնորոշ է խոստովանել իրենց անգործությունը և պատասխանատվությունը, փորձում են մասնագետների միջոցով օգնել երեխային:



Հալածանք (հակասիրություն, հարգանք, մտերմություն): Բանաձև. իմ երեխան սրիկա է, և ես դա նրան կապացուցեմ: Ծնողները փորձում են կոտրել երեխային խստությամբ և խիստ վերահսկողությամբ, նրանք նախաձեռնում են հասարակության ներգրավումը կրթության մեջ. Սակայն ներքին համոզման հետ մեկտեղ, որ իրենց երեխան վերածվելու է կատարյալ սրիկայի, ընդունում են իրենց երեխայի ուժն ու կամքը:



Մերժում (հակասիրություն, անհարգալից վերաբերմունք, մեծ հեռավորություն շփման մեջ): Նման վերաբերմունքը բավականին հազվադեպ է, դրա բանաձևը հետևյալն է. Ծնողը սառն է և անհասանելի, նույնիսկ երբ երեխան օգնության և աջակցության կարիք ունի:



Հրաժարում (հակասիրություն, հարգանք, մեծ հեռավորություն շփման մեջ): Ապրում են այս բանաձևով՝ ես չեմ ուզում գործ ունենալ նման սրիկայի հետ: Դաստիարակության մեջ գերակշռում է երեխայի խնդիրներից կտրվածությունը, իբրև թե, հեռվից դիտում են նրան՝ գիտակցելով նրա ուժը և որոշակի անձնական հատկությունների արժեքը. Ծնողների պահվածքում կարելի է տեսնել ոչ ամբողջովին գիտակցված կոչ՝ պաշտպանե՛ք մեզ այս հրեշից:



Խորհուրդ ծնողներին.

Մի՛ ձգտեք վարպետորեն կատարել մայրական դերը:

Թո՛ւյլ տվեք ինքներիդ ձեզ անկատար լինել. ի վերջո, ոչ մի մարդ ունակ չէ անընդհատ սիրել կամ ատել: Երեխայի հետ շփվելիս չկան և չեն կարող արգելվել հույզեր, բայց մի պայմանով՝ նա չպետք է կասկածի քո սիրո անվերապահությանը: Երեխան պետք է զգա, որ ձեր դժգոհությունը, գրգռվածությունը կամ զայրույթը պայմանավորված են իր արարքով, այլ ոչ թե ինքն իրենով:

Ձեր երեխան ՉԻ ԿԱՐՈՂ ՎԱՏԸ ԼԻՆԵԼ, ՔԱՆԻ ՈՐ ՆԱ ԵՐԵԽԱԸ Է ԵՎ ՈՐՈՎՅԵՏԵՎ ՆԱ ՁԵՐՆ Է:





ԵՐԵՒԱՅԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ

Որոշել, թե ինչպիսի վարքն է երեխայի համար թույլատրելի, իսկ ինչպիսին՝ ոչ, բավականին բարդ խնդիր է նույնիսկ ամենաբարենպաստ հանգամանքներում: Իրավիճակն առավել բարդանում է, երբ երեխայի զարգացման տարբեր ոլորտներում առկա խնդիրները առավել բարդ ու անհասկանալի են դարձնում երեխայի վարքը և

թույլ չեն տալիս մեզ հասկանալ այդ վարքի առաջացման իրական պատճառները: Նման դեպքերում առավել բարդ է գտնել ծայրահեղ խստության և բարձր թողության միջև գտնվող ոսկե միջինը:

Ինչպե՞ս կարգավորել երեխայի վարքը

Երեխայի անցանկալի վարքը միշտ ունի իր հիմնավոր պատճառները: Այդ իսկ պատճառով երեխայի վարքը կարգավորելուն միտված աշխատանքներն սկսելուց առաջ ճիշտ կլիներ պարզել, թե ինչ է նշանակում երեխայի համար նման վարքը: Ցանկացած երեխայի համար վատ պահելաձևը առաջին հերթին հաղորդակցման ձև է: Որոշ դեպքերում այն կարող է երեխայի համար դառնալ իր վրա ուշադրություն գրավելու և իր կարիքների մասին հայտնելու գրեթե միակ և, հնարավոր է, առավել արդյունավետ միջոցը (օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար): Այդ իսկ պատճառով եթե երեխան իրեն վատ է պահում, փորձեք հասկանալ, թե նա ինչ է ուզում «ասել» դրանով: Երեխայի պահելաձևը վերլուծելիս կարող եք առաջնորդվել հետևյալ սխեմայով.

Ի՞նչն է հանգեցրել նման վարքի

Ի՞նչ է անում երեխան, ինչպիսի՞ վարք է դրսևորում

Ի՞նչ է ստանում երեխան իր վարքի արդյունքում

Օրինակ՝ որոշ ժամանակ երեխան խաղաղ խաղում է, իսկ հետո հանկարծ սկսում է քաշել փոքր քույրիկի մազերը, մայրը դիտողություն է անում և շեղում նրա ուշադրությունը նոր խաղալիքով: Փորձենք վերլուծել օրինակը ներկայացված սխեմայով:

Պատճառը - երեխան երկար ժամանակ խաղում էր միևնույն խաղը: Նա ծանձրացավ և փոփոխություն ուզեց, իսկ մայրն այդ պահին փոքր քույրիկով էր զբաղված:

Վարքը - երեխան քաշեց քրոջ մազերից, մայրը բարկացավ և դիտողություն արեց:

Հետևանքը - երեխան ուշադրություն գրավեց և նոր զբաղմունք ունեցավ, այսինքն՝ ստացավ այն, ինչ իրեն պետք էր:

«Վատ» պահելաձևը հաճախ կարող է նշանակել. «Չգիտեմ՝ ինչպես վարվել այս իրավիճակում», «Ինձ պետք է քո ուշադրությունը», «Դա ինձ համար չափազանց դժվար է», «Այլևս ի վիճակի չեմ դիմանալ այս աղմուկին», «Ուրիշ բանով եմ ուզում զբաղվել», «Ես հոգնել եմ» և այլն:

Երեխաները հաճախ լիրաժեքորեն չեն գիտակցում իրենց խնդրահարույց վարքի առաջացման պատճառները: Այն հարցին, թե ինչու է այդպես վարվել, նա կարող է պատասխանել, որ չգիտի կամ անհիմն պատճառաբանություն ու բացատրություն տալ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դեպքում սեփական վարքի տարբեր դրսևորումները մեկնաբանելու կամ բացատրելու դժվարությունները պայմանավորված են նրանց մտավոր և խոսքային զարգացման մի շարք առանձնահատկություններով:

Փորձագետների մեծամասնության կարծիքով երեխաների բացասական վարքը կարելի է բացատրել չորս հիմնարար պատճառներով. ուշադրություն գրավելու ձգտում, իշխանության դրսևորում, վրեժ և անհամարժեքության զգացում: Կարծում ենք, որ տեղին կլիներ այս շարքում ավելացնել նաև զգայական և հուզական ծանրաբեռնվածությունը, որը հատկապես կարևոր է դառնում զարգացման մի շարք խնդիրների առկայության դեպքում:

➔ Ուշադրություն գրավելը. կրտսեր դպրոցական տարիքում (և ոչ միայն) երեխայի՝ ուշադրություն գրավելուն ուղղված վարքաձևերի հիմնական պատճառը ինքնագնահատականի և մեծահասակներից (մանկավարժներ, ծնողներ, ընտանիքի այլ անդամներ) ուշադրություն ստանալու հարաբերակցությունն է: Ուշադրության արժանանալու ցանկությունը կարևոր պահանջմունք և շարժառիթ է շատ երեխաների համար: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան չի կարողանում ուշադրության արժանանալ իր դրական արարքների կամ ձեռքբերումների շնորհիվ, նա սկսում է փորձել ուշադրություն գրավել այլ եղանակներով, օրինակ՝ անցանկալի վարքով, որը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Նման վարքը կանխելու համար մեծահասակները հաճախ պատժում են երեխային կամ այս կամ այն կերպ արձագանքում նրա վարքին՝ արդյունքում տալով նրան հենց այն, ինչի կարիք ուներ, հետևաբար նաև ամրապնդելով երեխայի անցանկալի վարքը: Արդյունքում երեխան սովորում է կրկնել նման վարքը:

→ Իշխանություն դրսևորելը. ամենավաղ տարիքից երեխաները գիտակցում են, որ իրենք իրենց գործողությունների միջոցով կարող են ազդել շրջապատող աշխարհի վրա: Մեխահասակ-երեխա փոխհարաբերությունների արդյունքում հաճախ որոշ երեխաներ թյուր կարծիք են ձևավորում այն մասին, որ իրենք կարևոր են մյուսների համար միայն այն ժամանակ, երբ կարողանում են նրանց շահարկելու միջոցով հասնել իրենց ուզածին: Ձևավորված ոչ ճիշտ փոխհարաբերությունների հետևանքով երեխաներն իրենց արժևորում են մեծահասակներին մարտահրավեր նետելու և նախանշված սահմանները խախտելու միջոցով: Մեծահասակներն ի պատասխան գործածում են իրենց իշխանությունը, երեխան էլ ավելի է համառում կամ ենթարկվում է՝ ակնհայտորեն ցուցադրելով իր դժկամությունը: Սա կարող է վերաճել մեծահասակի և երեխայի միջև իշխանության պայքարի:

→ Վրեժ լուծելը. սիրո, հարգանքի կամ արդար վերաբերմունքի պակաս զգալու դեպքում երեխաները կարող են վիրավորված զգալ: Նրանց կարող է թվալ, որ իրենց անարդար կերպով պատժում են, և նրանք հակված կլինեն վրեժխնդրության: Ֆիզիկապես և/կամ հուզականորեն իր հասակակիցներին կամ շրջապատող մեծահասակներին մարտահրավեր նետող երեխան, թերևս, համարում է, որ իրեն անարդարացի են վերաբերվել կամ վիրավորել են: Իրական կամ երևակայական վնաս կրած երեխան կարող է ձգտել թշնամական խոսքերի և/կամ գործողությունների, ինքնամեկուսացման և համագործակցությունից հրաժարվելու միջոցով վրեժխնդիր լինել: Երեխան շարունակում է վրեժ լուծել՝ ուժգնացնելով բացասական վարքը՝ ամենայն հավանականությամբ փորձելով վնաս տալ, խոսքով վիրավորել կամ այլ «զենք» գտնել: Սա հաճախ վերաճում է մեծահասակի և երեխայի միջև վրեժխնդրության ցիկլի:

→ Անհամարժեքության զգացման արտահայտում. երեխան տարբեր պատճառներով կարող է համարել, որ ինքը չի արդարացնում մեծահասակների ակնկալիքները, կարծել, թե ինքը չի կարող կատարել այս կամ այն գործողությունը և հիասթափվել: Սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ երեխայի հավատի կորուստը կարող է հանգեցնել անհամարժեքության զգացման: Անհամարժեքության զգացումը կարող է արտահայտվել այս կամ այն գործողությունից հրաժարվելու միջոցով, երբ երեխան զգում է, որ այն իր ուժերից վեր է, և ցանկանում է խուսափել ծախսողումից: Նման դեպքերում երեխան հաճախ չեմ կարող արտահայտությունը փոխարինում է չեմ ուզում արտահայտությամբ: Եթե երեխան գտնում է, որ չի կարող կատարել աշխատանքը, նա կարող է ճնշվածություն զգալ, ինչն էլ, բնականաբար, իր հերթին դառնում է երեխայի գործողությունների արդյունավետությունը նվազեցնող գործոն: Նման դեպքերում երեխային ծաղրելը կամ այս կամ այն գործողությունը, աշխատանքը կատարելու պարտադրանքը կարող են ստիպել երեխային էլ ավելի թերարժեք ու անհամարժեք զգալ:


➔ Զգայական ծանրաբեռնվածություն. զարգացման խնդիրը հնարավորություն չի տալիս երեխային խոսքային կամ ոչ խոսքային միջոցներով հուշել իր անհարմարավետության մասին կամ նվազեցնել, բացառել այն ազդակների ազդեցությունը, որոնք ծանրաբեռնում կամ անհանգստացնում են իրեն: Ընդ որում, զգայական (ինչպես և հուզական) ծանրաբեռնվածությունը տարբեր երեխաների վրա տարբեր կերպ է անդրադառնում. ինչ-որ մեկը դառնում է գրգռված, մեկ ուրիշն առհասարակ սկսում է լռել, երրորդն ասես անջատում է իրեն կամ դառնում գերգրգռված: Արդյունքում ծանրաբեռնվածությունը ուղղակիորեն անդրադառնում է երեխայի վարքի վրա, հաճախ զգայական տարբեր ազդակները կարող են զգայական ծանրաբեռնվածության պատճառ դառնալ: Սակայն շատ հաճախ ոչ միայն շրջապատողները, այլ նաև հենց իրենք՝ երեխաները, չեն գիտակցում, որ վարքում առաջացող խնդիրները պայմանավորված են հենց այդ ծանրաբեռնվածությամբ:

➔ **Ինչպե՞ս որոշել խնդրահարույց վարքի իրական նպատակները**

Բացահայտել երեխաների բացասական վարքի հիմնական նպատակները:

- Երեխաների բացասական վարքի պատճառներն ու նպատակները հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել սեփական զգացմունքները:
- Եթե Դուք անհանգստություն և միևնույն ժամանակ զայրույթ եք զգում, ապա ամենայն հավանականությամբ երեխան իր այդ վարքով փորձում է Ձեր ուշադրությունը գրավել:
- Եթե զայրույթ եք զգում, ապա երեխան հավանաբար փորձում է իր իշխանությունը ցույց տալ:
- Եթե Ձեզ վիրավորված եք զգում, ապա երեխան փորձում է վրեժ լուծել:
- Եթե հիասթափված և սպառված եք զգում, ապա երեխան, հնարավոր է, փորձում է խուսափելու միջոցով արտահայտել իր անհամարժեքության զգացումը:
- Եթե շփոթված եք, ապա հնարավոր է՝ երեխայի վարքի պատճառը զգայական ծանրաբեռնվածությունն է:






Ինչպիսի՞ն կարող է լինել մեծահասակների արձագանքը

Երեխաների բացասական վարքի դրսևորումների դեպքում մենք՝ մեծահասակներս, հաճախ կարող ենք տարբեր միջոցներով փորձել ազդել նրանց վրա և փոխել նրանց վարքը: Այդ միջոցները կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Գաղտնիք չէ, որ երեխաների բացասական վարքի վերոհիշյալ հիմնական նպատակներից յուրաքանչյուրը, ցավոք սրտի, կարող է երեխային ֆիզիկապես կամ հոգեպես պատժելու պատճառ դառնալ:

Նման իրավիճակները հնարավոր կլինի արդյունավետ կերպով հարթել, եթե կարողանանք հանգստություն պահպանել, փորձենք հասկանալ և հարգել երեխային, դրականորեն լսենք, խրախուսենք և, իհարկե, պահպանենք ինքնատիրապետումը:



Ի՞նչ պետք է անեն մեծահասակները երեխային պատժելու փոխարեն:

Եթե երեխան փորձում է ուշադրություն գրավել, անհրաժեշտ է, որ Դուք՝

- հնարավորության դեպքում չնկատեք այդ վարքը, սակայն երեխային ուշադրություն հատկացնեք, երբ նա դրական վարք է դրսևորում:
- Օգտագործեք տեսողական կոնտակտը:
- Երեխային ուղղորդեք դեպի ավելի դրական վարքաձևերը:
- Երեխային պոտենցիալ ընտրություններ տաք:
- Պարբերաբար ժամանակ անցկացնեք երեխայի հետ:

Եթե երեխան իշխանություն է դրսևորում, անհրաժեշտ է, որ Դուք՝

- Փորձեք պահպանել հանգստությունը և չներգրավվել իշխանության պայքարի մեջ՝ հնարավորություն տալով երեխային հանդարտվել: Հիշեք, որ վեճի համար պահանջվում է առնվազն երկու մարդ:
- Միջոցներ ձեռնարկեք երեխային համագործակցության մղելու համար: Փորձեք հասկանալ երեխաների զգացմունքները և ցույց տվեք, որ հասկանում եք: Կիսեք տվյալ իրավիճակի հետ կապված իրենց զգացմունքները: Այս հանգամանքը հատկապես կարևոր է բոլոր այն դեպքերում, երբ երեխան խոսքային հաղորդակցում չի կիրառում և փորձում է հակադրվող վարքով արտահայտել սեփական հույզերը, զգացմունքներն ու իշխանությունը:
- Օգնեք երեխային հասկանալ, որ նա կարող է իր իշխանությունը և ուժը օգտագործել առավել կառուցողական ձևով, առաջարկեք նրան հնարավոր եղանակներ:



Եթե երեխան վրեժ է լուծում, անհրաժեշտ է, որ Դուք՝

- համբերատար լինեք, դուրս գաք հակահարվածների ցիկլից և խուսափեք պատժից,
- ընկերական վերաբերմունք դրսևորեք և սպասեք, մինչև երեխան հանդարտվի:
- խրախուսեք համագործակցությունը: Երեխայի հետ վստահության հարաբերություններ ստեղծեք:
- համագործակցեք երեխայի հետ խնդիրները լուծելու ուղղությամբ:
- խրախուսեք երեխային, ցույց տվեք նրան, որ նա սիրված և հարգված է:



Եթե երեխան անհամարժեքության զգացում է արտահայտում, անհրաժեշտ է, որ Դուք՝

- խուսափեք անհամաձայնություն արտահայտելուց կամ քննադատությունից (նույնիսկ այն դեպքերում, երբ երեխան ունի մտավոր կամ խոսքային զարգացման խնդիրներ, միևնույն է, նա ընկալում է խոսքային և ոչ խոսքային միջոցներով իրեն ուղղված բացասական ինֆորմացիան),
- հաշվի առեք երեխայի զարգացման մակարդակը և հնարավորությունները,
- երեխային ներկայացվող առաջադրանքը բաժանեք մի քանի փոքր մասերի և օգնեք երեխային սկսել ամենահեշտերից նախնական հաջողության համար,
- խրախուսեք երեխային, կենտրոնացեք երեխայի ուժեղ կողմերի վրա,
- խուսափեք խղճահարություն կամ չափազանց շատ կարեկցանք արտահայտելուց:



Եթե երեխան զգայական ծանրաբեռնվածություն է զգում, անհրաժեշտ է, որ Դուք՝

- ուշադրություն դարձրեք զգայական այն ազդակներին կամ դրանց համակցությանը, որոնց առկայության դեպքում երեխան խնդրահարույց վարք է դրսևորում: Զգայական ծանրաբեռնվածությունը վարքում կարող է արտահայտվել տարբեր կերպ՝ խուճապային գրոհներին բնորոշ գրգռվածությունից մինչև հուզական անհասկանալի պոռթկումները կամ ագրեսիայի ու ինքնաագրեսիայի դրսևորումները,
- նվազեցրեք կամ սահմանափակեք ծանրաբեռնող ազդակները: Եթե դրանք ծայնային կամ տեսողական ազդակներ են (բարձր ձայներ, երաժշտություն, այլ երեխայի լաց կամ աղմուկ, վառ լույսեր, վառ պատկերներ և այլն), որոնք չեն կարող սահմանափակել, ապա երեխային հնարավորություն տվեք հանգստանալու առավել խաղաղ վայրում, այնտեղ, ուր քիչ, ցանկալի է, բնական լուսավորություն կա: Փորձեք երեխայի համար ապահովել վայր, որտեղ չկա «տեսողական աղբ» և «լսողական աղբ»,
- նվազեցրեք երեխային ուղղված խոսքը, նրան ավելի շատ ժամանակ տվեք խոսքային ինֆորմացիան ընկալելու համար: Համբերատար եղեք: Օգտագործեք հաղորդակցման այլընտրանքային միջոցներ,

հիշեք, որ չնայած երեխան նման դեպքերում կարող է նաև ագրեսիա դրսևորել, այնուհանդերձ նա նպատակ չունի Ձեզ վնասելու. դա ընդամենը ստեղծված իրավիճակից դուրս գալու նրա փորձերն են, որոնք հիմնականում հրահրվում են իրեն դիպչելու, նրա հետ անընդհատ խոսելու կամ հանգստացնելու անհաջող փորձերով:

- լսեք երեխային. նման դեպքերում երեխան խոսքային կամ ոչ խոսքային միջոցներով հուշում է, թե ինչը կարող է իրեն հանգստացնել (մեկը կարող է ճոճվել, մեկ ուրիշը ձեռքերում կարող սկսել պտտել որևէ առարկա, երրորդը՝ երգել և այլն): Եթե ինքնահանգստացման նրան փորձերում վտանգավոր ոչինչ չկա, ապա որոշ ժամանակ մի՛ միջամտեք և հնարավորություն տվեք երեխային հանդարտվել:

Շատ հաճախ, մենք կարող ենք այնպիսի տպավորություն ունենալ, որ երեխաները բացասական վարք են դրսևորում՝ անկախ նրանից, թե ինչ ենք ձեռնարկել այն կանխելու համար: Նման դեպքում կարող են արդյունավետ լինել հետևյալ մոտեցումները.

- Փորձեք հանգստություն պահպանել: Մի պահ կենտրոնացեք, եթե դրա կարիքն ունեք: Զայրույթի պոռթկումներն ավելի կբարդացնեն իրավիճակը թե՛ Ձեր, թե՛ երեխայի համար: Եթե այնուամենայնիվ պետք է խոսեք, ապա ձայնը մի՛ բարձրացրեք և գործեք հանգիստ և հավասարակշռված:

- Փորձեք հասկանալ երեխայի ապրումներն ու զգացողությունները: Օրինակ՝ «Ես հասկանում եմ՝ շատ տխրեցնող է, երբ քո կառուցած բուրգը քանդվում է, այնպես չէ՞»: Դա կօգնի երեխային մի պահ կանգ առնել, կանխել վարքի բացասական դրսևորումը և կառավարել հույզերը:

- Սպասեք մինչև դադարի հուզական պոռթկումը: Եղեք նրա կողքին, որպեսզի երեխան տեսնի, որ Դուք իր կողքին եք: Սակայն մի՛ փորձեք քննարկել իր հետ կամ շեղել: Դա ուշացած է, եթե պոռթկումն արդեն սկսել է:

- Միջամտեք, երբ զգում եք, որ դրա կարիքը կա: Եթե երեխան չի ցանկանում ինչ-որ բան անել, ապա արեք այն, ինչ նախատեսել էիք: Օրինակ՝ եթե երեխան չի ցանկանում իջնել ճոճանակից, ապա նախ կանգնեցրեք այն, այնուհետև գրկեք երեխային, իջեցրեք և ներս տարեք:

- Ձեր մոտեցումների մեջ հետևողական և հանգիստ եղեք: Եթե վարքի բացասական դրսևորումներից մեկի ընթացքում երեխային տաք այն, ինչ ուզում է, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ, ապա դրանով ավելի կսրեք իրավիճակը:





ԴԵՌԱՀԱՍԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռահասը աչքի է ընկնում ֆիզիկական և հոգեբանական ընդգծված առանձնահատկություններով: Սկսվում է սեռահասունացումը և ֆիզիկական արագընթաց զարգացումը: Այն մեծ հնարավորությունների բացահայտման և բազմաթիվ բարդությունների դրսևորման տարիք է: Այդ տարիքի երեխան կարծես նոր-նոր է ճանաչում իրեն, բացահայտում իր բնավորության գծերը, տեսնում իր ֆիզիկական փոփոխությունները, համեմատում իր հնարավորությունները հասակակիցների հետ: Այս տարիքից ընդգծվում են սեռի գիտակցումը, գիտակցված և չգիտակցված հրապուրանքների շրջանը, հայելու առաջ ավելի շատ կանգնելու հակումը, սեփական արտաքինով հիանալու կամ նրանից դժգոհելու ապրումները: Այս ամենը հոգեբանական լուրջ խնդիրների առջև է կանգնեցնում երեխաներին և նրանց ծնողներին, մանավանդ, երբ շատ երեխաների թվում է, թե իրենց թերությունները արատ են, և իրենք դրանցից չեն ձերբազատվելու ամբողջ կյանքի ընթացքում:

Նրանք սկսում են իրենց համեմատել համադասարանցիների հետ, և բավական է՝ լսեն որևէ բացասական գնահատական, անմիջապես փակվում են իրենց մեջ, դառնում ինքնամփոփ կամ ավելի ագրեսիվ՝ այդ կերպ իրենց ըմբոստությունն արտահայտելով միջավայրի հանդեպ, այն միջավայրի, որը բացասաբար վերաբերվեց իրենց:



Դեռահասին դասավանդող ցանկացած ուսուցիչ և դեռահասի ծնողը պիտի ծանոթ լինեն տարիքային այդ խմբի առանձնահատկություններին, որովհետև աշակերտ լինելուց առաջ նա մարդ է՝ իր փխրուն կամ ըմբոստ տեսակով, և ուսումնական գործընթացը նախ և առաջ շփում է ձևավորվող դեռահասի հետ, որը կա՛մ դժբախտ է զգում իրեն, կա՛մ երջանիկ, և ուսուցիչը չպիտի խորացնի նրա՝ առանց այն էլ դժվար կյանքը: Այս տարիքի դեռահասն ուզում է, որ իրեն վերաբերվեն հավասարի պես, հարգեն իր արժանապատվությունը, իր մեջ տեսնեն միայն լավը:

Ուսուցիչն ու ծնողը ամեն ինչ պիտի անեն, որ բարձրանա դեռահասի ինքնագնահատականը: Նա հակառակ սեռի ներկայությամբ պիտի խոսի դեռահասի առավելությունների և ոչ թե թերությունների մասին: Դեռահասը մեծ պահանջ ունի հասկացված լինելու, և ուրիշ ո՞վ, եթե ոչ ուսուցիչն ու ծնողը պիտի հասկանան իր երեխային, օգնեն նրան՝ հաղթահարելու իր բարդույթներն ու տարիքային դժվարությունները: Եվ դա պիտի անեն հմտորեն, զգուշորեն, աննկատ:

Ուսուցչի համար դժվար է դիտողություն չանել դասը չսովորած աշակերտին, բայց, հիշելով նրա փխրուն տարիքը, պարտավոր է նրբանկատ գտնվել և շատ նրբորեն, առանց վիրավորելու հասնել արդյունքի: Խոցելի այդ տարիքը չի ընդունում դիտողություն, իրեն անսխալական է համարում, քննադատաբար է նայում ամենքին և ամեն ինչին, ուստի ճշմարիտ մանկավարժը նաև հոգեբան է: Նա անպայման հասկանում է, որ ամեն ինչին քննադատաբար վերաբերվող աշակերտը պարզապես ընդգծում է իրեն, ցանկանում է ուշադրություն գրավել, ինքնուրույնություն դրսևորել, ուստի նրբանկատորեն պիտի հասնի տարիքային այդ թերությունների վերացմանը:

Բայց միաժամանակ սա այն տարիքն է, երբ երեխան պատրաստ է մտածական գործունեության համար, նա կարող է ընդգրկել մտածողական ավելի մեծ տեսադաշտ, ինքնուրույն դատողություններ անել, վերլուծել և համադրել ստացած գիտելիքները: Ուստի շատ կարևոր է այս տարիքը, քանի որ մտածական ճիշտ գործունեություն չծավալելու դեպքում կգրկենք երեխային մտածելով աշխատելու բացառիկ հնարավորությունից: Դպրոցականին մտածել սովորեցնելու բազմաթիվ ճանապարհներ կան. դրանցից են՝

- երեխաների կողմից հարցեր առաջադրելը, որոնցից ամենաարժեքավորը թերևս «ինչո՞ւ» է,
- դեռահասների կողմից լսածի հետ չհամաձայնելը, լսածին քննադատաբար վերաբերվելը, որովհետև այս դեպքում պիտի բերվեն փաստարկներ՝ հակառակում նրանց համոզելու համար,
- դեռահասներին հուշող հարցադրումներով օգնելը,
- «կողմ» և «դեմ» խմբերի ձևավորումը՝ համապատասխան փաստարկների հավաքագրման պահանջով:

Այս քայլերը չեն հակասում տարիքի առանձնահատկություններին, որովհետև.

- այս տարիքում դեռահասը սիրում է ամեն ինչին քննադատաբար վերաբերվել, և դասաժամին նրան տրվում է այդ հնարավորությունը,
- գիտական աշխարհը նոր-նոր է բացահայտվում նրա համար, և հարցերով բացահայտելու հնարավորությունը հասկացման լավագույն ճանապարհներից է,
- այս տարիքը մեծ պահանջ ունի շփման, և խմբերով աշխատանքը, որտեղ ոչ թե նա պարզապես պնդում է իրենը, այլ լսում է դիմացինի կարծիքը, հակափաստարկներ է հավաքում, համոզում և փաստերով հիմնավորում է իր իմացածն ու հասկացածը, մարդկային ավելի ազատ շփումների տիրապետելու հրաշալի դպրոց է. համոզի՛ր, որ դու ճիշտ ես,
- ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու հնարավորությունը բարձրացնում է դեռահասի ինքնագնահատականը, որի պահանջը նա այնքա՛ն ունի,
- մտածելով աշխատելը կօգնի փակուղիներից ելքեր որոնելուն, որն այնքան անհրաժեշտ է տարիքային այս խմբին. չէ՞ որ նրանք չափազանց զգայուն են և խոցելի, և հաճախ ջղագրգիռ են դառնում լուծումներ չգտնելու պատճառով:

Եվ այս ամենի արդյունքում ինքնուրույն և համարձակ քաղաքացիներ են ձևավորվում, որոնք չեն վախենում որոշումներ կայացնելուց և սեփական կարծիքը բարձրաձայն հայտնելուց:

Այսպիսով՝ դասաժամերի կազմակերպումը և ծնողների հետ փոխհարաբերությունները խարսխված պիտի լինեն տարիքային հոգեբանության վրա: Այնպես անել, որ՝

- դեռահասն իրեն մեծ ու կարևոր զգա,
- անկեղծ հետաքրքրություն դրսևորվի իր անձի հանդեպ,
- ինքն իրեն ճշմարիտ գնահատի,
- սոցիալական հմտություններ ձեռք բերի,
- չվախենա սխալվելուց,
- հարգի ուրիշների կարծիքը:





ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ՝ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դեռահասի հետ փոխհարաբերությունները ծնողներին հաճախ խիստ բարդ ու կոնֆլիկտային կարող են լինել, երբեմն դեռահասը մեզ համար անհասկանալի ու առեղծվածային կարող է լինել, հաճախ մեզ կարող է թվալ, որ նա ոչ միայն չունի մեր կարիքը, այլև խուսափում է մեզ հետ ցանկացած տեսակի հաղորդակցումից: Մինչդեռ, իրականում դեռահասության տարիքում երեխան առավել, քան երբևէ մեր՝ մեծահասակներիս ջերմության, ընդունման և աջակցության կարիքն ունի: Ամփոփելով դեռահասներին նվիրված մեր թեման, եկեք փորձենք առանձնացնել այն ուղիները, որոնք առավել վստահելի կդարձնեն դեռահասի հետ մեր հարաբերություններն ու կօգնեն դեռահասին հնարավորինս առանց բարդությունների հաղթահարել տարիքին բնորոշ դժվարությունները:



Մի չարաշահեք սահմանափակումները, արգելքներն ու պատժամիջոցները:



Փորձեք գտնել դեռահասի՝ Ձեզ համար անհասկանալի կամ անընդունելի վարքի պատճառը կամ պատճառները:



Փորձեք կիսել դեռահասի հետաքրքրությունները, նախասիրությունները, աշխատեք գտնել ընդհանուր հետաքրքրություններ:



Եթե տարաձայնություններ ունեք, խոսեք դեռահասի հետ, ներկայացրեք նրան Ձեր կարծիքն ու տեսակետը, բայց պայմաններ մի դրեք, միանգամից իդեալական վարք մի պահանջեք, ընկալունակ եղեք նույնիսկ աննշան դրական փոփոխությունների նկատմամբ:



Ուշադիր եղեք սոցիալապես անընդունելի վարքի նույնիսկ ամենաչնչին դրսևորումների նկատմամբ, քանզի ասոցիալ վարքը հաճախ դրվագային դրսևորում է ունենում:



Գնահատեք և կարևորեք դեռահասի դրական որակները և ուժեղ կողմերը, օգնեք դեռահասին ճիշտ օգտագործել դրանք և վայելել հաջողություն ունենալու բերկրանքը, քանզի այդ հանգամանքն ինքնակատարելագործման հզոր գործոն է դեռահասի համար:



Վստահեք դեռահասին և փորձեք վստահելի դառնալ նրա համար:



Գնահատեք դեռահասի անկեղծությունն ու անկեղծ հետաքրքրվածություն դրսևորեք նրա խնդիրների նկատմամբ:



Հնարավորություն տվեք դեռահասին զգալու, որ ինքն ընդունված ու հասկացված է Ձեր կողմից: Հաղորդակցվեք նրա հետ ինչպես հավասարը հավասարի հետ: Հիշեք, որ հրամայական տոնն ու հրահանգներն ի օգուտ Ձեզ չեն գործի:



Բացառեք դեռահասին նվաստացնող հեգնական տոնն ու ծաղրը, մի՛ մոռացեք այս տարիքին բնորոշ զգայունության ու խոցելիության մասին: Աշխատեք հարգանքով վերաբերվել դեռահասին:



Դեռահասի հետ հաղորդակցվելիս խուսափեք նյարդայնություն և ագրեսիա դրսևորելուց, աշխատեք լինել զուսպ և հավասարակշռված, հիշելով այն մասին, որ Ձեր կոպտությունը նմանատիպ արձագանք կծնի նաև դեռահասի մոտ:



Հիշեք, որ դեռահասի վարքը վերահսկելու լավագույն ճանապարհը նրա հետ վստահելի ու անկեղծ փոխհարաբերություններ ունենալն է:



Մի մոռացեք, որ երեկվա Ձեր երեխան, այսօր արդեն երեխա չէ, նա մեծացել է, և հայտնվել մի տարիքում, երբ մի կողմից Ձեր՝ ծնողների մեծ աջակցության կարիքն ունի, որովհետև բազմաթիվ խնդիրների հետ է բախվում, մյուս կողմից՝ նա ծգտում է հնարավորինս անկախ լինել ու պաշտպանել իր ներաշխարհն արտաքին կոպիտ և աններբանկատ ներխուժումներից՝ լիարժեքորեն ունենալով դրա իրավունքը:



Հիշեք, որ դեռահասը Ձեր սիրո, հարգանքի ու աջակցության կարիքն ունի, նույնիսկ այն ժամանակ, երբ Ձեզ թվում է, թե նրա համար դա այնքան էլ կարևոր չէ:



Արտահայտեք Ձեր սերը:

Իսկ հիմա, փորձեք դիտարկել Ձեր դեռահասի հետ ունեցած փոխհարաբերություններն ու գնահատեք, թե տրված 25 խորհուրդներից քանի՞սն են ընկած նրա հետ հարաբերությունների հիմքում:

- ➔ միասին ավելի շա՛տ ժամանակ անցկացրեք,
- ➔ ցանկացած կարևոր գործ միասին՝ արեք՝ ընդգծելով միասնական ընտանիքի կարևորությունը,
- ➔ խոսե՛ք երեխայի հետ նրա ընկերների մասին,
- ➔ լսե՛ք երեխայի անհանգստությունների և մտահոգությունների մասին,
- ➔ ընդունե՛ք նրանց արարքները, զգուշորեն կանխեք մտահոգիչ արարքները՝ առանց ցավ պատճառելու, հստակ հիմնավորելով,
- ➔ պատմե՛ք նրանց այն բարդությունների մասին, որ կարող են հանդիպել ապագայում,
- ➔ հավատացրե՛ք նրանց, որ կլինեք նրանց կողքին և կօգնեք,
- ➔ ազնի՛վ եղեք նրանց հետ,
- ➔ նրանց սիրո՛վ վերաբերվեք,
- ➔ փորձե՛ք հասկանալ զգացմունքները, որ ընկած են երեխայի վարքագծի հիմքում,
- ➔ ամրացրե՛ք նրանց ինքնագնահատականը,
- ➔ օգնե՛ք նրանց բացահայտելու և սիրելու իրենց անձը,
- ➔ խրախուսե՛ք երեխային՝ հավատալու իր ունակություններին,
- ➔ օգնե՛ք նրանց տեսնելու իրենց ուժեղ կողմերն ու բնավորության առանձնահատուկ գծերը,
- ➔ ընդգրկվա՛ծ եղեք երեխայի դպրոցական կյանքին,
- ➔ հետաքրքրվե՛ք նրանով, թե ինչ է երեխան կարդում, խաղում և դա քննարկե՛ք նրա հետ,
- ➔ ճանաչե՛ք նրանց ընկերներին, թու՛յլ տվեք ժամանակ անցկացնել ձեր տանը, հանդիպել ընտանիքի անդամներին,

- ➔ մո'տ եղեք ձեր երեխայի հետ, բայց պահե՛ք սահմանը,
- ➔ իմացե՛ք թե որտեղ է երեխան և ում հետ, բայց հարգե՛ք նրա անհատականությունն ու աճող կարիքը անկախության և անձնական կյանքի նկատմամբ,
- ➔ ցույց տվեք երեխային, որ վստահում և հավատում եք նրան,
- ➔ մի՛ խուսափեք այն հարցերի պատասխաններից, որոնք կապված են երեխայի ֆիզիոլոգիական դաստիարակության հետ,
- ➔ օգնե՛ք նրան զարգացնելու ճշտի ու սխալի վերաբերյալ իր սեփական պարկերացումը,
- ➔ օգնե՛ք զարգացնելու պատասխանատվության և ունակ լինելու զգացումը,
- ➔ օգնե՛ք զարգացնելու կարեկցանք և հարգանք այլոց նկատմամբ,
- ➔ օգնե՛ք նրան մտածել իր ապագայի մասին:

Այն երեխաները, որոնք վաղ հասակում հասկացել են, որ կարող են վստահել ծնողներից, այժմ ավելի հավանական է, որ կլսեն նրանց խորհուրդը:



1. Դրական դաստիարակչական մոտեցումներ. ուղեցույց մանկավարժների համար, . Երևան, 2018, 155 էջ:
2. Են Թվային քաղաքացիության կրթությունը ծնողների և խնամակալների համար <https://www.coe.int/en/web/education/dce-for-parents-and-carers> .
3. Խաչատրյան Հ., Մանկան հոգեբանության դասախոսություններ., «Տիգրան Մեծ»., Երևան, 2022, 316 էջ:
4. Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարորյա ուսուցման կազմակերպման կարգ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=182245> :
5. Մանուկյան Ա., Սվաջյան Ա. Ինչպես կարգավորել երեխայի վարքը, չանտեսելով նրա առանցնահատկությունները: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ.- Եր.Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2020.-43 էջ :
6. Մարության Ս. Ա., Դավաթյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008, 287 էջ:
7. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (Կրտսեր առաջին խումբ) . -Ե . : - 2025. - 47 էջ :
8. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (Կրտսեր երկրորդ խումբ) . -Ե: - 2025. - 63 էջ :
9. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (Միջին խումբ) . -Ե . : 2025 . -75 էջ:
10. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (Ավագ խումբ) . -Ե . : 2025 . -86 էջ:
11. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 2020:
12. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ. ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 N 744-Ն որոշում:
13. Փոփոխություններն իրականացնում են ընտանիքները (ծնողավարման ուղեցույց), խմբ. կազմ, Երևան, .պաշտպ., ցանց, Երևան, 2019թ., 90 էջ:
14. Гиппенрейтер Ю.Б. Общаться с ребенком. Как : АСТ, Астрель, Харвест; Москва; 2008 ISBN 978-5-17-052715-1, 214 стр. :
15. Масару Ибука После трех уже поздно; [Пер. с англ. Н. Перовой]. — 8-е изд., испр., с предисловием Макото Ибуки. — М.: Альпина нон-фикшн, 2011. — 224 с. :
16. Ньюмен С. Игры и занятия с особым ребенком. Руководство для родителей. Издательство: Теревинф , 2018 г., ISBN: 5-901599-22-5, 236 стр. :
17. Child Development Institute, <https://childdevelopmentinfo.com/> .

-
18. Democratic Parenting and Child Well-Being, Journal of Family Psychology (American Psychological Association, 2017).
 19. DIGI-NAUTS EDUCATORS' GUIDE, Janice Richardson, Veronica Samara, Council of Europe, December 2023, 20 page .
 20. DIGITAL CITIZENSHIP EDUCATION FROM A PARENT'S PERSPECTIVE, Janice Richardson, Veronica Samara, Council of Europe, November 2022, 148 page .
 21. Digital learning and transformation of education <https://www.unesco.org/en/digital-education> .
 22. E-book parent Involvement/ For informing to collaboration Petr de Vries, August 2013, 50 page .
 23. Geyh S, Peter C, Müller R, Bickenbach JE, Kostanjsek N, Ustün BT, Stucki G, Cieza A. The Personal Factors of the International Classification of Functioning, Disability and Health in the literature — a systematic review and content analysis // Disabil Rehabil. — 2011. — 33 (13—14). — P. 1089—1102. — doi: 10.3109/09638288.2010.523104. — PMID: 20925452.
 24. PARENTING IN THE DIGITAL AGE: Positive parenting strategies for different scenarios, Council of Europe, August 2020 Printed at the Council of Europe, 33 page .
 25. PARENTING WITHOUT BORDERS, Christine Gross-Loh (Avery, 2013) – 304 page .
 26. PEACEFUL PARENT, HAPPY KIDS, Dr. Laura Markham (Perigee Books, 2012) – 320 page .
 27. RAISING HUMAN BEINGS, Ross W. Greene (Scribner, 2016) – 304 page .
 28. Supporting the transition from kindergarten to school <https://school-education.ec.europa.eu/en/learn/courses/supporting-transition-kindergarten-school>
 29. THE DANISH WAY OF PARENTING, Jessica Joelle Alexander, Iben Dissing Sandahl (TarcherPerigee, 2016) – 208 page .
 30. UNCONDITIONAL PARENTING, Alfie Kohn (Atria Books, 2005) – 272 page .
 31. United Nations Convention on the Rights of the Child, <https://www.unicef.org/child-rights-convention> .
 32. Working with parents: A guide for Education Professional. By carmel Digman and Sue Soan-2008, 56 page .
 33. Xu Bei. Today, let's focus on the "family parenting environment" [N]. Jiefang Daily, 2024-03-22 (010).